№ 9 (120) XI ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՀՈՐՍ ԿԱԽԱՂԱՆ

ՊԵՏՐՈՍ ՍԷՐԷՄՃԵԱՆ (Պետո, Բուլգարացի)

(Սպայի համազգեստով) (Հայդուկի զգեստով)

Petros SÉREMDJIAN, pendu le 9 décembre 1901 à Adrianople.

Ադրիանուպոլսում, դեկտեմբերի 9-ին, հրապարակաւ կախաղան հանեցին մեր երկու թանկագին ընկերները՝ ՊԵՏՐՈՍ ՍԷՐԷՄՃԵԱՆ և ՕՆՆԻԿ ԹՈՐՈՍԵԱՆ։ Նրանց հետ միաժամանակ կախաղան բարձրացան իրենց զինակից երկու բուլկար ընկերները՝ ՍԱՒԻԱՏՕՍԼԱՎ ՄԷՐՋԱՆՕՖ և ՀԱՃԻ ԽՐԻՍՏՕ ԻԼԻԷՎ։

Կախաղանով սկսեց Սայիդ փաշան..., Պէտք էր միանգամ ընդմիշտ ահաւեկել անհանգիստ „կոմիտաջիներին", որոնք Մակեդոնիայի սահմաններում շարունակ դաւեր էին նիւթում օսմանեան իշխանութեան դէմ։ Վագրը իր անզուսպ, արիւնածարաւ բնազդումներով արթնացաւ այդ զառամեալ տաճկի մէջ, որը քանիցս ըմբոստացել էր տիրող կամքի դէմ...

Եւ կախաղանները ցցուեցին Ադրիանուպոլսի հորս կէ-

տերում... Վաղուց չտեսնուած փաստ։ Սարսափն ընդհանրացնելու համար կախաղանը գործեց հրապարակաւ։ Մի քանի հազար հոգի ականատես եղան, թէ ինչպէս մահուան սիւների վրայ ճօճեցին չորս երիտասարդ դիակներ... Վագրը կշտացաւ։ Գերագոյն մի հաճոյք զգաց նա, լսելով իր զոհերի վերջին հոնգիւնները, և արիւնոտուած կախաղանների շուրջը սկսեցին դիւային խրախճանքներ...

Իսկ նոյն միջոցին հայ ու բուլգար հայրենիքներում աղեկտուր հառաչանքներ լսեցին, սգաւոր մայրերի, անմխիթար բարեկամների ցաւագին հեծկլտոցները մինչև երկինք հասան։

Բայց ողբ ու հառաչանք չէր միայն լսւում,.. Նոյն այն միջոցին, երբ մեծ վիզիրը գոհունակութեամբ շփում էր իր ձեռքերը և զեկուցանում էր արիւնոտ փաստը Եըլդըզի ճիւաղին,—նոյն այդ վայրկեանին Մարիցայի ափերում ողբի հետ միասին՝ լսւում էին ցասման ահեղ որոտումներ. վրէժ էին աղաղակում հայ ու բուլգար սրտերը և ամուր կռում հայ-մակեդոնական համերաշխութիւնը։

Երկու հայ ու երկու բուլգար՝ չորսն էլ եղբայրացած ընդհանուր խարազանի դէմ, հպարտ ու անվեհեր գնացին դէպի կախաղան և բարձրագոչ վկայութիւնը տուին այդ համերաշխութեան։

Չորսն էլ՝ երիտասարդ, կենսուրախ, լի խանդ ու աւիւնով... Նայեցէ՛ք Պետրոսին, Խանասօրի մեր սիրելի Բուլգարացուն։ Դիտեցէ՛ք Նրան հայդուկի և բուլգարական սպայի համազգեստում։ Ո՞րպիսի կօնտրաստ...

Միմիայն, կարծէք, կեանքի ու վայելչութեան համար ստեղծուած՝ այդ ազնիւ դէմքը եռում, փոթորկում էր շարունակ գաղափարի համար և վայրկեանը հասնելուն պէս՝ միշտ օրինակելի անձնուիրութեամբ նետւում էր կուի դաշտ... Թերևս կախաղանի անակնկալ դատավճիռը լսելով, նա կսկիծ զգաց, որ իրեն չվիճակուեց մեռնել Հայրենեաց հողի վրայ, մի մեծ ու ահեղ ճակատամարտում։ Բայց նա մեռաւ իրեն արժանի մահով։ Նա գնաց իր ընկեր-հայրենակցի հետ միանալու այն պաշտելի նահատակներին, որոնք զարդն են հայկական Պանթէօնի, որոնց անունները ոսկէ տառերով պիտի արձանագրէ հայ յեղափոխութեան գալոց պատմութիւնը։

Մակեդոնիոյ նախկին Բարձր. Կոմիտէէն ստացանք հետեւեալ հեռագիրը Էտիրնէի մէջ կախաղան հանուած ազատութեան չորս զոհերուն առթիւ։

—

Խմբագրութիւն „Դրօշակի“ Ժընէվ

Էտիրնէի մէջ կախուած մեր ժողովուրդներու ազատութեան համար պատերազմողներու յիշատակը յարգելով, մեր բոլոր ընկերներու կողմէն կ՚ուղղենք մեր բարեմաղթութիւնները ձեզ եւ քաջարի հայ ժողովրդին։ Կեցցէ՛ն Հայաստանի յեղափոխականները, Կեցցէ՛ Հայաստանի եւ Մակեդոնիոյ ազատութիւնը։

ԲՕՎԱՆՁԻ, ՏԱՎԻՏՕՖ

—

„Դրօշակի“ խմբագրութիւնը հեռագրով պատասխանեց.

Պուլկար ընկերներու համակրութիւնը հայ ժողովրդի տառապանքներուն մէջ, միշտ մեծ միխիթարանք պիտի ըլլայ։ Էտիրնէի մէջ թափուած արիւնը թող նոր կապ մ՚ըլլայ մեր միաբան կուին համար։ Կեցցէ՛ ազատ Մակեդոնիան, յարգանք զոհերուն։

ԽՄԲ. „ԴՐՕՇԱԿԻ“

ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԸ

Զարհուրելի, մահաբուն ձմեռ է Տարօնում։ Ձիւնը թափւում է հսկայական զանգուածներով և ծածկում բռնութեան վերջին զոհերի թարմ դամբարանները։ Կենդանի մնացածների շշմած ու շնչասպառ մասսան քարշ է տալիս մի կերպ իր կիսաքաղց գոյութիւնը՝ ստրկօրէն համակերպելով դահճին, կամ թէ օրթոդոքսութեան գիրկը նետւելով։ Ոճիրը, կարծէք, նորից թաղելու, քօղարկելու վրայ է և նորից Եըլդըզում պատրաստ է հնչեցնելու դժոխային, յաղթական քրքիջը։ Բայց ահա մի „փոքրիկ միջնադէպ“ գալիս է վրդովելու Եըլդըզի խաղաղութիւնը։ Նոյն այդ վայրկեանին հեռագիրը գուժում է Մուշ-Սասունի շրջանից թէ „հայ աւազակները“ նորից երևան եկան ստւար խմբերով և կատարում են իրենց շահատակութիւնները... Զարմանք։ Տարւայ այդ եղանակին կառավարութիւնը սովորաբար ապահով է զգում իրեն յեղափոխական վտանգից։ Զմրան այդ սառնամանիքներին ովքե՞ր են այդ խիզախները, որ լոյս են ընկել ոտից ցգլուխ զինւած, կռւական տրամադրութեամբ...

„Հայ աւազակներն“ են, արդարև։ Անդրանիկն է, Սերոբի կտակակատարը, որ իր եռուն, ահեղ տեմպերամենտի թափով նետւում է աջ ու ձախ՝ զարնելու և զարնւելու բուռն տենչանքով։ Մի խումբ կտրիճներ իր հետն առած՝ նա յանկարծ սլացաւ Ս. Առաքելոց վանքի վրայ և ամրացաւ նրա պարիսպների մէջ։ Վանքն անմիջապէս պաշարւեց։ Քաջարի հայդուկները — այդպէս էր ծանուցւած եւրօպական թերթերին — կրակ տեղացին թշնամու վրայ և երկու զինւոր գետին փռելով, խորտակեցին շղթան ու անյայտացան։ Բայց շատ չ՚անցած՝ նորից վերադարձան ու նորից գրաւեցին վանքը։ Այս անգամ արդէն դէպքի տպաւորութիւնը աճեց, տարածւեց։ Տեղական իշխանութիւնը հեռագրեց Պոլիս Եըլդըզը դիմեց պատրիարքի միջնորդութեան. թերևս չմոռացաւ նաև „յատուկ հրահանգներ“ ղրկել դէպի Մուշ։ Եւ զինւորների մի աւելի ստւար բանակ շրջապատեց կրկին Առաքելոց վանքը։ Ցորդորեցին ֆէդայիներին՝ անձնատուր լինել — մերժում։ Խոստացան սուլթանի բերնով „ազատ արձակել“ նրանց (՞) տաճկական հողից — ապարդիւն։ Միջնադէպը դարձաւ պատուհաս թշնամին պատրաստւում էր, գուցէ, աւելի „արմատական“ միջոցների դիմել, բայց ֆէդայիները կանխեցին նրան։ Հեռագիրը ծանուցանում է, որ Անդրանիկն իր խմբով երկրորդ անգամ կտրեց զօրքերի շղթան և ապաւինեց լեռնավայրերը...

Որքան ուշագրաւ ու սքանչելի է այդ հերոսական թռիչքը, այնքան և իրատական է նա։ Մի խումբ հայդուկներ — և որպիսի փոթորիկ... Այնքան եռանդ, այն-

քան տենդային ջանքեր կառավարութեան կողմից՝ ձեռք ձգելու այդ համեղ պատառը, այդ ըմբոստ ու վտանգաւոր ուժը՝ յանգեցին Ֆիասկոյի։ Ո՞րպիսի ապտակ Համիդի համար։ Նա անիծում է այժմ և ատամներն է կրճտացնում, տեսնելով, որ չի կարող վրէժխնդիր լինել խաղաղ ազգաբնակութիւնից. . . Վայրկեանը անյարմար է. Եւրոպայում հարցապնդումներ են անում և հիւպատոսները չեն հեռանում Մուշից։

Համիդիականների վոհմակն այժմ Առաքելոց վանքի մօտ՝ ապշած, խելակորոյս՝ ողբում է իր անկօրութիւնը մի բուռն հայ կտրիճների դիմաց, որոնք կայծակի արագութեամբ զարկեցին, անցան։

Սուլթանական ծառաները հրահանգ ունէին, անշուշտ, ողջ բռնել Անդրանիկին, կտրել նրա գլուխը, ինչպէս կտրել էին Սերոբինը, ի ցոյց դնել հայկական գիւղերում ու քաղաքներում և ահաբեկել ազգաբնակութիւնը։ Պատրա՞նք։ Չը համոզուե՞ց Համիդը, որ յեղափոխական հիդրան անյաղթելի է, որ նրա ամէն մի կտրուած գլխի տեղ նորն է բռնում։ Չը համոզուե՞ց Եւրոպան, որ մրցակցութիւնը երկու հակամարտ ուժերի միջև անհաշտ է, անվերջանալի։ Չը համոզուե՞ց մեր հասարակութեան թերահաւատ մասը — մեր բոլոր խորիմաստ քաղաքագէտները, մտքով ու զգացմունքով գառամեալները, որոնք շարունակում են խոհեմութեան դասեր տալ մեզ, օրօրել ժողովրդին անուշ երազներով, հրապուրել նրան „խաղաղ", „կուլտուրական" մրցման հեռանկարով — չը համոզուեցի՞ն արդեօք, որ Անդրանիկները նոյնքան անհրաժեշտ, ճակատագրական երևոյթ են հայկական դժոխքում, որքան փոթորիկը խեղդուկ մթնոլորտում։ Չե՞ն տեսնում արդեօք, որպիսի ճնշող առաւելութիւններ ունի զինուած դիմադրութիւնը անարդ, ոչխարային հնազանդութեան դիմաց։

Ուշք դարձրէք, որպիսի գոհունակութեամբ մարտական թերթերը Եւրոպայում արձանագրում են խոշոր տառերով Մուշի վերջին դէպքերը „Հայկական դիմադրութիւն" խորագրի տակ։ Այնքա՞ն վարժուել են նրանք ջարդի ու կրաւորական համակերպութեան փաստեր միայն լսել այդ դժոխային վայրերից. . . Ո՞վ է մեղաւորը։ Մենք ինքներս։ Բաւական չէ, որ ոճրագործ ձեռնպահութեամբ անդամալուծում ենք „հայկական դիմադրութիւնը", — մենք դեռ դիւանագիտական հովերով տարուած՝ կարծէք քաշւում ենք եւրոպացիների առաջ բարձրաձայն ծանուցանելու, թէ այդ „դիմադրութիւնը" ունի արդէն իր տասնամեայ արիւնոտ պատմութիւնը, թէ այնտեղ, Սասնոյ ու Զէյթունի ապառաժների վրայ, Վասպուրականի խուլ հովիտներում, անայցութեան մէջ խաղացուել են ամբողջ էպոպէաներ՝ նոյնքան արժանի քաղաքակրթուած մարդկութեան հիացմանը, որքան մի Միսսոլունգի կամ մի բոյէրական արշաւանք. . .

„Աղերսանքներով Եւրոպային դիմելուց յետոյ հայերն այժմ ուրիշ տօնով են ուզում խօսել նրա հետ։ Այժմ նրանք շատ աւելի շանս ունին ուշադրութիւն գրաւելու" — գրում է Aurore-ը, տպագրելով „Դրօշակի" նախորդ առաջնորդողի եզրակացութիւնները։

„Մենք համոզուած ենք, որ ոչ կառավարութիւնները (գերմանական), ոչ էլ Ռայխստագի մեծամասնութիւնը արձագանք չպիտի տան ձեր գանգատներին։ Այդ շրջաններում մինչև սրտի խորքը պաղ են դէպի Հայաստանի անցքերը։ Չեն ուզում խառնակութիւններ ունենալ Արևելքի մէջ". — այս տողերն է գրում մեզ Աւգուստ Բէբէլ, գերմանական Ռայխստագի ամենահեղինակաւոր անդամներից մինը։ Տարակոյս չկայ, որ եթէ Բէբէլ կամենար բացայայտ լինել, նա պիտի տար մեզ միևնոյն խորհուրդը, ինչ որ Գոհիէներն ու Զիպրիանները։

Լսեցէք այժմ մի երրորդ ձայն, որ երկրից է գալիս. „Ալ ձանձրացանք գրելէ. օրըստօրէ աւելի թունաւոր կերպով կը ճնշէ մեզ այն հարցը, թէ ալ ինչո՞ւ գրենք, ո՞ւմ համար գրենք, ի՞նչ յուսով գրենք։ Կողմերիս ժողովրդեան կորստեան հարիւրին իննսուն պատասխանատուութիւնը կ'ընկնի ամենէն առաջ մեր հայրենաբնակ և օտարաբնակ հայ եղբայրներու վրայ, որոնք ժամանակին չկատարեցին իրենց պարտականութիւնը"։ Այդ էլ Տարօնի մեր հեղինակաւոր թղթակցի ձայնն է, որ սիրտ է կտրատում։

Ներքին մի ներդաշնակութիւն կայ այդ երեք ձայների մէջ։ Երեքն էլ խորունկ սկեպտիցիզմի ու հիասթափութեան արտայայտութիւն են — հիասթափութեան, որ օրըստօրէ աւելի է շեշտւում դիւանագիտութեան և „խաղաղ գործունէութեան" նկատմամբ։ Երեքն էլ գիտակցում են „հայկական դիմադրութեան" անողոք անհրաժեշտութիւնը. երեքն էլ ողջմտութեան, բանականութեան ձայներ են, որ վաղուց արդէն հընչեցնում է հայ մարտական կազմակերպութիւնը. . . Ա՜խ, եթէ գէթ փոքր ապդէին նրանք մեր որոճող մեծամասնութեան անզգայ սրտերի ու խոպան ուղեղների վրայ — որքա՞ն երջանիկ պիտի լինէին Անդրանիկները իրենց օրհասական մաքառումի մէջ. . .

Ահա Տարօնի անդնդախոր ձորերով, բուք ու բուրանի միջից անցնում են ֆէդայիները, կատարելով իրենց տաժանելի չուն դէպի անառիկ լեռնավայրերը, գուցէ դէպի Խութ կամ դէպի Նէբրովթ, ուր նրանց պաշտելի առաջնորդը՝ լեգենդական Սերոբ փաշան գտաւ իր յաւիտենական հանգիստը։ Այնտեղ նրանք ազատ են, ազատ՝ անգղի պէս, որ բարձր լերան կատարին թառած՝ սպասում է պատեհ վայրկեանին՝ գահավիժելու դէպի իր որսը։ Ազատ են այնտեղ, եթէ դաւաճանութեան չարաշուք ոգին չգայ խանգարելու ֆէդայիների անդորրութիւնը։ Ազա՜տ, այո՛. . . Բայց եթէ մենք մնանք կատարուած դէպքի սոսկ ապուշ մտահայեցութեան մէջ, եթէ Անդրանիկի այդ խիզախ քայլը լոկ վայրկենական հետաքրքրութիւն միայն զարթեցնէ մեր մէջ, առանց մեզ տաքացնելու ու դէպի գործ մղելու, — հայ անգղները „ազատ" են նաև ընդմիշտ պառկելու այնտեղ իրենց նեիրական հրացանների հետ,

առանց մի գնդակ ստանալու և արձակելու... Պիտի գործե՞նք արդեօք այդ անանուն ոճիրը...

Հսկայ Սերոբի արժանաւոր յաջորդը, — որի անունը քիչ առաջ շրջան էր անում քաղաքակիրթ աշխարհում — այժմ նա Սասնոյ ձիւնապատ բարձունքներից սրտաճմլիկ, աղեկտուր ձայնով օգնութի՛ւն է աղերսում իր հայրենակիցներից։ Արդեօք այդ կոչն է՞լ կը մնայ անարձագանք...

ԱԼԻՇԱՆ

„Մանկտիկ, զիս հայոց հողն ու ջուրն մուցել,
Ես այն հողն ու ջուր սրտով եմ սիրել
Հայրենեաց հարուստ է հողն, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ, քաղցր հայրենեացն փուշ“։

Ղ. ԱԼԻՇԱՆ

Հայաստանի բարի ոգին, Ալիշանը, ևս մեռաւ, այնքան մահերէ ետքը, որոնք 19-րդ դարուն ազգային յոյսերուն ծլիլը ու ծաղկիլը տեսած և միանգամայն այդ յոյսերու ստեղծող հանճարները եղած էին։

Ազգովին անսահման ցաւի սարսուռը զգացինք լսելով հայրենեաց Նահապետին մահուան գուժը, այն պահուն՝ երբ Հայաստանը իր արիւնի պատանքին մէջէն չի կրնար երկիւղած և բուռն յարգանքը մատուցանել իր էն փառաւոր զաւակներէն մէկուն, որ արժանի է հայրենիքի երախտագիտութեան։

Ալիշան ամբողջ ազգինն է, Հայաստանի անցեալին ու ապագային, որուն նուիրուած էր իր բոլոր էութիւնով։ Ոչ մէկը կրցած է անոր պէս հզօր և ոլիմպեան կերպով մարմնացնել մեր ազգին տրոփող ու ազատասէր ոգին։ Ոչ ոք հոգևոր մթնոլորտի մը մէջ այնքան աշխարհական եղաւ և աւելի բանապաշտ, և ոչ ոք պատերազմի շեփորը այնքան լայնօրէն հնչեցուց, որքան Նահապետն հայոց։

Ալիշան յեղափոխութեան կը պատկանի, ինք ազգային շարժման մեծ մուսան եղաւ։ Բոլոր սորուկ ազգերը իրենց երգիչները ունեցան, որոնք բոցաշունչ տաղերու մէջ հայրենասիրական հոգիին թափ տուին։ Մենք ունեցանք Ալիշանը, որ եղաւ „Աւարայրի պլպուլը“, երգեց „կարմիր Վարդանը“։ Իր տաղերը հանգուշն և մեղմ երազանքը, մրմունջը կամ անուշ տենչանքի մը պլատոնական զգայութիւնը չեն տար միայն, այլ բարկաճայթ, վրիժագոռ, սալասմբակ ճախրանք մը ունին, արիւնը մտրակող և գործի մղող... Հապօն յառաջ։

Ան լսելի ըլաւ առաջին անգամ „Բամբ որոտանը“, Մարսէյէզի մը չափ հրաբորբոք, անոր չափ սրտոտ,

„Ի զէ՛ն, ի վրէժ, օն անդր յառաջ“։

Իր հոգու մէջ, Հոմերոսի պէս, կը լսէր դեռ զէնքերու շկահիւնը, հրանժոյգ երիվարներու դրոյթը հին Հայաստանի քաջերուն, որոնց արիութեան գործերը հրափայլ քերթուածներու մէջ ցոլացուց։

Կը զարմանայ մարդ տեսնելով անոր հեզ անձնաւորութեան մէջ, այնքան համեստ, կրօնական երեք պատուիրաններու այնքան հաւատարիմ, հրաբուխի գոռ ժայթքումներ և շանթարձակ դարբնումներ։ Ինչ վեհութիւն Աւագ Մասիսի սա դիմառնութեան մէջ։

„Երբ յետ դարերու առաջին անգամ
Ես աւագ Մասիս ներսուց որոտամ,
Կանչեմ ու շնչեմ, արձակեմ ծուխ, բոց,
Սասանեցնեմ զԱրարատն հայոց,
Այդ ընկի նշան հայոց աշխարհին
Թէ գայ ժամանակ, որ գան փառքն այլ հին“։

Դիմացի լեռները կ՚արձագանքեն.

„Շարժիր, հա՛, շարժիր Աւագրդ Մասիս
Արծան պարծանաց հայոց աշխարհիս“...

Այս թռիչը, հոյակապ թափը ու կիրքը ունեցող մը, Աւագ Մասիսը միայն կրնայ իրեն շիրիմ ունենալ։

Ալիշանի մէջ նուիրական հուրը մինչև գերեզմանին դուռը անշէջ մնաց։ Էստայի մը խորանի կրակին պէս։ Բառին լայն մտքով հայրենավառ և հայրենի յիշատակներով ապրող բացառիկ էակ մըն էր, քան կրօնական միստիքութիւնով գինով։ Կանտի պէս իր վանական խուցէն շատ քիչ հեռացաւ. սրբափայլ երևակայութիւնով և ազնիւ զգացումներով տոգորուած, վանքին մէջ — „սրբազան քարայրը“ Ս. Պենետիկտի — ճգնաւորական կեանք մը վարեց, բայց շարժուն, արգասաւոր և պաշտելի։ Եթէ գործնական յեղափոխութիւնն ալ միացնէր իր հայրենասիրական խանդավառութեան՝ ազգային դիւցազն մը կ՚ըլլար։ Ինք լոյս աշխարհը բերաւ ազգին աւերակներուն մէջէն, որոնց ամէն մէկ „նշխարները ու նշմարները“ երկիւղածութիւնով դիտեց, շօշափեց՝ Հայաստանի հին փառքը, մեծութիւնը և հմայքը։ Միմիայն ապրեցաւ, այդ հիանալի մարդը, իր հայրենիքով և իր հայրենիքի համար։ Ս. Ղազարի կղզին մէջէն բաց գրքի մը պէս կը սերտէր իր սիրած Հայաստանը, որուն մոխիրներուն ու փլատակներուն մէջ կը քրքրէր սրբազան իտէալով ու հառաչով հին Հայաստանի ստուեր մը, սառած արցունք մը, թափանցիկ ժպիտ մը, հպարտ ժէստ մը և փառքի բեկոր մը։ Սիրահարած անոր անուշահոտ և բիւրերանգ ծաղիկներուն, վճիտ ու սառնորակ ակերուն, դրախտի գետերուն, ծմակներուն, ծործորներուն ու աւերակ ուխտատեղիներուն, որոնք ամէնքն ալ պատմական ազգային երևելի դէպքով մը նուիրագործուած են և զորս նկարագրած է ինքնուրոյն, երբեմն տարտկանոն, բայց բանաստեղծական նախշուն լեզուով մը։

Ալիշան կրկին Միաբանութիւններուն մէջ անզուգական կը մնայ իր ազգային հողին վրայ գիտնական հետազօտութիւններով ու տքնութիւնով իր հմտալից և համբերատար աշխատանքով երկասիրած հոյակապ հատորներով։ Ինքը եղաւ Հայաստանի պատմական, աշխարհագրական և երկրաբանական երկրախոյզը, այնպէս որ եթէ Հայաստանը կորսուի, կարող ենք իր գործերէն ճարտարապետել կամ ստեղծագործել Հայաստանը։ Իր գործերը ոչ միայն կուտան չորցամաք ծանօթութիւն, այլ նաև կ՚արթնցնեն մեր մէջ սէր մը, պաշտում մը. հեղինակին հետ կունենանք նոյն յուզումը, նոյն սարսուռը դէպի Մայր-Հայրենիքը։ Ալիշանի երկասիրութիւններու ծոցին մէջ, որոնց վրայ իր գարուններուն ու աշուններուն լոյսը թափած է, կըզգաս տաք և սուրբ հաւատքի մը գօրը։

Ալիշան ոտք կոխած չէր Հայաստան, բայց գոց գիտէր եդեմական աշխարհին ամէն մէկ անկիւնը։ Հայրենի փառաւոր և դիւցազնական օրերու բարձրաթռիչ երազող մըն էր, ատոր համար գուցէ նոր Հայաստանը, որ օտարութիւն կը հոտէր, այնքան չի շահագրգռեց զինքը։ Իր խանդավառ և հոյակապ գործերը անմահ կոթողները պիտի ըլլան իր կեանքին և իր սիրած հայրենիքին, այնպէս որ Նահապետը, վերջի բոպէին — երբ հայրենիքի կարօտովը կը մեռնէր — կրնար ըսել Թեբացի զօրավարին

պէս. „երեք արժանաւոր զաւակներ կը ձգեմ ազգիս Այրարատ, Սիսուան և Սիսական“։

Աշխարհային աղմուկներէ և փառքերէ առանձնացած, որուն խոշոր ու պարկեշտ աչքերը կ'ուզէին ըսել.

„Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարտի“,

„Հրեշտակային“ վարդապետը համեստ և առաքինի կեանքով մը կնքեց իր թանկագին օրերը վանքի խաղաղ և խըն-կաւէտ լուսաստուերին մէջ, աղօթելով և հայրենի կորսուած փառքը դիւցազներգելով։

Այժմ կը հանգչի ամենուս սիրած Նահապետին մարմինը Վենետիկի Ս. Ղազարի կղզիին մէջ, ուր ծովը գինովութիւն չունի, ուր կօնտօլները կը սահին երգերու շունչով, ուր Պայրըն իր փրփրուն երազներուն ստուերները ման ածեց և ուր աստղերը կը պայծառափայլին անվիշտ։ Այդ կղզեակին մէջէն, որուն Միաբանութեան համար Զայլտ Հարօլտի հեղինակը կ'ըսէր. „Այս մարդիկը ճնշուած և ազնուական ազգի մը քահանաներն են“, Ալիշան երեսը դարձուցած է Հայաստանին, Աւագ Մասիսին, ուրկէ արշալոյսը կը ծագի և կարծես կը լսենք դեռ իր աղուոր սրտառուչ ձայնին արձագանքը.

„Շարժիր ա՛ն շարժիր դուն այլ Նահապետ,
Մասեաց սարերուն շնչին ա՛ռ մէկ հետ։
Ահա շարժեցաւ ծեր Նահապետն այլ.
Ո՞վ դէպի Մասիս իւր հետ կառնու քայլ“։

Անոր գերեզմանը պէտք էր ըլլար Հայոց Հայրապետներու, Ընդհանրներու շիրիմներուն քովիկը, Հայաստանի մէջ, ուր Ծիրանին կը ծաղկի և աղբրանց արիւնը կը բուսնի։

Ս. Ղազարի կղզին — որուն համար չվարանէր ըսել գուցէ Պայրըն The island of the blest — ուխտատեղի մը պիտի ըլլայ, զի հոն կը հանգչի, գեղեցիկ լուսնակի — „լուսնկային գերեզմանաց Հայոց“—շողքերուն տակ Մեծ Ալիշանը, որ կրօնք մ'ունէր՝ Հայաստանը և իտէալ մը՝ անոր ազատութիւնը և փառքը։

Ալիշանի մահուան առթիւ „Դրօշակի“ խմբագրութիւնը հետևեալ հեռագիրը ղրկած է՝

Մխիթարեան միաբանութեան
Վենետիկ

„Խորապէս յուզուած՝ մեր անկեղծ վշտակցութեան արտայայտութիւնը կ'ուղղենք Ձեզ՝ Հայր Ալիշանի մահուան առթիւ։ Կ'ողբանք մահը Հայաստանի մեծանուն եւ ազնիւ զաւակին, որ խանդավառ ջատագովն էր հայրենիքի վերածնութեան եւ երգիչը անոր անցած փառքերու“։

ՀԱՅԵՐԸ

Իբրեւ պատասխան „Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան“ դիմումի՝ Ա. Զիպրիանի հետեւեալ յօդուածը հրատարակած է „Լա պտիտ Ռէպիւբլիկի“ մէջ։

Հայեր,

Ձեզի համար աղաղակելու բոպէն չէ, այլ գործելու։

Ուրիշներու քաջալերական խօսքերը չեն, որոնք ձեզ կուի պիտի խրախուսեն ձեր գաղան հարստահարիչներու դէմ։

Ձեր վիշտերը, ձեր տառապանքները, ձեր երկար մարտիրոսաբանութիւնը հերիք են։

Ժողովուրդ մը որ չի յուզիր իր սրախողխող եղբայրներու լացուկոծին, որ չ'ընդվզիր ամէն օր, իր սպանիչներուն դէմ, որ չգիտեր ոչ պաշտպանել, ոչ իր սպանուած հայրերուն, մայրերուն, կիներուն ու տղաքներուն վրէժը լուծել, որ ուրիշներու օգնութեան և միջամտութեան վրայ յոյս կը դնէ, որ չունի ինքնավստահութիւն իր սրտոտութեան, իր դատին մէջ և որոնցմէ ոմանք—միլիոնատէրերը — աւելի սէր և զգայուն սիրտ ունին իրենց փողին համար, քան իրենց սեւօր եղբայրներու կեանքին. ժողովուրդ մը, կ'ըսեմ, երբէք ազատ չպիտի ըլլայ, զի ազատութիւնը չեն մուրար, այլ կ'առնեն, ուրիշներէն չեն խնդրեր, այլ կուելով ձեռք կը բերեն։

Լացարցունքները չեն, որոնք ազատութեան ծառը ծաղկեցուցին, այլ արիւնը։

Ազատ ըլլալ ուզող ժողովուրդ մը թող կազմակերպուի. դաւադրէ, շարժի, պայքարի. ստրկութենէ ախորժող մարդն է որ կ'աղերսէ, կուլայ, կ'աղաչէ։

Սկզբունքի մը, գաղափարի մը համար մեռնող մէկ մարդու հոնդիւնը շատ աւելի հզօրազդեցիկ է քան դարու մը մէջ ամբողջ ժողովրդի մը ողբուկոծը։

Կը հիանան խիզախներուն վրայ, կ'արհամարհեն վատերը։ Վերջիններուն համար մոռացութիւն, առաջիններուն համար փառք։

Ճնշումի դէմ ապստամբութիւնը իրաւունք մըն է։

Ձեր թշնամիներէն սպասեցէք միայն ստրկութիւն, թշուառութիւն, թուքումուր, տանջանք և աւերաւերում։

Լիովին բնաջնջումի դատապարտուած ժողովուրդ մը իր յուսահատ դիւցազնութեան մէջ պէտք է դնէ միայն յոյսը։

Մի սպասէք ուրեմն որ այս կեղտոտ ոճիրը, որ սկսած է արդէն, աղջամուղջին մէջ կատարուի։

Եթէ դուք մեծ պատերազմի մը, մեծ յեղափոխութեան մը մէջ զոհէիք ձեր 300,000 խողխոդուած եղբայրները, դուք ազատ կ'ըլլայիք։

Ժողովուրդ մը անպատիժ չեն սպաններ, բացի այն պարագային, երբ այդ ժողովուրդը ինքը կ'երկնցնէ վիզը դահիճին։

Եթէ գիտէ, կուզէ ինքզինքը պաշտպանել, նոյնիսկ իր եղունգներով ու ակռաներով, չի յաղթուիր ան, չի նուաճուիր, չի ջնջուիր, չի կորսուիր։

Եւրոպական միջամտութեան վրայ յոյս դնել յիմարութիւն է։ Անոնք ալ այնքան ոճրագործ են, որքան է տ է պ ս ի զ Աբդիւլ Համիդը, զոր ձգեցին և պիտի ձգեն որ արիւնի մէջ տապլտկի ան։ Անոնցմէ մէկը, Ֆրանսան, ոտնակոխ ընելով իր բոլոր անցած փառքը, սպառազինեց Նաւատորմիղ մը, ոչ թէ ճնշուած ժողովուրդ մը փրկազատելու, այլ փողի անարգ խնդրի մը համար։ Այս ձեզի կ'ապացուցանէ որ այսօր զգացումը փողքսակին մէջ է, չէ թէ սրտին մէջ։

Բոլոր կառավարութիւնները այդ ջրէն են։

Եթէ դուք շարունակէք դողսիրտ ըլլալ, հպատակիլ, յուսալ և Աստուծոյ աղօթել, կորսուած էք։

Ձեր Աստուածը, ձեր յոյսը, ձեր հաւատքը պէտք է ըլլայ ձեր քաջութիւնը, ձեր յանդգնութիւնը, ձեր ատելութիւնը, ձեր յուսահատութիւնը։ Տեսէք պզտիկ Կրետէն, որուն համար ես երկու հեղ կուեցայ։ Ապստամբեցաւ ան, նեղ օրեր քաշեց, կուեցաւ, և ազատեցաւ Թրքական լուծէն։

Անոնց պէս ըրէք, դուք այնտեղ պիտի շահագրգռէք ժողովուրդները ձեր դատով։

Որովհետև ձեր մարդասպան թշնամիները ոչ սեռի կը խնայեն ոչ տարիքի, հետևաբար դուք ձեր պաշտպանութեան համար աղջիկ, տղայ ոտք ելլելու կուելու էք. յաղթել կամ մեռնիլ քաջերու պէս ձեր պատուին, ձեր ապահովութեան, ձեր ազատութեան և ձեր անկախութեան համար։ Զինուած յարձակումին պատասխանեցէք զինուած ապստամբութիւնով։ Ուժին ուժով դէմ դրէք։

Թիւրքը կը հալածէ հայը, թող հայն ալ թիւրքը հալածէ։

Թիւը չէ որ հաշուի կառնուի, այլ քաջութիւնը և յանդգնութիւնը։

Տեսէք քաջասիրտ պօէրները։ Ոչինչ այնքան հիանալիօրէն մեծ, աւելի վսեմ, աւելի փառապանծ, քան փոքրիկ Թրանսվալի հսկայական կռիւը հզօր Անգլիոյ դէմ։ Այս մեծ օրինակը ժողովուրդներու յիշողութեան մէջ անջինջ պիտի մնայ։ Պօէրները արժանի են ազատ և երջանիկ ըլլալու, ըլլան թերևս։ Հոգ չէ, յաղթեն կամ յաղթուին անմահ պիտի մնան։ Անոնք ձեզի կը սորվեցնեն թէ ինչպէս ճնշուած ժողովուրդ մը կուելու է իրեն համար, իր երկրին համար, իր ազատութեան համար։

Հայեր, թօթուեցէք ձեր մեղապարտ անգործութիւնը։ Հեռուները տեղափոխեցէք անկարները, բոլոր անոնք, որոնք կ'անդամալուծեն ձեր խոյանքը, կը կապեն ձեր գործունէութեան թևերը և կը կասեցնեն ձեր վրէժխնդիր բազուկները։ Նետուեցէք լեռները, և Արդիւլ Համիդի աւազակներուն դէմ՝ աւազակային սրածութեան և աւերածութեան անխնայ պատերազմը մղեցէք. ըրէք անոնց, ինչպէս որ անոնք ձեզի ըրին։

Ամէն միջոց լաւ և բարի է մարդոց՝ իրենց դահիճներուն դէմ կուելու, զայն խորտակելու և սատկեցնելու համար։ Ամէն պատերազմ, որ կը տանի ազատութեան, արդար է և օրինաւոր։

Կամ մեռնիլ հերոսի պէս կէնքը ափին, կուելով, կամ մեռնիլ անարի և վատասիրտ, համակերպ ու լալկան։

Առաջին պարագային դուք ազատ ըլլալու բախտէն զուրկ չէք. երկրորդ պարագային ազատութեան հոտը նագամ չէք առներ։

Ընտրեցէք։ ԱՄԻԼԿԱՐ ՇԻՊՐԻԱՆԻ

ԹՂԹԱԿՑԱՌԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՍՂԵՐԴԷՆ

—

5 յունիս 1901

Սղերդէն 7-8 ժամ հեռի Զոգ գիւղը, վախճանեալ Տ. Սարգիս քահանային որբերուն և Յակոբ Խրթթոյեան անուն ազգայնոյն սեփականութիւնը եղող երեքական սենեակէ բաղկացեալ կից երկու տները՝ 7 տարիէ իվեր տեղական կառավարութիւնն իւրացուցած և զօրքերը հոտ բնակեցուցած է, խեղճերն անտուն և անպատսպար թողլով։ Թէպէտ և քանիցս Զոգ և Սղերդ դիմած են, բայց կառավարութիւնն միշտ իրենց թախանձանաց անկարեկիր գտնուելով՝ մինչև այսօր ոչ տները կը վերադարձնէ և ոչ ալ իրը վարձք բան մը կը վճարէ։ Թշուառ տէրերը կարի գոհ ու շնորհակալ կըլլան և 7 տարուան վարձքէն վ ա զ կանցնին, եթէ իրենց տներն յ ա ն ձ ն ւ ի ն իրենց։

Յունիս 7. Թօմ գիւղացի քիւրդ մը, որ բեռ մը ցորեն՝ աղալու համար ջաղացք կը տանէր՝ Քէզէր անուն տաճկաբնակ գիւղը, հասնելուն՝ անմիջապէս, փոխանակ կարգին սպասելու՝ բոնի կուզէ իր ցորենն աղալ։ Եւ երբ ջաղացպան Կէսօ Պետրոսեան անուն հայն իր այս ընթացքին հանդէպ առարկութիւն կը հանէ և կ'ընդդիմանայ իսկ, քիւրդն կատղած շան պէս կիրք կ'ելնէ և մէջքին կապած դաշոյնն շուտ մը քաշելով, մինչև կոթը խեղճ հայուն կուրծքը կը մխէ գազանաբար և յետս կը փախչի։ Խեղճին կեանքը վտանգի մէջ էր արդէն առաջին վայրկենէն և շատ չանցած, ալ ոչ ևս էր Կէսօն։ Կառավարութեան դիմում եղաւ, բայց ապարդիւն։ Այն ալ դասեցինք ի շարս նահատակելոց։

Յունիս 10. Ղարզան գաւառակին քահանայազուրկ քանի մը հայ գիւղերը հոգևորապէս մխիթարելու համար, տեղւոյս առաջնորդարանի կողմէն, իբր շրջուն քահանայ կարգուած Տ. Յարութիւն Մալխասեանը, Այնտար գիւղն հանդիպելուն՝ նոյն գիւղի գիւղապետ Ալիէ Ռամմէն, որ Պըշարէ Զաթօ անուն բռնաւոր ազային այցելութեան պիտի երթար, քահանան մօտը կը կանչէ, և „կօշիկդ ու բաճկոնդ նոր են, ինձի պէտք պիտի ըլլան, հանէ տո՛ւր, վերադարձին դարձեալ կուտամ“ ըսելով կըսպառնայ իրեն։ Խոհեմութիւնը իր ամէն կողմերով լաւ ընդդրկող Յիսուսի այս բարի աշակերտը միթէ կրնա՞ր աղային հրամանն չկատարել. ոչ երբէք. քիչ կը մնար ալ որ իր վերարկուն ալ հանելով աղային ուսերն իվար կախէր. այնքա՞ն խոհեմ է և խոհեմ ըլլալու ստիպուած է մեր քահանան։

Յունիս 18. Շիրվան գաւառակէն Նըպին գիւղացի Յարօ Ներսէսեանը երեք տարի առաջ կը մեռնի, իւր կինն՝ Պըրքէ գիւղացի Մանոյի աղջիկ Պէրֆօն՝ երկանը մահուանէն տարի մը վերջ, իրեն եղած սպառնալիքներէն ահաբեկած՝ կ'ընդունի իսլամական կրօնքն և զինք հետապնդող սդուրբքցի Մահմոյին հետ կ'ամուսնանայ, իր 4-5 տարեկան տղեկն՝ Գասպար թողլով իր տալրջ Ներսէսի աղջիկ Ռահանին։

Թուականէս շաբաթ մ'առաջ Գէրսաֆ գիւղի (Սղերդէ 5-6 ժամ հեռի) Հաճի-Շէյխ Նէճմիտտինի պահանջումով, Շիրվանի գայմագամութիւնն բռնի, ծեծով և բիւր սպառնալիքներով յիշեալ Ռահանէն տղան կառնէ Մահմոյին յանձնելու համար։ Այսօր երկու աղերսագիր տրուեցաւ քաղաքիս կառավարութեան, բայց անօգո՛ւտ, որովհետև բոլոր հրամանագիրներն—հայոց ի նպաստ—կեղծ ու ձևակերպական են, եթէ երբէք կառավարութիւնը իրապէս աշխատի ոևէ գործ մը կարգադրելու իսկ, չի յաջողիր։ Շ է յ խ, աղա-պէկ զօրաւորագոյն են, քան կառավարութիւնը։

Յունիս 20. Երեկ, կէս գիշերուան ժամանակները, Մ ու ս ը ք ա աշիրէթէն 17-18 հոգի կը յարձակին Ռնտուան գիւղէն կէս ժամ հեռի ջաղացքին վրայ և մէջը գտնուած երեք մարդիկը (2-ը հայ, 1-ը քիւրդ) կը կողոպտեն և հոն սպասող աղալու ցորենը՝ 20 բեռ՝ իրենց ջորիներուն վրայ բառնալով կը տանին։

Այսօր ժամը 8-ին ատեանները քանի մը հայ երիտասարդներ, որոնք Պօհթանայ գետակէն (Տիգրիսի արևելաճիւղն և քաղքէն կէս ժամ հեռի. ջրի նեազութիւնն այն աստիճան տագնապալի դարձած է հոս, Սղերդի մէջ, որ հասարակութիւնն իր խմելու ջուրն հայթայթելու համար, այսքան հեռաւորութիւն կտրել ստիպուած է) իրենց անասուններու շալակով ջուր բերելու գացած էին.

վերադարձին՝ ճամբան՝ Էրուի երթալու պաշտօն ունեցող գունդ մը զինուորներու կը հանդիպին, որոնք առջի բերան բիրերու և հրացանի փայտի կողմովը զիրենք խժդժաբար լաւ մը տփել տալէն ի զատ, առանց խպնելու—չ'ըսենք խղճահարելու, որովհետև խ ի ղ ճ ըսածը Թիւրքին բառարանէն իսպառ վտարուած է—իրենց նոփզնոր քանի մը զոյգ կօշիկ-գուլպաները սպառնալեօք կառնեն ոտքերնէն և կը տանին. հագուստներն ալ հանելով ադամական մերկութեան կ'ենթարկէին զիրենք, եթէ սակայն ցնցոտի, անպէտ բան մը չ'ըլլային անոնք։ Ներկայիս, հա՞րկ է ըսել թէ անդորրութիւնն խանգարուած, խաթարուած է թէ ի տան և թէ յագարակի. այդպիսի պարագաներուն և հայաջինջ կեղեքումներուն կառավարութիւնն անտարբեր, անհոգ գտնուած է։

Յունիս 21. Ղարզանի գայմագամն, մալ-միտիւրին և Սղերդի ոստիկանապետը միջոցէ մ'ի վեր Ղարզան գաւառի գիւղերը տուրք հաւաքելու ելած էին։ 85,000 ղրշ. կոկորդնին անցուցած են, մինչդեռ ասոր կիսուն չափ հազիւ հազ տէրութեան գանձուն հաշոյն հաւաքած են։ Քննութիւն բացուած է։ Ցանգաւորները Բաղէշ կանչուած են։ Ժողովրդին վրայ ի գործ դրուած այսպիսի կեղեքումներուն ասկից աւելի բացորոշ, պերճաբան ա պ ա ց ո յ ց ն ե ր պէ՞տք են...

Յունիս 23. Սղերդի արևելակողմը 1 ժամ հեռաւորութեամբ գիւղ մը կը գտնուի Թիլլօ անունով, աւելի քան 200 տուն։ Բնակիչք Թիւրք տաճիկ են, ամէնքն ալ Շէյխ կամ շէյխերուսերունդ ու զաւակներ։ Գահերէց շէյխն ունի սքանչելի տուն ու նախնեաց հարուստ գամբարան մը։ Արիւնկզակ կռիւ մը պատահելով իրենց մէջ—կ'ըսուի թէ շէյխութեան աթոռը միմեանց ձեռքէն յափշտակելու համար է—10 մարդ վիրաւորուած են, երկուքն ալ մահամերձ։ Կառավարութիւնն անհոգ, անճարակ և ա ն տ ա ր բ ե ր հանդիսատես է։

Յունիս 28. Հազչօյէն կէս ժամ հեռու, Արփիար անուն երիտասարդն կըսպաննուի պրթմանցի քիւրդի մը ձեռքով։ Սպանութեան պարագաներն և շարժառիթն մեզի անծանօթ են։

Յունիս 29. Տեղւոյս կառավարութեան նախաձեռնութեամբ վերջերս փորուած ջրհորներու մէջ աշխատող Թիւրք Հիւսնի անուն (կառավարութիւնը սկզբունքով միայն և միայն Թիւրք բանուորներ վարձած է) երկու փարանոց բանուոր մը երէկ ջրհորին մօտէն անցնող և հարկեցուցիչ գործոյ մ'առթիւ հեռուները երթալ ստիպուող հայ երիտասարդի մը կը հրամայէ, որ մօտերը կուտակուած քարերէն մէկն իրեն տայ. սակայն հայն՝ բանաւոր առարկութիւններով կը բացասէ և կ'անցնի երթալու հոն, ուր որ հարկն կըստիպէր զինք. բայց ահա ասոր վրայ Թիւրքը կը կատղի, կը փրփրի և սովորական յիշոցներէն (խաչին, կրօնքին ը ր զ ի ն...) մաս մ'ալ խեղճին գլխուն կը տեղացնէ անիրաւաբար։ Ասով ալ կարծես չգոհանալով 1½-2 օխա ծանրութեամբ քար մը կ'առնէ և ուժգնակի անոր մէջքին կը զարնէ, որ նոյնհետայն խեղճն գետին փուելով կըսկսի բերնէն ու քթէն երագ երագ արիւն վազել։ Ծնողքը զինքը տուն փոխադրեցին, պէտք եղած դարմանն տուին ու կուտան մինչև այսօր, բայց անօգո՞ւտ. արիւնն դադրելիք չ'ունի, կեանքն վտանգի մէջ է։ Կառավարութիւնն օրինական ձեւակերպութիւնն ըրաւ, օրինական կ'ըսեմ, որովհետև ինչպէս կերևի վերջերս այս ձեւակերպութիւններն ալ օսմանեան օրինագրքին վերջին յօդուածը կազմեր են, դարձեալ չ'ուշացուց, բանուորն տարաւ բանտարկեց, բայց 1-2 ժամ յետոյ դարձեալ ազատ արձակեց, գլխուն քաջալերմ'ալ կարդալով անշուշտ։

Յուլիս 2. Պաշտօնական կեղեքումի Բ-ը ձև մը *)։

Այս տարի մեր գաւառին մէջ արմտեաց տարապայման աժանութիւն, իսկ քիւրդ աշիրէթներու մէջ սոսկալի և արիւնռուշտ ընդհարումներ ու կռիւներ կան։ Այս կրկին պատճառներով ա շ ա ր (գիւղերու տասանորդ) առնողներ չներկայացան։ Կառավարութիւններն հայաբնակ գիւղերէն ս ա պ ը գ ը (անցեալ տարուան հասոյթը) գոցելու համար բռնի կերպով ժողովրդեան ծախեցին։ Ժողովուրդը պաշտօնապէս կողոպտելու նորահնար ձև մը։ 50 ոսկիի ծախուող գիւղ մը 20 ոսկիի հասոյթ հազիւ հազ կուտայ։

Ընդհանրացած կեղեքումի ձև մը։

Շրջականներէն քաղաքս ներածուած ապրանքներէն—սնունդ, հագնելիք մէկ խօսքով առևտուրի նիւթ—քրիստոնեաները ոչինչ կրնան սակարկել և գնել, իրենց առօրեայ պէտքերու հոգացման համար։ Անվիճելի իրողութիւն մ'է, թէ այն ապրանքը, որ տաճկին պիտոյից պիտի ծառայէ, հայուն չկրնար ծախուիլ։ Բաց աստի շուկայի հրապարակին վրայ կը վխտան հարիւրաւոր չարաշահ գնորդներ, որոնք հայուն սակարկած ապրանքին գնող հանդիսանալով՝ նախ իրենք կառնեն և յետոյ հայու կը ծախեն, արժէքին համեմատ, կարևոր շահով մը։

Թիւրք ամուլ կիներն զաւակ բերելու համար իրենց շէյխերէն ու կրօնաւորներէն խրատուած, մեզի ու մոխիրի բաղադրութիւն մը խեցեղէն ամաններու մէջ լեցուցած՝ մեր եկեղեցւոյ և վարժարանին դռներուն ճակատը կը փակցնեն։ Ամէն օր կը մաքրուի թէև, բայց իզուր։ Ուրիշ կերպ մ'ալ։ Նոյն կիներ մեր եկեղեցւոյ բակը կամ գերեզմանատուն դիմելով խումբ խումբ կերթան նահատակուած քրիստոնէից շիրիմներու վրայ կը միզեն։ Խեղճ ժողովուրդը ի տես այս սրբապղծութեանց, իր աչքերն երկինք բարձրացնելէն և Աստծոյ արդարութիւնը խնդրելէն զատ ոչինչ կրնայ ընել։

Յուլիս 3. Երէկ Շամսօ և Ապտէ անուն երկու գինեմոլ և անբարոյական Թիւրք երիտասարդներու մէջ կռիւ մը կը պատահի, Զաքօ անունով հայ գինեպանի մը տան առջև, փողոցի հրապարակին վրայ. մինչև անգամ դաշոյնի սպառնալիք ալ կ'ընեն իրարու։ Բայց Զաքօյին միջամտութեան և թախանձանաց վրայ կը հանդարտին և կռիւն վերջ կը գտնայ։ Սակայն Շամսօն, վրէժը գէթ Զաքօյէն լուծել տալու համար, դեռ տանը առջևէն չբաժնուած, Զաքօյին ուղղեալ. „վա՜յ շուն, վա՜յ խնզիր, դուն Ապտէին կողմը բռնեցիր չէ՞. քեզի կը թողում" կ'ըսէ ու կը հեռանայ։ Եւ նոյն օրը գիշերուան ժամը հինգին ատենները իր կրտսեր եղբայրն՝ Պըլալ և մօտաւոր ազգականն՝ Մուհամէդ կը ղրկէ, որոնք կուգան ի հեճուկս՝ Ապտէին խեղճին տունը, կը կողոպտեն ամբողջ կարասիներն և մինչև անգամ անկողիներն իսկ վրայէն վերցնելով կը տանին։ Ցաջորդ առտուն Զաքօն կառավարութեան տեղեկութիւն տուա. և ապացոյցներով հաստատեց Պըլալին և Մուհամէդին բուն հեղինակ ըլլալն. բայց իրեն մտիկ ընող չ'եղաւ։

*) Ժողովուրդը կողոպտելու պաշտօնական առաջին ձևը ջրհոր փորել տալու պատրուակին տակ կառավարութեան ժողովրդէն 4-500 ոսկիի մօտ գումար մը հանգանակելն էր։

Յուլիս 9. Ալըգան և Բէնճիրան աշիրէթներու կռիւն — ասոր մասին ուրիշ անգամներ ալ գրած ենք — մինչև այսօր անընդհատաբար կը շարունակուի. վնասուողները միայն Ռնտուան և Հըսէնը գիւղերու հայերը կըլլան. ինչու որ իրենք երկու կողմի կուող հարիւրաւոր մարդիկը հիւրընկալել, կերակրել և անոնց երեսէն ամէն տեսակ տառապանք ու նեղութիւն քաշել ստիպուած են յակամայս։ Երկու գիւղերու հայ բնակիչներն սկսած են ցրուիլ՝ իրենց գլուխն ազատելու համար՝ ի մեծ ուրախութիւն իրենց բնակակից քիւրդերու, որոնք խեղճ հայերուն արիւն քրտինքով ձեռք բերած կալածոց, տներուն պիտի տիրանան ուրախ սրտով և հանդարտ խղճով։

Յուլիս 11. Քաղաքէս 9-10 ժամ հեռու Զէլիք անուն գիւղի մէջ Արապ և Յովհաննէս երկու հայ երիտասարդները իրենց ընտանեաց և հօրաքրոջ Վարդէի հետ կապրէին 20-30 տարիներէ իվեր։ Իրենց արհեստը հնակարկատութիւն էր և այդ արհեստին շնորհիւ աղուորիկ հարստութիւն մ՚ալ ձեռք բերած էին։ Բայց վերջին օրերս գիւղին գիւղապետ Ալիէ Ռամմոյին իրենց վրայ կատարած ծայրայեղ բռնութիւններուն ու հարըստահարութեանց ալ հանդուրժել չկրնալով՝ վերջնականապէս գիւղէն փախչիլ կ՚որոշեն և օր մ՚ալ գիշեր ատեն, ընտանիքն իրենց հօրեղբօր խնամոց յանձնելով և միայն իրենց տան կարասեաց դիւրատար մասն և 60-70 ոչխար հետերնին առնելով՝ գիւղէն կը հեռանան և կերթան Զէվէք անուն տաճկաբնակ գիւղ մը կ՚ապաստանին՝ ժամանակ մը հոն ապրելու և Ալիէ Ռամմոյին անգթութիւններէն ազատ մնալու համար։ Բայց երբ օրն առաւօտ կըլլայ և գիւղապետ Ալին խնդրոյն էութեան կը տեղեկանայ, անմիջապէս Զէվէք գիւղի բռնաւոր Օսման աղային, որ իր մտերիմ բարեկամն ալ էր, մարդ կը ղրկէ և կը թախանձէ, որ եթէ կարելի է այդ երկու հայ երիտասարդները իր գիւղէն դուրս ընէ և սպաննէ։ Օսմանն ալ այս լուրն առնելուն առաջին վայրկենին, խեղճերն քայլ մը երկու գիւղէն դուրս կը տանի և ցերեկը, լոյս արևով երեքն ալ կըսպաննէ։ Դիակներն մինչև այսօր անթաղ կը մնան։ Դժբախտաբար մինչև այսօր Յովսէփ Արեմաթացի մ՚ալ չգտնուեցաւ, որ աղային հրամանն առնէր զիրենք թաղելու։ Կառավարութիւնն լսած է, բայց խուլ կը ձևանայ. լռելեայն ոճրագործներուն շահատակութիւնը կը ծափահարէ։

Յուլիս 13. Շամմար արաբներու ցեղապետ Շէյխ-Գարիսի հրամանաւ, 100 ձիաւոր յարձակելով Իպրահիմ փաշայի ոչխարի հօտերու վրայ, 4,000 ոչխար կը յափշտակեն։ Իպրահիմ փաշայի զօրապետներէն Հասանէ Գանճօ 24 ձիաւորներով արաբները կը հետապնդէ ոչխարները ազատելու յոյսով, բայց անոնց դարանին մէջ ձերբակալուելով ողջ ողջ կը մորթուի իր մարդերով։

16/29 օգոստոս

Դժոխային է Սղերդ գաւառի ժողովրդի վիճակը. օր չանցնիր որ սպանութեան, կողոպուտի և ուրիշ անպատիժ չարագործութիւններու դէպքեր չպատահին։

Թուականէս երկու օր առաջ Հիւսէյնիյ գիւղէն Լանտօ անուն ասորի մը կըսպաննեն ու կինը կ՚առևանգեն։ Սպանուածին դիակը քաղաք բերուեցաւ։

Այս առտու ալ Տակալա գիւղացի ուրիշ Լանտօ անուն ասորի մը կըսպաննուի գիւղէն 10 վայրկեան հեռու, որու դիակը նմանապէս հոս բերուեցաւ։

Վեց օր առաջ ալ քանի մը մուսուլցի ջորեպաններ Սղերդէն դէպի Մուսուլ գնալիս Կէտրէ-խանէ գիւղին մէջ կըսպաննուին երեք սէյիդ տաճիկներէ։

Տօմինիկեան բագերաներէն հայր Տօմինօ կրօնաւորը, ասկէ չորս օր առաջ, բազմաթիւ ուղեկիցներով Բաղէշէ հոս գալու միջոցին, Սղերդէն վեց ժամ հեռու կը կողոպտուի։

Ղարզանի գաւառը սպանդանոց դարձած է, այնպէս որ բոլոր ճամբաները արիւն կը հոտին։ Քրդերը աչքերնին արիւն առած, ալ մարդ մտիկ չեն ըներ։ Սուլթան Համիդի քաջալերութիւնները այդ մարդոց մէջ վեր հանեցին, ինչ որ գազանային է. այսօր ուրիշ գործ չունին — արդ, կենդանութիւն կը փնտռեն խողխողելու համար։ Ալըգան և Բէնճինարա աշիրէթներ ամէն օր ընդհարում ունին։ 15 օր առաջ Սղերդի խեղճ թիւրք ոստիկան մը սպաննուեցաւ այս իրարանցումին մէջ, Պըշարի եղբօր ճէմալի գնդակէն։

Սպանութիւն, գողութիւն, բռնաբարութիւն, հալածանք, խառնիխուռն կը կատարուին միջոցին և ժամանակին մէջ. բոլորն ալ յայտնի կամ գաղտնի պաշտօնական հանգամանք ունին 1895 թուականէն ասդին։ Տիրող ահ ու սարսափի երեսէն, շատերը կը փախչին ասդին անդին անխուսափելի մահէն պրծելու համար։ Ոչ ինչքի, ոչ պատի, ոչ կեանքի ապահովութիւն կայ։ Ահա այն համառօտ և տխուր պատկերը, զոր կը ներկայացնէ Սղերդի գաւառը սուլթան Համիդի անիծակուռ թագաւորութեան և օսմանեան ոճրագործ բէժիմի չարաշուք օրերուն...

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԷՆ

10 հոկտ. 1901

Անստոյգ և ապականիչ անշարժութիւնը, թիւրք աշխարհին կայուն մեռելութիւնը կը շարունակուի միշտ։ Յանկարծ զսպանակը կոտրած ժամացոյցի մը խուլ աղմուկին մտիկ ըրած էք երբէք. կըսպասես որ վայրկեանէ վայրկեան այդ խլրտուքը գադրի և տեղի տայ ստոյգ անգործութեան, որպէս զի հաւատաս թէ ափիդ մէջ բռնած այդ կարգ մը մեքենաներու ամբողջութիւնը ա՛լ բան մը չ՚արժէր, ա՛լ նշանակութիւն մը չունի. սակայն խժլտուքն, աղմուկը չի դադրիր ու կը նեղէ քեզ։

Ահա այն ստոյգ տպաւորութիւնը, որ մենք կըզգանք այսօր քայքայուած, հիմունքէն ապականած կեղծաւոր վարչութեան մը նկատմամբ, որ կը ճնշէ գերեզմանական քարի մը պէս խաղաղ բնակչութեան կուրծքին։

Օսմանեան կառավարութեան արդի բէժիմի բարեշրջութիւնը կամ բարեփոխութիւնը՝ այնքան ծիծաղաւիթ իւթօպի մըն է ոչ միայն զարգացած ամէն հայու, այլ նաև քիչ շատ խելահաս ամէն թիւրքի, որ անոր հաւատացող ոևէ անձնաւորութիւն ինքզինք խենդ հռչակած պիտի ըլլար։ Թիւրքիան՝ իր ձեռքով՝ երբէք կարելի չէ բարեկարգել։ Գիտէք թէ հիմա ներքին գաւառներու վարչութիւնը ինչպէս տեղի կունենայ։ Վալին գրեթէ ուղղակի պատասխանատուութեամբ մը կապած է սուլթանին կամեցողութեան հետ և ներքին գործոց նախարարութիւնը լոկ անուանական հսկողութիւն մը կամ իրաւասութեան բաժին մ՚ունի առաջնոյն վրայ. սուլթանին անձնական հակամիտութիւնները այն միակ

վարչական ուղեգիծն են, որուն ուշիմ պէտք է հետևին՝ կուսակալը և հետևաբար իրեն ստորադաս բոլոր պաշտօնէութիւնները։ Ուրեմն այս անարդար և ոչ-օրինական պայմաններով՝ պաշտօնեային խիղճն ու լոկ բարութեան յարաբերական հանգամանքը պիտի ըլլան գաւառի մէջ կառավարութեան ուղեցոյց. այս պատճառով էր, որ մէկ կուսակալութեան մէջ տիրող բռնութիւնը, հարստահարութիւնը և զեղծումները՝ ուրիշ մէկ կուսակալութեան մը, նոյնիսկ ամենամօտիկին հետ բաղդատմամբ շատ աւելի ցցած կը մնան, օրինակ, երբէք կարելի չէ զուգակշռի դնել Խարբերդի և Տիարբէքիրի կուսակալութիւնները, այս վերջնոյն կուսակալը, որ հոչակաւոր հարբստահարիչ մը, բռնապետ ու կաշառակեր մըն է, իր ամբողջ հսկողութեան սահմաններուն վրայ սարսափ ու թշուառութիւն սփռած է։ Հասարակութիւնը հարկաւ իր կրած չարչարանքներուն և տառապանքին համար գանգատելու տեղ մը չունէր, քանի որ բարձրագոյն հեղինակութեան ներքին վարչագիտութիւնն էր, որ կը գործադրէր նշանակուած պաշտօնեան, ու եթէ ես ընդհանուր բառով հասարակութիւն կ'ըսեմ, դուք յատկապէս պէտք է ըմբռնէք հայ հասարակութիւնը, որովհետև խարազանին էն մահաբեր հարուածները իր մերկ մարմնին ու կողերուն վրայ է որ կ'իջնեն, և եթէ հայ տարրը համբերութեան վերջին կլափին մէջ փորձի ամենէն հրէշաւոր պաշտօնեային դէմ գանգատ մը կամ բողոք մը յայտնելու բարձրագոյն իշխանութեան՝ նոյն այդ յանցաւոր ու խնդրոյ առարկայ եղողին բարի վկայութեան մը, իր պաշտօնին տեւականութեան ալ հաստատուն տօքիման մը հայթայթած կ'ըլլայ։ Արաբկիրի միթէսարիֆը յայտնի սրիկայ մը, անբարոյական մըն է, որը հերու ջարդերէն որբացած կարգ մ'անտէր անտիրական հայ աղջիկներ բռնութեամբ փակած իր տունը՝ իր հսկողութեան յանձնուած հայ համայնքին հրապարակային նախատինք ու թիւրք խուժանին ալ իր օրինակին հետևելու հրաւէր կ'ընէր։ Տեղւոյն հայ-հոգևոր պաշտօնեայն դիմեց ուր որ անկ էր և բողոքեց. և երբ իր գրաւոր բողոքները չի կրցին բաղձացած բաւարարութիւնը ձեռք բերելու, նոյն հայ առաջնորդը դիմեց կուսակալին և սպառնացաւ որ, հակառակ պարագային, պիտի դիմէ ներքին գործոց նախարարութեան։ Գիտէ՞ք ինչ պատասխանուեցաւ իրեն։ Բարի կուսակալը հայրական ժպիտով մ'աւելցուց.

— Տղա՛ս, պէտք է գիտնաս որ այսօր հայուն բողոքովը ամենայետին պաշտօնեան անգամ կարելի չէ իր տեղէն խախտել, ընդհակառակը, նոյն պաշտօնեային դիրքն աւելի ապահովուած պիտի ըլլար, ուստի գարձիր տեղդ և քաղցրութեամբ կենցաղավարելու միջոցները գտիր։

Կուսակալը եթէ մէկ կողմէն տիրող վարչական ըմբռնումներուն դժոխային ճշմարտութիւնը կը յայտնէր, միւս կողմէն ալ ապահովաբար նոյնքան ահաւոր խրատ մըն էր որ կը յանձնարարէր, այսինքն հայ կրօնաւորը պէտք էր երթար իր տեղը և իր բոլոր ազնիւ զգացումները, պարտաւորութիւնները, արդարութեան և իրաւունքի ձայնը, իր կոչումն ու հովի իր ստանձնած պատասխանատուութիւնը՝ անբարոյական ու անպատիւ համակերպութեան մը ենթարկէր։

Ահա ստոյգ դէպք մը, որ պէտք եղածէն աւելի կը բացատրէ Թիւրք կառավարութեան շնիկ դիւանագիտութիւնը՝ հանդէպ հայ խաղաղ ու արդիւնաբերող հասարակութեան։ Հարստահարել զայն ամէն ուղղութեամբ, բողոքի և գանգատի ամէն դուռ գոցել իր առջևը և ջանալ որ անիկայ լքի, տրորուի ու հատնի։ Նոյն այդ սադայէլական նենգ նպատակին յաջողութեան համար է որ երբ հայ ժողովուրդին առջև օտար երկրի բոլոր անցքերը պատուարած է, միւս կողմէն թոյլ չի տար որ պանդուխտ տղամարդը իր տունն ու երկիրը դառնայ և գէթ իր անձին գնովը ձեռք բերած դրամը երկրին մէջ գործածելու, երկրին մէջ շրջաբերութեան դնելու բարիքը գործէ։ Խարբերդ իր քաղաքովը ու գիւղերովը մօտաւորապէս Ամերիկայի մէջ 15,000-ի մօտ պանդխտութիւն մը ունի, ամէնքն ալ երիտասարդ կամ ընտանիքի հայրեր, որ հոս թողուցած իրենց ծնողքը, զաւակները, սիրելիները, գացած են ամենահեռաւոր երկրի մէջ գործաւոր դառնալու և դարձին խաղաղ աշխատութեան դրամագլուխ մ'ապահովելու, և ահա այդ պանդխտողները այսօր բացարձակ տարագրեալներ, բացարձակ աքսորեալներ նկատուելով՝ ազատ չեն իրենց սիրելիներու գիրկը վերադառնալու։ Պանդխտութեան թողած պարապը այնքան լայն է որ չես կրնար դուռ մ'անցնիլ, առանց մէկ կամ երկու պանդուխտ նշանակելու հոն, և այսօր կրնաք երևակայել թէ այդ հազարաւոր տուները, ընտանիքները ինչ լքումի, սպասումի ու զրկանքներու ենթարկուած են. մայրեր գիտեմ՝ ես որ իրենց հոգևարքի պահուն ահռելի ճգնաժամեր ունեցած են, իրենց զաւկին կարօտովը մէկ քանի ժամեր քստմնեցուցիչ չարչարանքներու տակ երկարած են իրենց հոգևարքը, մինչև որ իրենց շուրջը գտնուողներ այդ բացակայ սիրելին մէկ հին զգեստը բերած դրած են մահամերձին աչքերուն հանդիպակաց տեղ մը, որով անիկայ բացակային վերադարձի պատրանքը կրելով կարողացած է հանդարտիլ և փսլթացնել իր յաւիտենական հանգիստը։ Տանջանքը անսահման է. երբէք մարդկային լեզու մը չպիտի կրնայ ամբողջովին արտայայտել հայուն արիւնոտ պատմութիւնը։ Հայը մարդ էակ չի նկատուիր բնաւ ոչ իր հայրենիքին, ոչ իր ընտանիքին մէջ և ոչ ալ օրինաւոր դատարանին առջև, կարծես թրքական հալածանքը իր կոյր քանդումին ու ջնջումին մէջ՝ կ'ուզէ անգիտնալ նաև անոր բնական ու լոկ մարդկային զգացումներն ալ, ինչպէս զաւկի ու ծնողքի փոխադարձ զգացումները։ Եւ այդ մոլեգին հարստահարութիւնը այնքան ծայրայեղութեան հասած է որ քանի մ'օր առաջ ամերիկեան հիւպատոսարանին մէջ Մէքքինլիի հոգեհանգստեան արարողութեան համար յատկապէս հրաւիրեալ բոլոր հայերը խիստ կերպով յանդիմանուեցան կուսակալէն. հայն ի՞նչ գործ ունի օտար հիւպատոսարանի մը մէջ, Մէքքինլին հայուն ի՞նչն էր։ Մինչդեռ միւս թիւրք հրաւիրեալները, որ նոյն հրաւէրովը ներկայ գտնուած էին երբէք խիստ ազդարարութիւն մը չլսեցին։

Հայուն ու թիւրքին մէջ, մասնաւորապէս տիրող թիւրք կառավարութեան միջև, խրամատը երթալով կը լայնայ։ Ազատ եւրոպացին, եթէ նոյնիսկ ամենազօրաւոր երևակայութեամբ իսկ օժտուած ըլլայ, կարող չէ աչքի առջև բերել այն զարհուրելի համայնապատկերը, ուր կապրի հայը իր արիւնովը ներկուած և իր թշուառութեանը մէջ։ Հասարակ կենդանիները, փողոցի շուներն անգամ օրէնքին առջև աւելի արժէքով ու իրաւունքով կը ներկայանան քան հայը. քմածին անէքտոտ մի կարծէք, եթէ ձեզի պատմեմ թէ անցած տարի հայ մսավաճառ մը՝

անտանելի ու վնասակար փողոցի շան մը զարկած ըլլալուն համար մէկ ոսկի տուգանքի դատապարտուեցաւ, մինչդեռ եթէ նոյն այդ հայը իր անձնական ոեւէ մէկ վնասի հատուցման համար դատարան դիմած ըլլար՝ յայտնապէս պիտի վռնտուէր։

Երկու տարիէ ի վեր Խարբերդի հին քաղաքը գայմագամութեան փոխուեցաւ. դէպքին աղետալի հետեւանքը իրենց շահերուն ի նպաստ յարմարցնելու համար Թիւրքերու կողմէն տխմար փորձ մըն է ասիկա, որովհետեւ ջարդի թեւականէն անմիջապէս ետքը հայ վաճառականներ նոր քաղաքը՝ Մեզիրէն փոխադրուեցան, ուր համեմատաբար թիւրք խուժանը սակաւ և հետեւաբար կեանքի ու ստացուածքի ապահովութիւնն ալ աւելի երաշխաւորուած կրնար ըլլար, այս լքումը մեծապէս վնասեց թիւրք կալուածատէրերու և իւլէմա դասակարգին, քանի որ խանութներու մեծամասնութեան սեփականութիւնը ասոնցն է և ասոնց վարձքովը կապրին իրենք. հին քաղաքը այսպէս առուտուրի կեդրոն ըլլալէ դադրելով՝ դատապարտուած պիտի ըլլար հետզհետէ քայքայելու և օր մըն ալ անբնակելի ըլլալու։ Թիւրք տարրը այս իրողութիւնը հակակշռելու համար՝ փորձեց գայմագամութեան վերածել քաղաքը և ասով մեռելացած վայրի մը արուեստական կենդանութիւն մը տալ։ Հատ փորձերէ ետք, վերջապէս յաջողեցան իրենց բաղձալի նպատակին հասնիլ։ Հայերը գիտէին թէ եկող գայմագամը նոր չարիք մը պիտի դառնար իրենց գլխուն, որովհետեւ կարգ մը մէտրէսէներու մէջ որջացած իւլէմաներու պարզ խաղալիքը պիտի ըլլար։ Եւ այնպէս ալ եղաւ, նշանակուած գայմագամը աննման սրիկայ մըն է, որ էն աղտոտ ու անբարոյական մարդոց մտերմութիւնը կը փնտռէ միշտ և անոնց հետ կապրի քիթ քթի, գինովութիւնը մինչև ի լոյս գլուխէն չի թափիր և իր պաշտօնատեղին ալ, ուր շաբաթուան մէջ երկու օր և օրն ալ երեք ժամ կերթայ անցնել՝ միշտ գինով, ախտաւորուած հակամարդկային ամենազզուելի անբարոյականութեամբ, գեղեցիկ տղու մը ետեւէն անգղի թառաչով կը նայի ու կը հեկեկայ։ Իր նշանաւոր գործն եղաւ կառավարական պաշտօնատան մը հիմնարկութիւնը, որ երկու տարիէ ի վեր սկսած և վերջացած չէ. անշուշտ պիտի խորհէինք թէ այդ շէնքին յատկացուած ծախքերը կառավարական սնտուկը հոգաց, բայց պէտք է գիտնաք թէ այդ սնտուկը այնքան դատարկ է որ երբ տարին քանի մ'անգամ կը յաջողի իր պաշտօնեաներուն ամսականը հայթայթել՝ օսմանեան պաշտօնական թերթերը գոհութեամբ կը տարփողին ու կը հռչակեն կայսերական բարեհաճ իրադէն.—ոչ, այլ հայթայթեցաւ և կը հայթայթի բռնի հանգանակութեամբ (իսանէի ճէպրիով), որուն մեծագոյն բաժինը վիճակուած է թալլուած, կողոպտուած և կոտորուած հայուն։ Եւ տեսէք թէ ինչպէս ամենամեծ, նոյնպէս ամենաչնչին պարագաներէն իսկ օգտուիլ գիտէ թիւրք կառավարութիւնը՝ վնասելու հայուն ամէն բանով ու ամէն բանի մէջ, այդ կառուցելիք պաշտօնատան տեղը այնպիսի գետնի մը վրայ որոշուեցաւ, որուն շրջակայ շէնքերը ամբողջովին հայերու կը պատկանէին, արդ, թիւրքերէ կազմուած քօմիսիոն մը անոնց սեփականատէրերը կանչեց և իրենց ստացուածքներուն խիստ չնչին, իրական արժէքին տասն անգամ պակաս գին առաջարկեց. բնականաբար խեղճ մարդիկը չպիտի ուզէին կեղեքիլ և պիտի յայտարարէին թէ՝ իրենք ծախու ապրանք չունէին. ո՞վ կը լսէ։ Բահերը, բրիչները գործի սկսան և օտարի այդ շէնքերը՝ առանց տէրերուն հաւանութեան՝ քակուեցան, տարտղնուեցան և գրաւուեցան։

Այսպէս, կը հարստահարուինք մեր աջէն ու ձախէն, ամէն քայլափոխի ու ամէն պարագայի։ Ամենափոքր բողոքը կամ դիմադրութիւնը՝ սոսկալի թշնամանք մը կը մեկնուի և որը պէտք է տուժենք չարաչար կերպով. ի՞նչ ընենք, ո՞ւր երթանք, մեզի կը պատուիրեն որ չի պանդխտենք, սակայն անօթի կը թողուն մեզ. մեր աշխատանքէն մեզ կը զրկեն ու բողոքելու իրաւունքն անգամ մեզմէ կ'առնեն. մեր առջև պանդխտութեան ճամբաները կը փակեն ու մեր պանդուխտները ներս չեն առներ. զաւակը իր հօր կարօտովը ու հայրն իր զաւկին սիրովը կը մեռնի և գթացող չի կայ, ի՞նչ ընենք, որո՞ւ դիմենք։

Բայց բոլոր այս հոգեվարքին ու չարչարանքին մէջ որոշած ենք երբէք չի կորսնցնել մեր արիութիւնն ու կորովը, որովհետեւ դարաւոր հալածանքներու զաւակն ենք մենք և դիմադրութեան վարժուած մեր բոլոր անսասան հոգիովը, ցաւի բլուրներուն վրայէն մենք անթարթ ու անձկութեամբ կը նայինք Բարելոնին, որ ահա իր անիրաւութեան, զեղխութեան ու շլայտութեան պարիսպներուն տակ կը քայքայի և որոնց տակ պիտի անհետանայ ամբողջովին։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՅԱՍՆԵՕԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 23 Նոյեմբեր

Ամէն անգամ, երբ անցնում եմ Պետրոպավլովսկի ժոտով — կայ մարդ, որ լսած չլինի այդ անունը—անհասկանալի մի զգացմունք բոպէաբար պատկերացնում է իմ առաջ ամբողջ դոնփակ Ռուսաստանը, — բանտային աշխարհը իր անթիւ սպասաւորներով, բանտապետներ, ոստիկանութիւն, լրտեսներ, ժանդարմներ, ա՜ինքան բազմաթիւ, ա՜ինքան մեծաքանակ այս դժբախտ երկրում։

Եւ Պետերբուրգի Պետրոպավլովսկը, ժանդարմների կենտրոնական վարչութեան հետ միասին տանում է գրգռուած երևակայութիւնը դէպի աւելի հեռուն, դէպի գաւառական մեծ և փոքր քաղաքները, ամէնքն էլ հարուստ իրենց տեղական պստիկ Պետրոպավլովսկներով, ուր տնքում է շղթայակապ միտքը, յափշտակուող, յոյզերով լի երիտասարդ սերունդը...

Թիֆլիսն էլ ունի դրանից։

... Աշնանային մի գեղեցիկ օր, երբ Պետերբուրգից մի փոքրիկ ճանապարհորդութեան համար Թիֆլիս գնացած, անցնում էի Նաբերեժնայա փողոցով, յանկարծ մի նորաշէն տան առաջ կանգնեց մի փակ կառք, որից դուրս թռան երկու ժանդարմ. կանգ առայ և նայում էի միամտաբար։ Նոյն այն միջոցին, երբ կառքից իջաւ բանտային շորերի մէջ փաթաթուած մի երիտասարդ՝ ահաբեկ դէմքով, ժանդարմը մի ձեռքով նրան բռնած, միւսը ինձ ուղղելով, գոչեց. „Հեռո՛ւ, ի՞նչ էք կանգնել“... Երբ մի վայրկեանից յետոյ ես աչքերս նորից դարձրի, այլևս ուրիշ ոչինչ չկար, բացի փակ դուռը, անդայ

կառապանը, որ փ ա փ ա խ ը հանած գլուխն էր քորում և քիչ վերև՝ փառաւոր ցուցանակը՝ Ժ ա ն դ ա ր մ ը ս կ օ է պ ր ա վ լ է ն ի է...

Եւ ամէն անգամ, երբ անց եմ կենում Պետրօպավլովսկի մօտով, միշտ յիշում եմ ահաբեկ երիտասարդը, այդ կենդանի մարմնացումը ա հ ա բ ե կ ա զ ա տ ու թ ե ա ն, գլխաքոր կառապանը, այդ դժբախտ մարմնացումը տ գ է տ ա մ բ ո խ ի և փառաւոր ցուցանակը, այդ ինքնավստահ նշանակը անսանձ մ ի ա պ ե տ ու թ ե ա ն և մի ձայն, որ հնչում է անդադար. հեռո՛ւ, հեռո՛ւ...

Հանգիստ էր Կովկասը. չունէր նա իր „մայիսի մէկը“ և ոչ էլ մասնակցութիւն արքայասպան դաւադրութիւններին: Հոսում էր, այո՛, շատ տեղեր արիւնը մարդկային, բայց դա կամ կովկասեան լեռների բարձր ծերպերում, ուր խիզախ լեռնականը կուրծք էր տալիս բնատուր ազատութեան համար և կամ մահմէդական սահմանների վրայ, ուր ռուս զինուորականը արիւն էր տալիս „յանուն քրիստոնէութեան“: Սակայն այդ շրջանը անցաւ. պատերազմները դադարեցին, երկգլխեան արծիւը տնկուեց սահմանների վրայ, և ահա սկսուեց երկրորդ պատերազմը, բ ի ւ ր օ կ ր ա տ ի ա յ ի պատերազմը, իր նոր զինուորներով—ոստիկաններ, բանտապետներ, լրտեսներ, ժանդարմներ, աւելի ծանր և աւելի երկիւղալի, թէև առանց հրացանի:

Կովկասի համար, կամ աւելի ճիշդ, հայերի համար ութսունական թուերից է սկսւում այդ դժբախտ շրջանը: Ալէքսանդր III-ի տխուր թագաւորութիւնը ուժ տուեց, սրբագործեց արդէն այստեղ և այնտեղ գոյութիւն ունեցող չարամիտ ծրագիրները և այդ օրուանից սկսուեցաւ բանտապետների և ժանդարմների միահեծան թագաւորութիւնը:

Հազարներով են դրանք. միլիոններ են կլանում, ծծում են ժողովրդի գրպանը և մարդկային միտքը, ինչպէս անկուշտ տզրուկներ և ուրեմն պարտաւոր ապացուցանելու, որ անխուսափելի է իրենց գոյութիւնը, ինչպէս և առանց իրենց՝ խախուտ՝ պետութեան գոյութիւնը:

Ահա թէ ինչու ամենաբարեխիղճ, սառնասիրտ և խոր ուսումնասիրութիւնը եղած փաստերի՝ մի բան է միայն ապացուցանում, որ հարիւրից իննսունհինգ դէպքում ինքը ժանդարմը, ոստիկանութիւնն է, որ ստեղծեց „պատմութիւններ“, քաղաքական „շարժումներ“ և ոչ թէ կ ե ա ն ք ը, որ տարաբախտաբար այնքան լճացած, միապաղաղ և այնքա՛ն կայուն է այս գոսացած երկրում...

Փ ա ս տ ե ր:

Խաղաղ էր Երևանը, ինչպէս ինքը Արարատ, որի հովանու տակ նա ապրում է այսքան դարեր: Մարդիկ իրենց գործին էին գնում, խօսում այն՝ ինչ որ թոյլ էր տուած և կարդում այն՝ ինչ ցենզօրն էր հաւանել. բայց ահա մի ժանդարմ, սիրահար արկածների, և Ֆրէյգանկ, տենչացող աստիճանների, ստեղծագործեցին „հայկական գործը“ և կազմեցին ցուցակ այն մարդոց, որոնց ներկայութիւնը, իրենց կարծիքով, վտանգաւոր էր Երևանում: Ամէն բան կար այդ ցուցակում. և՛ վարժուհի՝ Գայանէ Մատակեան, և փաստաբան՝ Ջալալեան, և կալուածատէր՝ Եղիազարեան, և նօտար՝ Վարդանեան, և ծառայող՝ Տէր Զաքարեան, և իրաւագէտ՝ Մատակեան, և վաճառական, ո՞ր մէկի անունը տանք... Հարկաւոր էր սակայն մի ուէ առիթ: Եւ ահա մի մութ գիշեր, այնքան յարմար գողերի և լրտեսների համար, ժանդարմական վարձու գործակալներից մէկը, ծածուկ, իհարկէ, մի թուղթ նետեց քաղաքացիներից մէկի տան ներքնայարկը... Միւս առաւօտ սկսուեց ամենախիստ խուզարկութիւն այդ տան մէջ: Խուզարկողները քաջ գիտէին թէ ինչ են փնտռում—այն թուղթը, որ պարունակում էր „հայկական յեղափոխական շարժման“ մի ծրագիր և անունների մի ամբողջ ցանկ: Եւ դա եղաւ կասկածների մի հիմնաքար, որին յաջորդեցին բանտարկութիւններ, աքսոր, որ չ՝անցաւ առանց մահի, և անվերջ կասկածներ այդ զոհ-քաղաքում:

Ծայրը բացուեց...

Ամենատես ժանդարմները գտան, որ Երևանից նամակ է գրուած Թիֆլիս, հետն էլ մի գումար, ոչ իհարկէ, կէս միլիօն, անհրաժեշտ մի քաղաքական շարժման համար և ոչ նոյնիսկ 65 հազար, անհրաժեշտ ծախք մի խմբի զինաւորութեան, այլ սոսկ 65 բուբլի, այն էլ բարեգործական նպատակով: Բայց և այնպէս Թիֆլիսում էլ ժանդարմները սկսեցին խուզարկութիւններ: Եւ սա եղաւ սկիզբը ուրիշ խուզարկութիւնների, որոնք մինչև այժմ էլ չեն դադարում այդ քաղաքում:

1887 թիւն էր. ամբողջ վրաց հասարակութիւնը սգաւոր, խոցը սրտումը հետևում էր մի տխուր դագաղի, որի մէջ հանգստանում էր պատկառելի հայրենասէրը, զոհ ողբերգական մի մահի, ստոր սպանութեան: Դիմիտրի Կիպիանին էր դա, աքսորուած իր սիրած Վրաստանից մի պարզ ճշմարտութեան համար, որ նա համարձակուեց ասել Թիֆլիսի ռուս էքզարխին, իբրև արձագանք վրացիական արդար ցասման: Նա իր աքսորավայրից Պետերբուրգ էր ուզում գնալ բողոք տալու և այդ անախորժ բողոքը լռեցնելու նպատակով բարոյք համարեցին նրան լռեցնելու—մի գիշեր նրան սպանած գտան իր սենեակում՝ գաղտնի ճանկերով... Եւ երբ տխուր գնացքը անցնում էր Գօլովինսկի Պրոսպէկտով, ոստիկանութիւնը յարմար առիթ գտաւ դարձեալ պատմութիւն ստեղծելու: Նա պահանջեց դէպի այլ փողոց դարձնել յուղարկաւորութիւնը, որ նա համարում էր ցոյց կառավարութեան դէմ: Ոստիկանութեան սրերի դէմ իշխանների սրեր մերկացան. հազիւ դժբախտ դագաղը ազատ մնաց անմեղ արիւնով ներկուելուց: Ոստիկանութիւնը տեղի տուեց, բայց ժանդարմների վարչութիւնը ստեղծեց մի ամբողջ գործ, վրացիական շարժման մի ահագին պատմութիւն, թղթերի մի ամբողջ արխիվ...

Վրացիներից աւելի դժբախտ եղան հայերը:

1892 թուին, երբ նոյն Գօլովինսկի պրոսպէկտով անցնում էր Գրիգոր Արծրունու դագաղը, շրջապատուած յիսուն հազար ժողովրդով՝ վշտաբեկ և յուզուած. Թիֆլիսի ոստիկանութիւնը գտնելով հ ա կ ա կ ա ռ ա վ ա ր է ա կ ա ն այդ հանդիսաւոր գնացքը, փորձեց այլ կողմ դարձնել ժողովրդական ալիքները,—սուրը ցցուեց խաչվառի դէմ, ժանդարմի սառը դէմքը՝ այլայլուած ամբոխի դէմ... Եւ եթէ „Փառքի տաճարի“ սալայատակները չներկուեցին մարդկային արիւնով, այդ այն պատճառով միայն, որ զինուորական ուժը չդիմացաւ ժողովրդի գրոհին...

Եւ միւս օրը, երբ ամբողջ քաղաքը գեռ սուգի մէջ էր մեծ կորստի պատճառով, ձերբակալութիւնները սկսուեցին: Մի քանի ժամւայ մէջ արդէն դէպի բանտ և դէպի պօլիցիական բաժիններն էին քշում ամէն դասակարգի մարդիկ, իբրև դրդիչներ „հայկական շարժման“: Եւ եթէ բանտարկեալների թիւը մնաց մօտ 25-ի վրայ և

100-ի չհասաւ, այդ շնորհիւ միայն խաղաղասէր կառավարչապետ Շերեմետեվի, որ անձամբ միջամտեց Պետերբուրգ։ Ժանդարմների վարչութեան մէջ այդ դէպքը այնուամենայնիւ աւելցրեց մի նոր գլուխ „հայկական գործին“, թէև չկար հարիւրերորդ մասն անգամ այն ցնորամիտ ենթադրութիւնների, որոնցով բռնուած էր այդ հիմնարկութիւնը։

Այդ դէպքից տասը օր միայն անցած, ոստիկանութիւնը ստեղծեց „Ջրօրհնէքի ապստամբութեան“ պատմութիւնը, այնքա՛ն ողբերգական սկզբում, որքա՛ն զաւեշտական վերջում. ապա հայ զինուորների „ապստամբութիւնը“, որ բարեբախտաբար դուրս չեկաւ զինուորական շտաբի պատերից և մնաց անյայտ հայ հասարակութեան։ Յետոյ, քիչ անցած, հանդէս եկաւ Թիֆլիսի Թիւրքաց հիւպատոսի սպանութեան փորձը հայերի ձեռքով, կատարելապէս անծանօթ հայերին, բայց այնքան ծանօթ ժանդարմների վարչութեան...

Իսկ Էջմիածնի՞ դէպքերը։ Մի երեկոյ—1893 թ-ին էր այդ—երբ վանականները վերջացրած միապաղաղ աղօթքը, վայելում էին բամբասանքի սրտագրաւ ժամերը, յանկարծ զինուորները շրջապատեցին վանքի մուտքերը. անկիւններում փայլեցին սուիններ. խուցերի առաջ համազգեստներ, և երկիւղաբեր խստութեան մէջ կատարուեցին ձերբակալութիւններ։ Ո՞վքեր էին. երկու եպիսկոպոս՝ Սուքիաս և Ներսէս, յայտնի իրենց տիրասիրութեամբ։ Մեծ աղմուկ, իրարանցում ամբողջ հայ հասարակութեան մէջ, հազար ու մի ենթադրութիւններ, լուրեր նոյնիսկ, որ հայոց կրօնականների կենտրոնը լիքն է զէնքերով։ Եւ այդ բոլորից յետոյ, դեռ տարին չլրացած, երկու եպիսկոպոսները յետ բերուեցին աքսորից և իբրև վարձատրութիւն՝ մէկը արդէն թեմական առաջնորդ է Բեսարաբիա, կայսերական հաւանութեամբ, իսկ միւսը պատրաստւում է լինել Թիֆլիսի առաջնորդ, նոյնպէս բարձրագոյն հաւանութեամբ։ Եւ այժմ կաբինէտի խորքերում գաղտնի տեղեկագրեր գրող պաշտօնեան, քթի տակ մրմնջում է անկասկած. „Արժէ՞ր միթէ“...

Սակայն այդ խրատը բաւական չեղաւ. երկու տարի յետոյ աքսորուեցին երկու վարդապետներ՝ Վահան և Նահապետ. և քիչ յետոյ Խորէն եպիսկոպոս Ստեփանէն էր, որ փականք ստացաւ իր հռետորական բերանին, լոկ այն պատճառով, որ կարողացաւ իր ուժգին խօսքերով ցնցել Բագուի հարուստ դասակարգը, համոզելով նէրներ տալ յօգուտ հայկական սեմինարիայի, որ դեռ 50-ական թուականներից պիտի բացւէր Բագուի թեմում, բայց որը չէ բացւում մինչև այսօր... Յօգուտ դպրոցի եղած հրաւէրի մէջ ժանդարմային վարչութիւնը էլի նշմարեց պրոպագանդ, զէնք, ապստամբութիւն և ճերմակահեր քարոզիչը այս անգամ էլ ստիպւեց կիսակատար թողնել գործը և քաշւել մենաստան։ Եւ 1897-ին, երբ կառավարութիւնը անցագիր չէր տալիս նրան՝ անցնելու Պարսկաստան առաջնորդի պաշտօնով, աներկիւղ եպիսկոպոսը կառավարչապետին ներկայացաւ իմանալու իր յանցանքը։ Իշխան Գոլիցին, յաճախ դատարկութեան միայն յատուկ խորհրդաւորութեամբ՝ պատասխանեց. „Բագուի ձեր գործունէութեան մասին աննպաստ տեղեկութիւններ կան... Պարսկաստան կարող էք գնալ, միայն մի պայմանով, որ այլևս յետ չգա՛ք“։ Եւ այդ աննպաստ տեղեկութիւնների հեղինակը դարձեալ ոստիկանութիւնն էր, իհարկէ, որ դպրոցական հարցը գաղտնի հարցերի վերածեց։

Այդ „աննպաստ կարծիքները“ այլևս դարձան ընդհանուր, առօրեայ, սովորական այն օրից, երբ հայկական խլրտումների լուրերը սահմանի այն կողմից եղան աւելի յաճախ, աւելի աղմկայոյզ։ Ամէն մի հայ, որ քնած չէր, համարեց վտանգաւոր։ Բաւական էր մի խօսք, մի ակնարկ, մի փոքրիկ բողոք, մի թեթև համակրութիւն, որ մարդ համարւէր մասնակից „հայկական գործին“, արժանի խուզարկուելու, արժանի բանտի ու աքսորի...

Ունայնաքան չլինելու համար պատեհ եմ համարում հասարակութեան աչքի առաջ դնել մի հետաքրքրական վաւերագիր, որի իսկականը գտնւում է իմ ձեռքի տակ։ Դա մի գաղտնի ցուցակ է, կազմուած Թիֆլիսի ժանդարմների վարչութեան գլխաւորի ձեռքով, ռուսերէն։

Կարևոր է իմանալ, ի՞նչպէս ձեռք բերուեց այդ գաղտնիքը։ 1895 թուականին մի հայ քաղաքական բանտարկեալ, ազատուելուց յետոյ, երբ յետ է ստանում իր ձերբակալուած գրքերը, մի օր իր գիրքը թերթելիս՝ գտնում է նրա մէջ այդ ցուցակը, որը, կասկած չկայ, ժանդարմական պաշտօնեան, մոռացմամբ կամ շտապելով, թողել է գրքի մէջ, որի երեսները նա, երևի, ուշադրութեամբ քննում էր՝ գաղտնի մակագրութիւններ գտնելու նպատակով։ Երկար ժամանակ այդ վաւերագիրը իր մոտ թագցնելուց յետոյ, նորերս, նա մի վստահելի ծանօթի միջոցով ուղարկել է „Դրօշակի“ խմբագրութեան, խնդրելով հասցնել „Կովկասեան խաբրիկների“ հեղինակին, „դրանից ըստ արժանւոյն օգտուելու համար“։ Շնորհակալութեամբ օգտւում եմ, որովհետև դա մէկ փառաւոր ապացոյց է այն ճշմարտութեան, որ յայտնուեցաւ վերև։

Ահա այդ ցուցակի բառացի թարգմանութիւնը *)։

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԱԳԻՏԱՏՈՐՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՄՈՏ ԿԱՐԵԼԻ Է, ՅՕԳՈՒՏ ԴՈՐԾԻ ՊԱՐԶՄԱՆ, ԿԱՏԱՐԵԼ ՄԻԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգանուններ. — Կոչում եւ զբաղմունք. Բնակատեղի

1. Ալէքսանդր Ստեփանեան (Սանդրօ) դրամափոխ, Բալշայա Կրիվայա 17 (5-րդ ուշաստ.)։
2. Ալէքսանդր Մովսէսեան (Շիրվանզադէ) „Աղբիւր-Տարազի“ խմբագիր. գնացել է Ռուսիա։
3. Արամ Խարազեան, քաղաք. վարչութեան հաշուապահ, Օրբէլեանովսկ. 22, սեփական տուն։
4. Խաչատուր Մալումեան, „Մշակի„ աշխատակից, “Մշակի“ խմբագրատուն, Բազարնայա 11։
5. Տէր Մարկոսեան „Մշակի“ աշխատակից, Մալայա-Բէդխայինսկայա տ. Եվանգուլովի, 16։

*) Ցանկալի է, որ „Դրօշակի“ խմբագրութիւնը լուսանկարէր այդ վաւերագիրը, որ մի մեծադիր թերթ է չորս երեսից բաղկացած, որպէս զի կարելի լինի հրատարակել ամենայն ճշտութեամբ։

6. Սիմէօն Զավարեան, ծառայում է ֆիլօքսէրիայի խմբում, Լաբօրատօրնայա, տ. Ստատկովսկու։
7. Նիկողայոս Մատինեան, ֆրանսիական հիւպատոսարանի թարգման, Լաբօրատօրնայա։
8. Աշոտ Խումարեան, գրաշար, Մեշչանսկայա 5 (5-րդ ուչ.)։
9. Յովհաննէս Աղամիրզեան, Առևտրական բանկի հաշուապահ։
10. Յարութիւն Միրզօեանց, դերձակ, (արձակուած) հնչակիստ, Ջիգրաշէնսկ. 1, խանութ 18։
11. Խաչատուր Վարդանեան, առանց որոշ պարապմունքի, Ախալքալաքի բնակիչ։
12. Յոլակ Տէր Սիմոնեանց, հիւսն, Յ. Միրզօեանցի խանութում (գիշեր-ցերեկ)։
13. Յակոբ Յակոբեան, ծառայող „Ռոսսիա" ապահով. ընկերութեան (այստեղ բաց ինք թողնում հինգ խօսք՝ կատարելապէս անյարմար տպագրութեան համար). հասցէն իմանալ չեղաւ։
14. Արտաշէս Սահակեան, Ջալալօղլի գիւղում (Կամենկա)։
15. Օհաննէս, մշակ, ալիւրի պահեստ Թամամշեվի քարվանսարայի տակը, Պուշկինսկ. (գիշեր-ցերեկ)
16. Արշակ Թադէոսեան, ծառայող ինժինէրային դիստանցիայում, Բէդխայինսկայա 1, սեփական տուն, ճանապարհորդում է (դրօշակիստ)։
17. Ալէքսանդր Թադէոսեան, Թիֆլիզում չէ, Մոսկվա։
18. Յակոբ Թադէոսեան, ծառայում է Ներսիսեան դպրոցում, Բէրուտովսկայա 22, սեփ. տուն։
19. Երեմ Խանտամեան, կանդիտէր, Պեսկովսկայա 4։
20. Ղազարոս Աղայեան, Նօվօ-արսէնալնայա 13։
21. Արամ Զմշկեան, հաշուապահ Հարբաբչէվի խանութում, Բազազխանա։
22. Արաս խանեան, խմբագիր „Մուրճ" լրագրի, խմբագրատուն „Մուրճի"։

Յոլակ Տէր Սիմոնեանց գնել է զէնք եւ հասցրել Ա. Խարազեանին (նրա մօտ պահւում են զէնք եւ պատրոններ բէրտանկա)։
Սովսէսեան Մարգար, յանձնելու Նիկօին. այս վաղ էր։
Մարտիրոսեանը ունի պահեստ Աբովեանի տունը։

Յուլիս 29.

Եզնիկ Իգիթեանց, ծառայում է „Արձագանքի" խմբագրատան, հնչակիստ, թրքահպատակ, կարծեօք առանց անցագրի. Թիւրքիայում մարդ է սպանել։ Խմբագրատանը լինում է ժամը 2։
Սարգիս Խանոյեան, Բալշայա Կրիվայա 15։
Աբգար Յովհաննիսեան, իրաւասու դումայի, Բալշայա Կրիվայա, տ. Խանկալամօվի 1։
Դ. Ս. Արղութեան, հնչակիստ։
Սէրգէյ Արգուտինսկի, պօրուչիկ 16-րդ Գրէն. Մինգրել. գնդի։

Որտե՞ղ էր առաջ ապրում Ալէքսանդր Միխայլով Յակոբեանց։
Որտեղ է ապրում Օրթաճալայի ճաշի թաւադա Գերասիմ Հաճի Մամուդեան (հնչակիստ)։
Որտեղ է ապրում Մուրադեան թաւադա Օրթաճալում։
Որտեղ են ապրում Ալէքսանդր Հաճի-փարուխեան, Եզօր Հաճի-փարուխեան (նրա եղբայրը)։
Նազարէթը եկաւ Թիւրքիայից (հասարակ մարդ, հնչակիստ)։

Ալէքսանդր Լըվով Ղուկասեան։
Ալէքսանդր Կարախանեան (զէնք գնող), Լաբօրատօրնայա 37։
Սարգիս Մարուքեանց, գործակատար Էնֆիէջեանի խանութ. Դավիտովսկի փող. (հնչակիստ)։
Մեծատուրեան, Կօրգանովի շերամատանը, Ավչալսկայա փողոց։ Մեծ քանակութեամբ հայ լրագիրներ և բրօշիւրներ։

Պատեհ էր խուզարկութեան ենթարկել բժիշկ Նաւասարդեանին, „Արձագանքի" խմբագիր Աբգար Յովհաննիսեանին, բայց ի նկատի ունենալով նրանց հասարակական դիրքը, այլեւ նրանց գործելու չափազանց զգոյշ եղանակը (ցուցմունքներ եւ խորհուրդներ տալիս են միայն խօսքով), ենթադրում եմ, որ նպատակայարմար է նրանց կանչել դիւանատուն եւ անել նրանց ներշնչում եւ նախազգուշութիւններ։

Արդիւնքը այդ գաղտնի դօկումէնտի, ինչպէս և դրա նման շատերի, կազմած ենթադրաբար, էժանագին լրտեսների ցուցմունքներով կամ ազգայնական ատելութեան մաղձով, եղան կատաղի խուզարկութիւններ, բանտարկութիւններ, աքսոր, որոնց ամբողջ սարսափը դուք կը տեսնէք, երբ ես կանցնեմ իմ նկարագրութեան մէկ ուրիշ գլխին — բանտերին։

Այս հալածասէր քաղաքականութեան այժմէութեան նորագոյն նշաններից մէկն էլ այն է, որ նա հայկական շրջաններից անցնում է դէպի ուրիշ շրջաններ, դէպի վրացականը, մի քիչ յետոյ էլ դէպի մահմէտականները անցնելու ձգտումով։ Նշանը արդէն տրուած է. մայիսի 1-ին Թիֆլիսի դէմօկրատ փողոցներից մէկում երևաց կարմիր դրօշակը, շրջապատուած համարեայ բոլոր ազգերի ներկայացուցիչներով, իբրև հակառնապետական բողոքի մի նոր ճանապարհ, որ աւետում է աշխատաւորին այնքան գեղեցիկ ապագայ։ Կառավարութիւնը սոսկաց։ Դեռ հաշիւը չվերջացրած ազգայնական շարժումի հետ, նա իր թիկունքին նկատում է մի այլ նոր շարժում, որ սպառնում է չքացնել իր փայփայած պօլիտիկայի արդիւնքը—ազգերի ներքին թշնամութիւնը։ Ահա թէ ինչու Պետերբուրգից ուղարկուած հրամանների համաձայն սկսեցին խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ վրացիների մէջ, որոնք դեռ երէկ համարւում էին այնքան „բարեմիտ" և այնքան „հաւատարիմ", որոնք դեռ երէկ և գուցէ այսօր „բարձրագիր" չինովնիկների կողմից առաջադրւում են հայերին իբրև օրինակ...

Տարաբախտաբար Վրաստանի միացման հարիւրամեակը ցրեց ամպերը, պատռեց քաղաքական դիմակը։ Կառա-

վարութեան ձեռքով կազմակերպված այդ հանդէսները, փուչ, ինչպէս պղպձակ, պաշտօնական շրջանակից դուրս չեկան, վրաց ինտելիգենցիան մնաց ապուշ կտրած, լուռ վիշտը սրտի մէջ, իսկ ժողովուրդը անմասն, բերանաբաց... Եւ իբրև ապօթէօզ այդ տխուր տեսարանի, անպատուաբեր նոյնիսկ ոչ-ազատամիտ Ռուսաստանի պատմական դերին, պ ա շ ա ր մ ա ն դ ր ո ւ թ ի ւ ն ն էր, որ յայտարարուեց կովկասեան մայրաքաղաքում, հէնց տօնական օրերին, միացած լրտեսների նորագոյն բանակի՝ Դ վ օ ր ն ի կ ն ե ր ի կազմի հետ, իբրև անժխտելի ապացոյց այն բուռն երկիւղի, որ զգում է ուխտադրուժ կառավարութիւնը 100 տարի անցնելուց յետոյ իսկ այն քաղաքում, ուր կանգնած է իշխան Վ.օրոնցովի արձանը և որի փողոցներով երբեմն անցնում էր հայկական զօրագունդը, իբրև առաջապահ ռուսաց բանակի...

Եւ եթէ ձեզ, վրացի ընկերներ, կը հարցնեն, թէ որն էր հարիւրամեայ տիրապետութեան հանդէսի ամենամեծ ակտը, պատասխանեցէք.

— Պ ա շ ա ր մ ա ն դ ր ո ւ թ ի ւ ն ը։

Իսկ եթէ մի օր եւրոպացի ճանապարհորդը Թիֆլիս գալով կը դիմի ձեզ, յուսահատ թիֆլիսեցի, իմանալու, թէ որն է ձեր ամենամեծ շնորհը ստացած 20-րդ դարի շէմքին, իշխան Գոլիցինից, մրմնջացէք՝

— Դ վ օ ր ն ի կ ն ե ր ը...

Հերիք է, գնա՛նք բանտերը...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՊՐՕՊԱԳԱՆԴԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

(ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ)

Շվէյցարիա, 20 դեկտեմբեր

Ժամանակակից լեհական պրոպագանդը հայերիս համար շատ ուսանելի կողմեր ունի. հիմնուած լեհական աղբիւրների վրայ՝ ես կը ներկայացնեմ համառօտ կերպով այդ պրոպագանդի ընդհանուր պատկերը, նրա ամենակարեւոր գործօնները։

Լեհերի դիմադրութիւնը չի սահմանափակւում միմիայն քաղաքական զօրեղ պայքարով, որ արտայայտւում է «ստորերկրեայ» գործունէութեան մէջ։ Ազգայնական պայքարի գլխաւոր գործօնը, կարելի է ասել, ը ն տ ա ն ի ք ն է (ինչ որ ռուս կառավարութիւնն էլ լաւ է հասկացել)։ Ընտանիքի միջոցով է, որ պահպանւում են ազգային լեզուն ու յիշատակները։ Ընտանիքի մէջ էլ մայրն է, որ խաղում է կարեւորագոյն դերը։ Ես անձամբ լսել եմ, ասում է իմ մի լեհ բարեկամս, ինչպէս մի ռուս սպայ փողոցում ցոյց տալով իր զաւակներով շրջապատած մի լեհուհի, ասում էր. «Ա՜խ, այս անիծեալ լեհ մայրերը. եթէ սրանք չլինէին, դուք վաղուց ցարի հաւատարիմ ծառաները կը լինէիք»։ Բնականաբար ազգային ոգու այդպիսի նախանձախնդրութիւնից առաջանում են հետեւանքներ, որոնք ուժեղ կերպով անդրադառնում են լեհ-ռուսական յարաբերութիւնների վրայ։ Այդպէս, լեհը առհասարակ խորշում է, կարելոյն չափ, ռուսաց լեզուի գործածութիւնից եւ աշխատում է մաքուր պահել լեհական լեզուն։

Ի նկատի ունենալով, որ դպրոցական դաստիարակութիւնը ռուսական է եւ հակազգային, ընտանիքը պէտք է զգում հակակշռելու երեխաների մատաղ հոգու վրայ արած վտանգաւոր եւ ընկճող ազդեցութիւնը։ Դրա համար ընտանիքներում մատաղ սերնդին աւանդում են լեհ լեզուն, պատմութիւնը եւ գրականութիւնը. զարգացնում են նրանց մէջ անձնազոհութեան զգացմունքը եւ ճիգ են թափում խեղդել նրանց մէջ ստրկութեան, կոյր հնազանդութեան ոգին, որով աշխատում են խմորել նրանց դպրոցում։ Ընտանիքի այս ազդեցութիւնը ընդհանրապէս աւելի ուժեղ է, քան դպրոցինը եւ այսպիսով պատանի գիմնազիստները ընտելանում են մատաղ հասակից աչքաբաց լինել, կռիւ մղել եւ կազմակերպւել։ Կարելի է տեսնել 14-15 տարեկան պատանիներ, որոնք ընկերութիւններ են կազմում, հանգանակութիւն են անում իրենց մէջ՝ արգելված գրքեր գնելու եւ կարդալու համար։ Ազգային համերաշխութեան ոգին զարգանում է նոյնպէս ամենամատաղահաս աշակերտների մէջ։

Անցեալ տարի դրա մի շատ աչքի ընկնող օրինակը տեսանք։ Մի ուսանող սպանել էր Վարշաւայի բերդի մի պահնորդից։ Նրա թազման հանդիսին գիմնազիօնի մի աշակերտ դամբանական խօսեց հանգուցեալի վրայ։ Կառավարութիւնը կամեցաւ իմանալ նրա անունը։ Հարցաքննեցին բոլոր աշակերտներին (թւով երեք հարիւր)։ սպառնացին եւ խոստումներ արին, բայց ոչինչ չկարողացան իմանալ. չգտնուեցաւ եւ ոչ մինը, որ իր ընկերոջը մատնէր։ Մինչեւ անգամ երբ լեհացին ռուսի հետ յարաբերութիւն է ունենում (ի բաց առեալ կառավարութեան պաշտօնեաները) նա աւելի սիրով ֆրանսերէն է խօսում, քան թէ ռուսերէն, այն ատելութեան խորշուս է վերջինից։ Բացի դրանից աշխատում են որչափ կարելի է քիչ յարաբերութիւն ունենալ կառավարութեան զանազան ներկայացուցիչների հետ, ինչպէս օրինակ սպաներն են։ Ռուսի հետ ամուսնացողը նմանապէս շատ անյարգի է։

Կուի մի փաքտոր եւս կայ. դա կրօնն է, մանաւանդ գիւղական դասի մէջ։ Շատ ցաւալի է, որ կրօնը կղերի ձեռքում առաջադիմութեան համար մի արգելք է, որովհետեւ ինքնըստինքեան նա մի լաւ զէնք է ազգայնական պայքարի մէջ։ Եւ իրաւ որ գիւղերում բարոյական ազդեցութիւնը քահանայի ձեռքին է. նա է, որ դիմադրում է օրթոդոքս պօպի ոտնձգութիւններին. նա է, որ լեհացնում է գիւղացիներին, որոնք ռուսանում են զինուորական ծառայութեան մէջ. նա է, որ արգելում է օրթոդոքսների հետ ամուսնանալ։ Կրօնից զրկել գիւղացուն՝ նշանակում է ուղղափառ պօպին յանձնել նրան, որ միապետութեան ներկայացուցիչ է։ Աչխատելով կաթոլիկ կրօնի պահպանման համար քահանան պաշտպանում է ռամիկ դասակարգի մէջ լեհական ազգայնութիւնը, որովհետեւ ռամկի համար կրօնական եւ ազգայնական զգացմունքը նոյնանում են։

Մրցումը գոյութիւն ունի նաեւ տնտեսական հողի վրայ։ Մի ազգի հարստութիւնը նրա ուժի կարեւոր գործօններից մէկն է։ Այս պատճառով ինտելիգենցիան, որ հակում է ազգային կուլտուրայի վրայ, աշխատում է նոյնպէս երկրի ինդուստրիայի եւ վաճառականութեան զարգացման համար։ Կազմակերպւում են կրեդիտի բանկեր՝ երկրագործութեան, լեհական գործարանական ձեռնարկներին նպաստելու համար։ Ստեղծւում են նմանապէս ընկերութիւններ՝ հասարակական առողջապահութեան վրայ հսկելու նպատակով։ Ուրիշ ընկերութիւններ նպաստում են հաղորդակցութեան ճանապարհների ընդարձակման, երկրի վաճառականութեան ուժ են տալիս։

Վերջապէս ամենաաւելի կռիւը մղւում է բուն քաղաքական ասպարիզում։ Այստեղ գործում են երկու մեծ կուսակցութիւններ. 1) Դեմոկրատ-նացիոնալիստ եւ 2) Սոցիալիստ-նացիոնալիստ կուսակցութիւնը։

Առաջինի նպատակն է ազգային անկախութեան նաւաճումն։ Սկզբունքով՝ նա թշնամի է սոցիալիստ կուսակցութեան, իսկ կեանքի մէջ նա նրան յաճախ ձեռք է մեկնում։ Կուսակցութեան կեդրոնական կոմիտէն իրեն համարում է ազգային կառավարութեան մարմնացումն։ Նրա կեդրոնատեղին եւ գանձը գտնւում են Զուիցերիայում։ Իւրաքանչիւր տարի նա որոշ թոշակ է յատկացնում Ռուսաստանից քշած կամ չունեւոր լեհ ուսանողներին, որոնք ուսանում են արտասահմանեան համալսարաններում։

Այս կուսակցութիւնը գործում է պրոպագանդի միջոցով, գաղտնի թերթեր է հրատարակում եւ տարածում երկրի մէջ։ Կուսակցութեան բուն նպատակն է կազմակերպել երկիրը այնպէս, որ նա պատրաստ լինի ապստամբելու պատեհ հանգամանքներում (ինչպէս օրինակ եւրոպական պատերազմի դէպքում)։

Սոցիալիստ-նացիոնալիստ կուսակցութիւնը նոյնպէս շատ որոշ պրոգրամ ունի։ Նա ձգտում է 1) Լեհաստանի անկախութեան եւ 2) սոցիալիստական կարգերի հաստատման։ Սկզբում այդ կուսակցութիւնը իր ծրագրի մէջ չունէր Լեհաստանի անկախութեան կէտը։ Բայց ժամանակի ընթացքում նա ստիպուեց յարմարուել կեանքի եւ միջավայրի պայմաններին, եւ իրեն գլխաւոր նպատակ դրեց քաղաքական ազատութիւն։ Լոնդոնում, որ կուսակցութեան կեդրոնատեղին է, հրատարակւում են կուսակցութեան օրգանը եւ զանազան գրքեր ու բրոշիւրներ, որոնք Ռուսաստան են տարւում գաղտագողի ճանապարհներով։ Բացի դրանից, գործարանական կենտրոններում կազմակերպւում են բազմաթիւ գաղտնի խմբեր, որոնք թերթեր են հրատարակում։ Վարշաւայում հրատարակւողը «Ռոբոտնիկն» է։ 1900-ին ռուսական ոստիկանութիւնը գրաւեց «Ռոբոտնիկ» թերթի մամուլը, բայց դա չխանգարեց թերթի հրատարակման. երկու օրից կրկին լոյս տեսաւ նոյն թերթը, ի մեծ զարմանս կառավարութեան. . .

Հարկ կա՞յ արդեօք պնդելու, որ Կովկասում հայ ազգայնութիւնը ռուսացման վտանգից ըստ կարելւոյն զերծ պահելու համար՝ մեզ անհրաժեշտ է շատ կէտերում հետեւել լեհերի օրինակին։ Ինչպէս տեսանք՝ նրանց պրոպագանդի մէջ վճռական դեր կատարողը գաղտնի գործունէութիւնն է։ «Նկանունէ» թերթի 1901 թ. № 26, 27-ում կարդում ենք հետեւեալը.

«Բանից դուրս է գալիս, որ գրագէտ գիւղացիների 50 տոկոսը (խօսքը Լեհաստանի գիւղացիների մասին է) իր գրագիտութիւնը պարտական է միմիայն գաղտնի ուսուցման, որ այնքան եռանդուն կերպով հալածում է ռուս կառավարութիւնը, բայց եւ այնպէս չի կարող արմատախիլ անել»։

Ազգային ինքնապահպանութեան համար մեզ ելիք պրոպագանդի գլխաւոր միջոցները մեզ մօտ եւս պիտի լինին՝ 1) ընտանիքը 2) մայրենի լեզուի գործածութիւնը 3) ըստ կարելւոյն ապահովումը գիւղական ազգաբնակութեան։ Այս վերջին կէտի վրայ կուզէինք փոքր ինչ ծանրանալ։ Ի նկատի ունենալով, որ մեր գիւղացին հեռանում է զրկւում է իր հողից եւ այդ հանգամանքը նպաստում է մեր գիւղերի դատարկուելուն, ուժեղացնելով հոսանքը դէպի քաղաքները՝ անհրաժեշտ է հայ բարեգործների ուշադրութիւնը հրաւիրել այս երեւոյթի վրայ, որովհետեւ այն ահագին գումարներից, որ այդ բարեգործները թողնում են զանազան քաղաքային հաստատութիւնների՝ հայ ազգաբնակութիւնը գրեթէ չի օգտւում, այլ զանազան նահանգապետներ իրենց քմահաճ տրամադրութեան նայելով, գործածում են ռուսական շահերն առաջ տանելու համար։ Այս մի կողմից։ Միւս կողմից մեր մամուլի մէջ յաճախ ձայներ են լսւում, թէ գիւղական դասակարգին պէտք է ծանօթացնել հողի մշակութեան նոր մեթոդների հետ։ Մի-չդեռ գիւղական ազգաբնակութեան թշւառութեան գլխաւոր պատճառը ոչ թէ նոր մեթոդներին անծանօթ լինելն է, այլ գլխաւորապէս հողի եւ ջրի պակասութիւնը։ Թող հայ բարեգործները հայ գիւղացուն տան հող եւ միջոցներ ջուր անցկացնելու համար անմշակ հողերի վրայ, որովհետեւ ջրի պակասութիւնն է պատճառը, որ արտերը երաշտից չորանում են եւ որով կոտրւում է հայ գեղջուկի մէջքը։ Այս միջոցը իր տեղում կը պահէր գիւղական ազգաբնակութիւնը եւ կը նպաստէր նրա աճման ու զարգացման—մի հանգամանք, որ ամենալաւ միջոցը կարող է համարւել ազգութիւնը պահպանելու համար։ Երեւանեան նահանգի մի քանի դիւղեր հողի պակասութեան պատճառով միայն՝ ընդունել են ռուսադաւանութիւն։ 4) Պրոպագանդ հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ։ 5) Կազմակերպել մասնաւոր հրատարակչական ընկերութիւններ ակցիոներական հիմունքների վրայ, դրագարաններ, դասախօսութիւններ, ժողովրդական թատրոն, շրջիկ ուսուցիչների խմբեր կազմել, որոնք գիւղից գիւղ անցնելով գրագիտութիւն տարածեն ժողովրդի մէջ։ 6) Մասնաւոր դպրոցներում եւ պրոֆեսիոնալ ուսումնարաններում (ինչպէս կար ու ձեւի դպրոցներն են), մանկական պարտէզներում եւ մասնաւոր շրջաններում ու յատուկ կազմուած խմբերում պարապել հայ լեզուով եւ պատմութեամբ եւ այլն։

Ուսանող Ա—ՆԴԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

X

XIX-րդ դարի վերջին տասնեակները ականատես եղան կարեւոր յեղաշրջման՝ Եւրոպայի քաղաքական աշխարհայեցութեան մէջ։ Տեղական անձուկ շրջանակներից դուրս գալով՝ մեծ պետութիւնները սկսեցին փնտրել լայն հորիզոններ, սկսեցին բաղձալ „համաշխարհային քաղաքականութեան“։ Կապիտալիզմը շատ էր ծաւալւել — նա կարօտում էր շահագործման նորանոր վայրերի։ Ապրանքային արդիւնագործութիւնը շատ էր ամբարել — պէտք էր որոնել սպառման շուկաներ։ Եւ ցամաքային պետութիւնները — Գերմանիան մասնաւորապէս — իրենց քաղաքական ծրագիրների մէջ խոշոր տառերով արձանագրեցին „Գ ա ղ ո ւ թ ա յ ի ն Քաղաքականութիւն“։ Եւ Weltpolitik-ը դարձաւ նշանաբան։

Մինչեւ 70-ական թւականները Անգլիան միակն էր մեծ պետութիւնների մէջ, որ ընդարձակ մտքով մղում էր գաղութային քաղաքականութիւն։ Տիրականօրէն իշխում էր նա ծովերի վրայ, տարածում էր ամէն տեղ, երկրագնդի բոլոր ծայրերում, ազատ, ինքնավար գաղութներ, որոնք բարգաւաճում էին անգլօ-սաքսօնների օրհնուած ոգեժիմի տակ։ Համաշխարհային շուկան գրեթէ ամբողջապէս նրան էր պատկանում, համաշխարհային առեւտուրը նրա մենաշնորհն էր։ Բրիտանական դրօշը խորհրդանշան էր ծովային զօրութեան և նա չունէր մրցակից։ Բայց ահա եւրոպական ցամաքի քարտէզը յեղաշրջուեց։ Հանդէս եկան նոր-նոր ուժեղ ազգերի, որոնք ազատուելով գոյութեան կուի տանջող մտահոգութիւնից, իրագործելով ազգային անկախութեան իրենց ծրագիրները՝ խիզախեցին նետուել համաշխարհային մրցման կրկէսը և իրենց ուժերը փորձել ծովերի միահեծան թագուհու հետ։ Գերմանիան ընդամէնը երկու տասնամեակի տարածութեան վրայ այնպիսի անսովոր թռիչքներ արաւ արդիւնաբերութեան ու առեւտրի աշխարհում, որ բոլոր ցամաքային ազգերը սկսեցին նախանձել, իսկ բրիտանական առիւծը, կարծէք, սթափւած Splendid isolation-ի անուշ երազներից՝ յանկարծ զարկեց ահակոչնակը և գերմանական մրցակցութեան վտանգն ազդարարեց Մեծ Բրիտանիայի քաղաքագէտներին։

Այնքան ազդու և ահաւոր էր Գերմանիայի կողմից սպառնացող վտանգը, որ նրա պատճառով առաջ եկաւ Անգլիայում և կամ, յամենայն դէպս, մեծապէս զօրացաւ մի ամբողջ հոսանք, որը թէպէտև սուր քննադատութիւնների առարկայ է այսօր, բայց միանգամայն բանաւոր ու արդարացի է բրիտանական շահերի պաշտպանութեան տեսակէտից։

Այդ հոսանքն է՝ Իմպերիալիզմ կամ Պանբրիտանիզմ։ Ինչպէս ամէն մի ուրիշ հոսանք, նա ևս ունի իր ծայրայեղութիւնները, իր ստուերային կողմերը։ Նա է, որ խրախուսում է այսօր քստմնելի, ըմբոստեցուցիչ պատերազմը երկու թզուկ հանրապետութիւնների դէմ։ Համաձարակ ախտի պէս նա թունաւորել է անգլօ-սաքսօնների բովանդակ երկիրը. անգամ ազատամիտ կուսակցութեան մէկ ճիւղը՝ յանձին Ռոզբէրիների՝ մոռանալով իր պանծալի տրադիցիաները՝ տալուում է շովինիզմի այդ հոսանքով և մի չնչին փոքրամասնութիւն, որ խիզախում է պաշտպան կանգնել դիւցազն բոյերներին, պահանջելով նրանց համար լիակատար անկախութիւն, որակւում է „Little Englanders„ հէգնական մականունով։

Գերմանիայի առաջընթացութիւնը գաղութային քաղաքականութեան ասպարէզում անվիճելի է և նրան վիճակւած է թերևս շատ ծանրակշիռ փոփոխութիւններ առաջացնել միջազգային յարաբերութիւնների մէջ։ Վիլհէլմ կայսրը, որ հոյակապ ծրագիրների սիրահար է և որ քանիցս հրապարակեց ի լուր աշխարհի փքուն, բայց նշանակալից ֆրազը՝ „մեր ապագան ջրերի վրայ է“— Վիլհէլմ կայսրը անձամբ քիչ չէ նպաստում գերմանական հմայքի աճման՝ հայրենիքից դուրս։

Անգլիայի հետ ծովերի վրայ մրցման բռնելով՝ նա միաժամանակ տենդային փութկոտութեամբ մղում է իր յատուկ „թիւրքական քաղաքականութիւնը“, որի նպատակն է գերման կայսրութեան ծաւալումը Բոսֆորի ափերից մինչև Պարսկական ծոցը։ Պանգերմանիզմի նիւրական երազն է այդ. պիտի իրագործւի՞ արդեօք. . . Բաղդադի երկաթուղային հսկայ նախագիծը մի խոշոր քայլ է դէպի այդ նպատակը։

Բայց տաճկական արևելքում Գերմանիան հանդիպում է աւելի հզօր մի ախոյեանի, որ վաղուց ի վեր սովորել է իր սեփականութիւնը համարել „հիւանդ մարդու“ ամբողջ ժառանգութիւնը։ Սլավոն ու Տէվտոն կը բռնւին, գուցէ, ահեղ մենամարտի. . . Գերման-ռուսական անտագոնիզմի խուլ ձայներն են հնչւում առայժմ, բայց այդ ձայները ոչ հեռու ապագայում կարող են փոխւել ահարկու փոթորիկների։

Գերմանիայի երևան գալը օսմանեան թատերաբեմում խիստ ծանրակշիռ մի հանգամանք է, որը չի կարող չանդրադառնալ նաև ռուս-թիւրքական յարաբերութիւնների վրայ։ Կան նոյնիսկ մարդիկ—և ոչ աննշան—որոնք մարգարէանում են, թէ այդ հանգամանքը կարող է մինչև իսկ որոշ մերձեցում առաջացնել երկու դարաւոր, անհաշտ ախոյեանների՝ Ռուսաստանի և Անգլիայի միջև. . . Ուշագրաւ են բրիտանական National Review-ի վերջերս հրատարակած (և կիսապաշտօնապէս ներշնչւած) յօդուածները, որոնք անգլօ-ռուսական համաձայնութեան գաղափարն են թելադրում մերձաւոր ու հեռաւոր Ասիայի վերաբերմամբ՝ փոխադարձ զիջումների խարիսխի վրայ,—մի համաձայնութիւն, որ յայտնապէս նպատակ կունենայ թումբ կանգնեցնել գերմանական արշաւանքի դէմ։ Յամենայն դէպս, Փոքր Ասիայում ստեղծւում է այսօր հակամարտ շահերի նոր ու կատաղի մրցակցութիւն և մօտիկ ապագան յղի է թերևս մեծամեծ անակնկալներով. . .

* * *

Մինչ եւրոպական պետութիւնները՝ իբրև հաւատարիմ թարգման բուրժուազական ինտերեսների՝ ձգտում են այդպիսով նորանոր հողեր նւաճել, թափանցել երկրագնդի հեռաւոր խորշերը և արեան հեղեղների գնով տարածել այնտեղ կապիտալիզմի յարաճուն բերքերը. մինչ ազգերի պաշտօնական ներկայացուցիչները յանուն իրենց կաստային շահերի՝ գիտակցաբար կամ ակամայ բորբոքում են անտագոնիզմը առանձին ազգերի միջև, նիւթում են ոճրագործ պատերազմներ, արատաւորում են մշտապէս քաղաքակրթութեան դրօշը—իրենք այդ ազգերը միշտ աւելի և աւելի լուսաւորւելով իրենց կացութեան վերաբերմամբ, միշտ աւելի ըմբռնելով հասարակական էւոլիւցիայի օրէնքները, տարուում են հետզհետէ այն փրկարար ու տարերային հոսանքով, որ առաջնորդում է դէպի մարդկայնութեան վերջնական յաղթանակը։

Բուրժուազական ախտաւոր սիստէմի տարկանոնութիւններից զզւած և իր վեհ, համաշխարհային առաքելութեանը գիտակից՝ աշխատաւոր ընդհանրութիւնը բոլոր երկրներում ստւար լեգիոններով սեղմւում, համախմբւում է ընկերվարական դրօշակի շուրջը և անդիմադրելի կերպով քարշում է իր ետևից հակառակորդ դասակարգի բոլոր ազնիւ, շիտակ ու արդարամիտ տարրերը, որոնց զգացումներին չափազանց նեղ է դալիս կապիտալիզմի աւետարանը։

Հզօր ու կազմակերպւած մամուլ, ընդարձակ, գիտական գրականութիւն, համաշխարհային, ներդաշնակ պրօպագանդ, լուրջ ու կորովի ներկայացուցչութիւն ազգային պատգամաւորական ժողովներում - ահա թէ ինչ է ներկայացնում սօցիալիզմը XX-րդ դարի արշալոյսին։ Եւ այդ ուժն է, որ այնքան անսովոր կենդանութիւն է ներշնչում պարլամենտներին ու հրապարակական ժողովներին, մերկացնելով անդադար „պաշտօնական“ ամէն տեսակ անիրաւութիւններ, որոտալով պատերազմների ու գաղութային քաղաքականութեան դէմ, պաշտպանելով բոլոր թշւառների ու հալածւածների դատը։

Բաժանւած թէօրիական խնդիրներում՝ սօցիալիզմը գործնականի մէջ ներկայացնում է ամբողջական, ներդաշնակ մի շարժում, որը միևնոյն ձայնն է հնչեցնում Եւրոպայում և Ամերիկայում, միևնոյն քննադատութիւնն է ուղղում բուրժուազական հասարակութեան դէմ, միևնոյն իդէալն է քարոզում և միևնոյն միջոցները դէպի իդէալի իրագործումը։ Քրիստոնէութեան առաջին դարերից ի վեր եւրոպական քաղաքակրթութիւնը չի տեսել նմանօրինակ հզօր ու համաշխարհային մի շարժում։ Եւ երբ ականատես էք լինում սօցիալիզմի միջազգային կոնգրէսներին, ուր ամենափոքրիկ, դեռ նոր թիւրքական դժոխքից ազատւած ազգերն անգամ իրենց պատշաճաւոր տեղն են գրաւում, երբ „Մարսէլիէզի“

կամ „Ինտերնացիոնալի“ մարտական շառաչը թնդացնում է հսկայ դահլիճի կամարները — ինչ որ թովիչ ու խորհրդաւոր բան էք զգում այդ սրբազան ոգևորութեան մէջ և ձեր աչքերի առջև աղօտ կերպով պատկերանում է ապագայի մշուշներում կորած, մարդկութեան առաքեալների հնուց երազած ճշմարիտ համամարդկային գերդաստանը...

Ընկերվարական շարժման այդ պրոգրէսսիվ ծաւալումը ունի՞ արդեօք իր տեղը այն գործօնների շարքում, որոնք պայմանաւորում են պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները, ուրեմն նաև տիեզերական քաղաքականութիւնը։ Անշուշտ։ „Կոմունիստական“ հսկայական դրաման, որ պատմեցինք մեր տեսութեան նախընթաց էջերում, մեծանշանակ ապացոյց է, որ քաղաքակրթուած մեծ պետութիւնները չեն կարող հաշուի չ՚առնել այդ ահարկու ուժը փոխադարձ ընդհարումների դէպքում։ Մի Գերմանիա, որքան և լինի նա հզօր ու պատկառելի՝ չի կարող, այնուամենայնիւ, թեթև սրտով պատերազմ յայտնել մի ուրիշ մեծ պետութեան, քանի որ նրա ներսում, որպէս մարմնացած սպառնալիք, կանգուն է միշտ սոցիալիստական միլիոնաւոր բանակը։ Արդէն Վիլհելմ կայսրին լուրջ մտահոգութիւն է պատճառում այն հանգամանքը, որ Հոհէնցոլլերների վեհաշուք մայրաքաղաքը գրեթէ ամբողջապէս սոցիալիզմի գիրկն է անցել։

Միևնոյն „ներքին տագնապների“ սարսափով համակուած են նաև միւս քաղաքակիրթ պետութիւնները։ Այդ է պատճառը՝ գուցէ գլխաւոր, էական պատճառը, որ նրանք բոլորն էլ խոյս են տալիս փոխադարձ ընդհարումներից, թէև միաժամանակ իւրաքանչիւրը նրանցից հետապնդում է հեռաւոր ու թոյլ զոհերի և պատրաստ է ամէն առթիւ յարձակուել այդպիսիների վրայ՝ իր գիշատիչ ախորժակներին յագուրդ տալու համար։ Այդ է պատճառը, որ եւրոպական դիւանագիտութիւնը ներկայումս այնքան հետաքրքիր է խաղաղութեան ու statu quo-ի թէ Բալկաններում, թէ օսմանեան Հայաստանում և թէ ուրիշ վայրերում։ Այդ „ներքին վտանգի“ նկատումներից էր մղած թերևս նաև ռուսաց վեհապետը, որ իր բռնապետական ցուրտ դիւանատնից յանկարծակի հրապարակ նետեց 19-րդ դարի ամենանշանաւոր գաղափարներից մէկը՝ „զինընկեցութեան“, „տիեզերական խաղաղութեան“ հրովարտակը...

—

Եզրակացնենք։ Մենք ուրուագծեցինք Եւրոպայի քաղաքական ու սոցիալական էվոլիւցիան յընթացս 19-րդ դարի։ Ամփոփենք այժմ մեր ասածները մի քանի խօսքով և տեսնենք, ինչ հրահանգներ կարող ենք քաղել մեզ համար այդ հակիրճ տեսութիւնից։ Մենք հետևեցինք ազգայնական-ազատագրական շարժումներին և ականատես եղանք ստրկացած մանր ու խոշոր երկրների վերածնութեան։ Բռնակալական սարսափների հետ միասին արձանագրեցինք ընդվզումի վսեմ խոյանքները, դիւցազնական պայքարի սրտառուչ էպիզոդները։

Մենք գծեցինք զուգընթացաբար սոցիալական մեծ շարժման ելևէջները, պրոլետարական դիւցազներգութեան արհաւիրալից պատմութիւնը և տեսանք, որ ամէն տեղ ըստ էութեան նման է պայքարը։ Թշնամին, դահիճը մէկ է — բռնութիւնը իր այլազան ձևերով, մէկ տեղ, միահեծան պետի, միւս տեղ՝ կապիտալի բռնութիւնը՝ մի այլ տեղ՝ երկուսը միասին։ Մէկ է և իդէալը, մէկ է դաւանանքի, կուլտի առարկան — Ժողովուրդը իր մաքուր բնազդումներով և իր անբաւ ցաւերով։ Նման է կուռողների հոգեբանութիւնը, նման են և կռիւի միջոցները։ Ազատ ու անվեհեր Հայդուկը Ցունաստանի և Վասպուրականի ձորերում, սարսափելի Կարբոնարին Ապենինների վրայ, „Առաքինութեան դաշնակիցը“ Երիտասարդ Գերմանիայի մէջ, խստաբարոյ Նիհիլիստը ցարերի հայրենիքում կամ Բլանկիստ պրոլետարը պարիզեան արուարձաններում — բոլորն էլ Ժողովրդի խանդավառ բարեկամներ, բոլորն էլ տոգորուած սրբազան ատելութեամբ՝ դաւադրում՝ են անդադար, տէռոր են կազմակերպում, երկրպագում են վառօդին, ջատագովում են Սուրը, Թոյնն ու Ուժանակը։ Կռիւը երկար ժամանակ մնում է կղզիացած, զոհերը տասնեակ տարիներով հեծում են դժոխային մթնոլորտում, մեռնում են մութ ու խոնաւ բանտերի մէջ, կախաղանի վրայ, մինչև որ ապստամբութիւնը ծաւալուելով, հրդեհելով՝ հարկադրում է իր պահանջները բռնաւորին...

Զարմանալի է պատմական էվոլիւցիայի ճանապարհը, բայց վհատեցուցիչ չէ... Կարդանք, շատ կարդանք պատմութիւնը. հետաքրքրուենք ճնշուած ազգերի այդ դարաւոր, արիւնալից պայքարով լքման, յուսահատութեան վայրկեաններում շատ սփոփիչ ու սրտապնդող փաստեր կը քաղենք այնտեղից։ Որքա՞ն հերոսական ճիգեր — ջլատուած ու ապարդիւն անցած։ Որքա՞ն հրաշալի կորովներ — բախտի անագորոյն հարուածների տակ վաղաժամ թառամած... Խոնարհուենք այդ պաշտելի նահատակների առջև, օրինակ առնենք նրանցից։ Մենք ևս, անտարակոյս, տիրնք նման դէմքեր, բայց դեռ շատ պիտի տանք. դեռ շատ պահանջկոտ է արեան աստուածը...

Կռի՞ւ է կտակում մեզ 19-րդ դարը — ազգայնական կռիւ նախ և առաջ։ Ստանձնենք այդ կտակը և ուշադիր լինենք ժամանակի հրամայական ձայնին։ Համերաշխութեան գաղափարը — կռիւ անտիպոդը — իր ընդարձակ, տիեզերական իմաստով դեռ նոր է ծայր տալիս, նա դեռ չի մարմնացած։ Ճշմարիտ կոսմոպոլիտիզմը մետաֆիզիկական բանդագուշանք է և իրականութիւնը պատկանում է դեռ „ազգայնութեան“, „հայրենասիրութեան“ Նայեցէք Աւստրիային. չնայած սոցիալիզմի զգալի առաջադիմութեան՝ որպիսի՞ կատաղի մրցակցութիւն միևնոյն պետութեան ազգերի միջև. որպիսի՞ ահաւոր փոթորիկներ պատրաստ են ժայթքելու միմիայն լեզուի խնդրից... Նայեցէք Գերմանիային, Ռուսաստանին. դիտեցէք լեհական հայրենասիրութեան թռիչքները և ամբողջ լեհաշխարհի ցասումը Պոզնանի վերջին դէպքերի առթիւ։ Անգամ հրէաները, անգամ սոցիալիստ դրօշակի տակ համախմբուած հրէա ինտելիգենցիան Լեհաստանում ու Լիտվայում՝ հրէական ապագայ ինքնավարութեան խնդիր է դնում իր կօնգրէսներում։ Սիօնիզմ, Պանբրիտանիզմ, Պանգերմանիզմ, Պանսլավիզմ, Պանիսլամիզմ — միևնոյն սոցիոլոգիական կատեգորիայի տարբեր արտայայտութիւններն են

Այո. իրականութիւնը դեռ հսկայական մի մարտադաշտ է, ուր ազգեր ու ցեղեր փոխադարձ ատելութեամբ տոգորուած՝ գրոհ են տալիս իրար դէմ — և վայ յաղթուածին։ Իւրաքանչիւր մի ազգ, իր բոլոր էներգիայով ու բոլոր զէնքերով հաստատում է իր դիրքը արեգակի տակ։ Մենք ևս պիտի անենք այդ։ Հանդէպ այն վսեմ ու ահեղ տեսարանին, ուր տիրանները ձեռք ձեռքի տուած յօշոտում են մեզ, ձգտելով խաչ դնել մեր ազգայնա-

կան գոյութեանը՝ պիտի ուղղենք մեր բոլոր ջանքերը դէպի ազգային ինքնապաշտպանութիւն։ Հանդէպ հրեացման յարձակումն վտանգին, հանդէպ բարոյական սրարշաւ այլասերման, որ սպառնում է իսպառ անդամալուծել մեր ժողովրդի և ինտելիգենցիայի կամքը՝ պիտի գործենք փութով, առանց յապաղելու։

Շտապե՞նք։ Պատմութեան անիւը թաւալւում է արեան ու արտասուքների միջից, պաղ ու անտարբեր դէպի ճնշուածների հեծկլտոցները։ Նա բարձրացնում ու պատուաւոր դիրք է տալիս գոյութեան մենամարտի յաղթողներին և կոխկռտում. անգունդ է գլորում նրա զոհերին։ Զմոռանանք այդ։ Մի վայրկեան ևս անդրադառնանք պատմական մերձաւոր անցեալի վրայ և խոր արձանագրենք մեր գիտակցութեան մէջ այս ցայտուն իրողութիւնը՝ որ ստրուկ ազգերն ու դս սակարգերը երբէք չեն մուրացել իրենց իրաւունքները, այլ զէնքը ձեռին յափշտակել են նրանց։ Գիտակ այդ տիեզերական անողոք ճշմարտութեան՝ ստուարացնենք ու սեղմենք մեր շարքերը, շինենք կազմ ու պատրաստ անդուլ յուսահատ պայքարի համար, և ցոյց տանք այդպիսով, որ մենք ևս արժանի ենք քաղաքակրթուած ազգերի մեծ գերդաստանին։

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՓԷՐԻԱՅԻՆԵՐԸ. Մուշի սիրուն ու գեղեցիկ դաշտը, ուր եղ ու մեղր կը բղխի, կը վառի. գիւղեր, աւաններ, հունձքի դէզեր մոխիր ու աւերակ դարձած են։ Ճարճատող բոցեր՝ մութ ծուխի քուլաներով կը լափեն եթերը, դժոխքի երազանքը տալով։ Արհաւիրքը հոլանի թեւերով կ'արշաւէ այդ լացի հովիտին մէջ, սարսափահար հորիզոններու մէջտեղ, ուր մոռեներու, մոռելորներու, լացւորներու թափօրներ կանցնին լռիկ կեանքի լեղի մոռացութիւնով մը։ Սասունի սարերէն մինչեւ դաշտին ծայրը անբարոյականացած թագաւորութեան մը ամենեւին քամահրանքն է որ կուրօրէն կը զարնէ, կը հրդեհէ, կը գազանանայ։ Ցուսահատական ու հերոսական ընդհարումներ, չլսուած հարստահարութիւններ, պայրեանի աշխարհներէն մնացած անիշխանական դրութիւն, ուր, օր չանցնիր, որ հայեր չսպանուին, ուր, ըստ Ցէլկասէի բացատրութեան նկարագրելով Մուշի նահանգի հայերու հալածանքները – "գայլերն իսկ իրար կուտեն"։

Սակայն, Փրանսայի արտաքին գործոց նախարարը, մեզմէ լաւ հասկցած ըլլալով հայերու անմարդկային դրութիւնը՝ փայփայեց, պսպղցուց սուլթանի աչքին Հայաստանի կարմիր ուրուականը. մինչեւ որ էշը ջրէն անցուց. յետոյ քաշեցաւ Ցօնքիշոտական քաղաքականութեան... ծիծաղելի դերակատար մը եղած ըլլալու համար։

Հարիւրաւոր հայ գիւղերը, որոնք Մուշի դաշտը կը խնդացնէին եւ որոնք գարնան՝ Աստղիկի մարմինը ցանկասէր աչքերէ ծածկող մշուշի մէջէն, ծփացող կղզիներու պէս դուրս կը ցոլային, կը մնան արտուկալ եղած։ Թշւառութիւնը իր սրսփուն ծածկոյթով, աղքատցած, անօթիծարաւ հայ ժողովրդին ուժատ թեւերէն բռնած կ'առաջնորդէ դէպի գերեզման մուիալու – կաթնուսերը թշնամուն ծգած – խոտ ուտելու կամ դէպի մահ...

Այդ անլսելի ոճիրներուն, կառավարական լրջութեան դիմաց երեւան եկան, մարդկային եւ պատմութեան հակազդեցութեան արդար օրէնքով, ինչպէս տեսանք Պուլկարիոյ, Ցունաստանի եւ ուրիշ գերի ազգերու ազատութեան պայքարին մէջ, հայ հերոսները։

Մնմամ Սերոբի արիւնէն ծնան նոր Փէդայիներ հայրենիքի նուիրական Ցաւը իրենց մէջ, որոնք Անդրանիկի անվեհեր ու խիզախ առաջնորդութիւնով, թափուած հայ արիւնին վրէժը կը լուծեն ծափահարելի ուժգնութիւնով մը, "ակն ընդ ական" աստուածային օրէնքը գործադրելով։ Հայ ցեղին դառնութեան բաժակը լեցուած, անխնայ կուի նոր թեւական մը բացուած է։ Փէդայիին գնդակն է որ մոլեգին կը վազէ թշնամուն ետեւէն...

Բոլոր անոնք, որոնք կը սիրեն Հայաստանը, բոլոր քաղաքակիրթ աշխարհը, կրսպասեն որ գերագոյն վրէժխնդրութիւնը հայերուն լուսեղէն սիւնն ըլլայ։

Ուրիշ ճար չի կայ մեր թշնամիին հետ այլապէս վարուելու, որուն կուրծքին տակ Աստուած ափ մը ցեխ դրած է կարծես, փոխանակ սրտի։ Եթէ մեր մայրերը հրլային այնքան բարի ու առաքինի, պիտի յանձնարարէինք որ իրենց թշնամուն դիմաց ՀՐԼԱՅԻՆ այնքան փուխսիրտ եւ քրիստոնեայ, որովհետեւ կ'ըսէ, Հայաստանի արիւնի դաշտերէն մեզի հասած ծայն մը. "Թիւրք մայրը կնոջական գութը երբէք չմանչցաւ իր հոգու մէջ"։

Սուրերը միշտ շողշողուն պէտք է պահել եւ վառօդի հոտով գինով մնալ։ Հող է մեր յոյսն ու ազատութիւնը։

Ցարօնի նահանգը, ուր Սերոբը գործեց ու անմահացաւ, ուր քաջերու ազնիւ սերունդ մը հայ անունը կը փառաւորէ այսօր, նշիրական է մեզի համար։ Հայոց պատմութեան առաւօտը արշալուսեց հոն։

Դեռ կը նայի հայ ժողովուրդը Ներսովթի մնարին, որ կը յիշեցնէ իր նախահօր քաջութեան յիշատակը հսկայ որսորդին, Բէլի դէմ։ „Ընտու քարերը", որոնք քարացած են Հայաստանի աստծուն հրամանով։ Ցարօն նահանգն էր որ՝ Ասորեստանի արիւնռուշտ վեհապետներու "էլգէոններու թագաւորներ"—աշխարհաւեր յարձակումներուն էն զօրեղ դիմադրութիւնը ցցուց, հնայելով տուած անթիւ զոհերուն, "որոնք ծառի տերեւներու պէս կը փուէին գետինը" ինչպէս կը վկայեն Նինուէի աւերակներուն բեւեռագրերը։ Սակայն բոպէ մը, Հայաստանի Ցօրոսի բնակիչները հյուսահատեցան իրենց ազատութիւնը ձեռք ձգելէ եւ Ասորեստանէն, Նինուէէն – Ս. Գրքի "գազաններու որջէն" – ինչպէս այսօր Ստամբօլը – եկած աւարառու խուժ հօրտաններուն դէմ արիւնահեղ կռիւ մղելէ։

Մուշի նահանգը լեցուն է հայրենի յիշատակներով, աւանդութիւններով, որոնք ամէն քայլափոխի կ'ըսէին „Դայծեր"-ու հեղինակին. „Դա քո երկիրն է. այստեղ էին ապրում քո նախնիքը եւ այստեղ մնան նրանք. դու էլ պէտք է այստեղ մնոես եւ քո ոսկերքը խառնես նրանց ոսկերքի հետ"։

Ցարօնի քարձունքներուն վրայ, մարմանդ հովիտներուն ծոցը, զուլալ աղբիւրներու քով կը նիրհեն սրբազան հոգիները Հայաստան աշխարհին, անմահ „Թարգմանիչները", քազմերախտ հայրապետները, որոնք իրենց օրհնութիւնով եւ գործունէութիւնով կեանք ու կենդանութիւն տուին երբեմն Հայաստանին։

Ատենով երբ Գողթնի գուսանները իրենց քանդիռներուն ու սազերուն ծայնով "Երկնէր երկինը", Վիշապաքաղ Վահագնի քաջութիւնները կը թնդացնէին, երբ Արտաշէս Հայաստանի „նաւասարտի առաւօտները" եւ Սաթենիկ Արգաւանի "գտից խաւարծին" կը տենչար, Քարքէ լեռան մնարին վրայ, որուն տակէն Արածանին իր ալիքները կը թաւալէ, Ոսկիամայը Անահիտի – Հայաստանի Աթենասին մեծ մեհեանը կը բարձրանար, ուրկէ քիչ վար Եփրատը մոնչելով կը խուժէ Ողկան բերդի դարաւոր աւերակներու ստորոտէն։ Դիցանուէր Աշտիշատի մէջ, ուր "իէրօտիւլներու" սրբազան գերիներու դասակարգ մը, Անահիտի հոդերը կը մշակէր, առանց ուրիշ տեղերու անսրբազան բնաւորութիւնը ունենալու, նաւասարդին տեղի կունենար ամբողջ Հայաստանի "աշխարհախումբ տօնախմբութիւնը" արքային, նախարարներու, քրմապետին, եւ ժողովրդին ներկայութեան, ուր հաշտութեան մեծ մատաղը կը մատուցուէր եւ երբ մեծ քրմապետը, ոսկի ցնցուղով, Արածանիէն ջուր առած կը ցրցքնէր բիւրաւոր ուխտաւորներուն վրայ. հոն Վարդավառը – Ջրբոտիկը – կը տօնէին, աղաւնիներ կը թռցնէին, բամբիռներ կ'ածէին, ճիրիտ կը խաղային... Լուսաւորիչ, „ոսկով եւ արծաթով լի" Անահիտի եւ Վահէվանեան բագիններուն տեղ – ուր կար Վահագնի եւ Աստղիկի սիրոյ տաճարը – շինեց հայոց աշխարհի առաջին մայր եկեղեցին, որու քարերով Լէնկթիմուր Եփրատի վրայ կամուրջ մը շինեց։ Հոն, Աշտիշատի ազգային ժողովին մէջ ընդունեցաւ Ս. Գրքի եօթանամեայ թարգմանութիւնը – թարգմանութիւններու թագուհին – հոն կ'այցելէր Ներսէս, հայաստանի մեծ հովիւը, որուն վախճանելէն ետքը Վասակ Մամիկոնեանը, հայաստանի էն դիւցազնական, պաշտելի դէմքերէն մէկը, քանի քանի հեղ հայաստանի թշնամիները զգետնելէ ետքը, երբ գերի բռնեցաւ, ըսաւ պարսից Շահին շահի երեսին „Մինչ օրհնութիւն տօրն մերոյ Ներսէսի հանգուցեալ էր ի վերայ մեր գիտացաք տալ քեզ խրատ"։

Զարթիր, Ներսէս, աշխարհը եւ բարի հովիւ հայաստանի, զարթիր, օրհնէ հայաստանի կտրիճները, որոնք կը կուին քու սիրած աշխարհիդ համար եւ որուն մեծութեանը համար այնքան ճգնեցար դուն։ Ձայն տուր զերեզմանիդ խորէն Անդրանիկներուն, Համբարձումներուն, որոնք քու օրհնութիւնովդ պիտի կրնան „խրատ" տալ հայաստանի արիւնակզակ դահիճին։ Զարթիր, Ներսէս, եւ մի ձգեր մեզ Օրմանեաններու ձեռք...

Այդ սրբազան աստղերու ու հոդին տակ կը հանգչի Սահակ Պարթեւի գերեզմանը, որ „ողորմելի մանուկ թագաւորին" օրով, անվեհեր եւ հիանալի քաղաքականութիւնով մը դիմադրեց Բիւզանդիոնի եւ Ցիզբոնի նենգամիտ արքունիքներուն դէմ, հովանաւորեց Արշակունեաց խարխուլ գահը շուզելով Հայաստանի „վիրաւոր ոչխարը առողջ գայլերուն" հետ փոխել։

Ցարօնը ծնաւ Խորենացին, հայաստանի մեծ պատմագիրը,

որ ողբերգեց հայոց աշխարհը "վեհագոյնս ի հիւսիսականաց", խղճաց հայ եկեղեցին զրկուած քաջ հովիւներէ, ողբաց մնափառ, տգէտ հովիւները. հոն ծնաւ հրեշտականման Ս. Մեսրոբը, որ հայ տառերը հրաշագործեց:

Հայկական Տօրոսի բարձունքներուն վրայ կը նիրհեն Ոսկեդարու հիանալի թարգմանիչները, մեծ մատենագիրները, որոնք օժտեցին մեր աշխարհը հայ գրականութիւնով մը եւ ազգային հոգին ծուլեցին: Առաքելոց վանքի (թարգմանչաց վանք) պարիսպներու տակ Խորենացիին, Դաւիթ Անյաղթի, Ղազար Փարփեցիին եւն եւն միածեւ մահարձանները կը բարձրանան, հայրենեաց անուշ հովերէն փայփայւած, շուշաններու, անթառամներու, նունուֆարներու բոյրովը օրհնաբանւած:

Վերջապէս Տարօնը Մամիկոնեանց աշխարհն էր, որ տուաւ մեր հայրենիքին մեծ մարդեր, Վարդաններ, Վահաններ. հոն են դեռ այն ձորերը, կիրճերը, սարերը, անտառները, ուր Դայլ Վահանը փայլեցաւ թւով մեծ թշնամին դէմ պատերազմելու քաջասիրտ եւ ճարպիկ ռազմագիտութիւնով:

Մուշի դաշտին կը նային դեռ սեւեռուն ու սահմռկած՝ Մուշեղ սպարապետի դղեակին փլածները:

Ահա այն աշխարհը, որուն "հողն է սուրբ, ջուրն է սուրբ", որ տուաւ Կարինէներ, Շաքէներ եւ Նաթերը, իբր նոր Ցուդիթ, Սերոբներ եւ ուր հերոսները իրարու կը յաջորդեն պարծենալի եւ դիւցազն հրայրքով մը:

Ո՞ր սիրտ չի հրճւեցաւ, չի ծափահարեց լսելով Անդրանիկի եւ իր արի խումբին, Առաքելոց վանքին մէջ, խիզախ դիմադրութիւնը թիւրք զօրքերու դէմ. ազգովին հպարտութեան սարսուռը զգացինք հայ արիւնին այդ փառաւորումէն, մեզի հետ նոյն հիացումը եւ նոյն ուրախութիւնը զգաց բոլոր եւրօպայի մարդասէրը մամուլը, հայերու քաջասրտութիւնը գովարանելով: Հայը գիտէ դիմադրել ու յաղթել. ի՞նչ պէտք է մեզի մեր թշնամիին լեղին պատռելու համար — յանդգնութիւն, յանդգնութիւն, նորէն յանդգնութիւն... Փրանսայի յեղափոխութեան էն մեծ նշանաբաններէն մին:

Բ. Դուռը Մուշի հերոսներուն քաջագործութիւնները "աւազակային արարք" անունով կը ծանչցնէ Եւրօպային եւ Ռուսիոյ հիւպատոսը, ըստ թրքաց աղբիւրին, հեռագրած է իր դեսպանին որ Անդրանիկի խումբը հայութեան դատին անունը շահագործող մարդասպաններ են եւ թէ Անդրանիկն է վանքէն առաջին անգամ հրացան պարպողը:

Դռան այդ նենգամիտ լուրը հող չի գտաւ մտքերու մէջ, ծիծաղ շարժեց միայն՝ թիւրք պետութեան այնքան խաբեբայ եւ ցած միջոցներու վրայ աւելի շողշողուն գաղափար մը տալով: Մեզ չի զարմացներ նաեւ ռուս հիւպատոսին վարմունքը, եթէ իրաւ է, հայութեան սրբազան դատին անձնուէրները աւազակ, մարդասպան անուանած ըլլալուն:

Ճիշդ է որ Ռուսիան հայաստանը հայերով չուզեր ժառանգել, այլ հայու արիւնով լճացած դաշտեր, դժոխային Լօյոլան, Բօքսոնսեցիէվի հողոտած մարմինը եւ "Նօվոյէ վրէմիայի" էջերու հոտէ գինովցող հոգին թարմացնելու համար:

Մշեցիք՝ հաստկող Օրմանեանի դաւաճան ու խաչագող անտարբերութենէն զգւած, որ, այս պահուս, իր փեսին հետ, ճիժերով պիժերով ազգը ուտելու մոլուցքէն բռնւած է եւ յուսահատ՝ թիւրքերու չլսւած եղեռնագործութիւններէն, օրթօդոքսութիւն ընդունելու տխուր եւ ճարահատ որոշումը կուտան: Ցարի պետութիւնը, որ աչքը չորս քացած է մեռելներու դաշտին վրայ պար եկող ագռաւներու պէս, փութաց հիւպատոս մը հասցնել հոն եւ զանվիժել օրթօդոքսութեան շարժումը: Մուշի մէջ պ. հիւպատոսի դերը որոշ է. հայերուն երեսանց բարեացակամ երեւալ եւ սուլթանի հալածանքները արդար եւ օրինաւոր յայտարարել: Երբ ցարի մհսիօնար-հիւպատոսը, կեղծուած սուլթանի տմարդութիւնները, եւ հայ ժողովրդին թշւառութիւնը կը շահագործէ, օրթօդոքսութեան երանաւէտ փաբախը առաջնորդելով զայն, "Նօվոյէ վրէմեան", ռուս մեծ լրագիրը՝ աշխարհի էն անազնիւ, էն հայատեաց եւ էն անպիտան լրագիրը գուցէ, որքան թոյն եւ պղծութիւն ունի իր սրտին մէջ կը թափէ հայերուն դէմ. պաշտպանելով սուլթանը, հիւթը անցած ու չիք յայտարարելով Պերլինի դաշնադրութիւնը եւ Ռուսիոյ համար անձեռնտու սեպելով հայաստանի մէջ Բարենորոգումներու մուտքը: Ռուսները այնքան ամբարտաւանացած են - երբէք չի տեսնւեցաւ պետութիւն մը որ այնքան անսիրտ ըլլար հայ ազգին հանդէպ, որքան Ռուսիան որ բոպէն անգամ մը քսան խաչ կը հանէ եւ հարիւր հեղ արեւելեան քրիստոնեաներու պաշտպան կը հանդիսանայ: Չէ՞ որ, քացէիքաց, սինիբօրէն չեն վարանիր պարծենալու որ հայերուն կեանքի եւ մահու թելը իրենց ձեռքն է. ցարդ, մենք տեսանք թէ ինչպէս խաղցուցին անոնք մահուան թելը, որով այսօր, իրաւիրաւի, հպարտութեան ճառթեր կը նետեն Եւրօպայի եւ արիւնլայ Հայաստանին:

Գուցէ ցարը, որու երիտասարդ հոգին օտար չերեւիր բախիւթեան եւ մարդասիրութեան զգացումներէն, չարհամարէր հայ արիւնին ցաւի ճիչը, եթէ չխեղդուէր գինք շրջապատող անբարոյացած մթնոլորտին մէջ:

Հայաստանը չիք է այլեւս այն օրը, երբ գինեմոլ փոփերը (ռուս տէրտէրները), "սեւ ու ծերմակ կղերները" իրենց ի քօնները զան Հայաստանի մէջ փորձեն Ս. Սահակի թոռներուն քրիստոնէութիւն աւետարանել, "արքայութեան անցագիր" տալ. եւ սորվեցնել հայերուն պաշտել ցարը, օրուգիշեր "քօժէ ցարիա" երգել եւ "Նորահրաշին" տեղ սլավօն աղօթքներ մուլտալ: Ա՛հ, փոփերն են որ ռուս սիվիլիզացիային ու սիֆիլիցիային ոահվիրաները պիտի ըլլան Տարօնի առողջ դաշտերուն ու հովիտներուն մէջ: Գուցէ սրբազան հոգեզմայլումով պիտի պատմեն հայ ժողովրդին թէ ինչպէս Մոսկվայի փողոցներուն անկիւնները կախ սուրբերու իրօններուն առջեւէն աստուածավախ յարգանքով ու գլխիբաց կանցնին ռուս գինւորը, բուրժուան, չինովնիկը, թէ ինչպէս մուժիկը ծիւնին վրայ ծնրադիր խաչ կը հանէ եւ իզվօսչիքները կը բարեւեն խոնարհութիւնով: Պիտի զարմացնեն Ռուսաստանի անհամար ս. քաղաքներովը, Քրէմլինի ցոլացող գմբէթներով, վիթխարի զանգակներով: Պիտի պատմեն ու պատմեն անվերջ ցարին գթառատ հոգածութիւնը, գորովը դէպի քրիստոնեաները, "զորս կը սիրէ իր հոգուն պէս, կը ծեծէ հագած մուշտակին պէս" ինչպէս ռուս մարդը իր կնոջ:

Հայաստան պիտի գան ռուս տէրտէրները անբռնաբարելի, անքննադատելի, "որոնց շունը անգամ չէ կարելի ծեծել" իրենց օրհոտ բերնին հոտը առնել տալու համար, որոնց համար ռուս առածը կ'ըսէ.

Այս փոսին մէջ դազան մը կայ
Այս դազանին մէջ փոփ մը կայ.
Եւ այս փոփին մէջ վօտկայ կայ (օղի):

Ռուսիա լաւագոյն սուտ պատճառ մը չէր կարող գտնել արիւնոտ Հայաստանի սրտին մէջ ռուսացումի մասնաճիւղ մը եւ հաշւետուն մը հաստատելու համար: Ռուսներուն հետ ամէն դիէ կը վազեն Հայաստանի պատմուճանին վրայ վիճակ ձգելու: Հայ ֆէդային հատ պատասխան մը ունի տալիք ռուս հիւպատոսին զրպարտութիւններուն եւ շարամիտ քրիստոնէապաշտպանութեան դէմ. "զացէք ըսէք սրբազան ցարին որ մեռնելու զացողները կ'ողջունեն զինքը":

Մուշի դաշտը հրդեհւած է. արի Սասունին սպառնալիք կ'ընեն. ֆէդային կայ միայն զօրավիզ:

Անվհատ Հայաստանը ունի դեռ որդիներ վտարանդի ու պանդուխտ, որոնք պիտի փութան արձագանքել ֆէդային զնդակին ամէնի սուլոցին:

Հայ գաղթականութիւններու եւ արտասահմանի մամուլին մէջ խանդավառ եւ սրտոտ ցոյցը պիտի հասնի հայ ֆէդայիներու հասցէին Մեղրագետի ափերուն ու Տօրոսի ապառաժ լանջերուն վրայ, պիտի սրտապնդէ, խրախուսէ զանոնք անխնայ եւ ամենահաւոր վրէժխնդրութեան պայքարը շարունակելու համար:

Եթէ Մասիսի ծիրանազգեստ կինը Աժդահակի երազին մէջ ծնաւ երեք դիւցազուններ, Սասունի սարերը անընդհատ պիտի ժայթքեն վիշապաքաղեր, Վահաններ. Սերոբներ, Անդրանիկներ, ծիւաղ Համիդի քունը պղտորող, անոր անիծակուռ կեանքի վերջին ժամերը մթնցնող:

Զարկէք եւ անխնայ, հայրենիքի առիւծ զինւորներ, անսիրտ թշնամիին պէտք չէ մեղքնալ: Կօրքիի մրրկհաւն եղիք որ շանթի որոտումին առջեւ ուրախութենէն կը ճչէ:

Դարեւոր փորձառութիւնը համոզած է մեզ թէ մեր թշնամին մարդ չէ, արեան ճապաղիքներով կը մնանի ան. սպանեցէք զան ուր որ գտնէք. ձեր ատելութիւնը պէտք չէ նահանջէ ոեւէ բարոյական մտածումի առջեւ: Որքան ձեր վրէժխնդրութիւնը ահաւոր եւ մեծ ըլլայ, այնքան կը սիրւիք մարդերէն եւ կը սիրցնէք ձեր թոյլ եւ մարտիրոսութեան դավնիի սիրահար համարւած ազգը, որ ցարդ արգահատանք հրաւիրեց իր վրայ քան արժանաւոր հիացում: Լօշտակի պէս ամուր խրւեցէք ձեր մայր հողին մէջ, որ ձեզ օրօրեց: Ձեր գնդակը ճիշդ եւ ուղիղ աշնցէք, ինչպէս սովոր էր ընել Սերոբը: Քառասուն գլխէ դեւեր եղիք աբիւնարբու հրէշներու աչքին: Ամիլաթ գաւառին մէջ, ուր հայ ժողովուրդը "ցասման խաչեր" կը ցցէ աստուածային սրտմտութիւնը մարելու համար, դուք վրէժխնդրութեան կուռքերով բեթէլներ կանգնեցէք:

Գերազոյն վրէժխնդրութիւնը ձեր եղբայրներու սրտէն պիտի խլէ՛ անճառ օ՛խ մը, եւ այրիացած հայ մայրերէն ու որբերէն սրտաբուխ եւ սրտաշարժ օրհնութիւնը:

Զարկէք, Դայլ Վահանի արի ոսկորները թող սարսռան գերեզմանին մէջ եւ գիտցուցէք մունտաս Համիդին եւ մոլլա Նիւշիւք Սայիդ փաշային, թէ իրենք առիւծներու հետ գործ ունին եւ ոչ ոչխարներու: Մի վշտանաք երբ լսէք որ հայ հարուստ մը իր աշխարհային մեղքերը քաւելու, իր մնափառութիւնը յաւերժացնելու եւ Մարիամի աղիծներուն միամիտ հիացումը վաշխառելու համար միլիոններ կը ծախսէ տաճարի մը շինութեան: Զարկէք դուք, այսպէս կը պահանջէ հայրենիքի

ճակատագիրը: Ձեր ետեւ ունիք հայ ժողովուրդը, քանւորը, արհեստաւորը, բարի եւ վնասանծ. հանգիստ ծգեցէք հարուստները. չխռովենք անոնց շւայտը եւ... աստուածպաշտութիւնը: Հայ քանւորը պիտի կենայ հայթայթել դեռ թշնամուն լանջքը պատռող մահացու գնդակի մը լուման:

Զարկէք ու անցէք վրէժխնդրութիւնով գինովցած. մի խնայէք ոչ վաղի, ոչ ալայ պէյի: Դարանեցէք, ճամբաները պահեցէք. զամեցէք ուր որ տեսնէք թշնամին: Ձեր թշնամին նենգութիւնով եւ ետեւէն կը զարնէ, դուք առջեւէն եւ ետեւէն միանգամայն, մինչեւ որ ամա՜ն ըսել տաք անոր: Դարուս սկիզբը սուլիացի յոյն ապստամբները, 100-200 հոգւով, թիւրքերու հազարաւոր հոգիէ վաշտերը քանի քանի անգամ յանկարծակիի բերելով ջարդ ու փշուր ըրին: Ցանղգնութիւն, ահա ինչ որ չի պակսիր ծեզի: Քաջերու սահմանը իրենց զէնքն է:

Զարթիր, Նեբսէս, Զարթիր եւ օրհնէ հայ քաջերը:

Մեր աչքերը հպարտութիւնով, հաճոյքով ու խանդաղատանքով կը դառնան դէպի սյն երկիրը, ուր բարբարոսութիւնը անպատիժ կը շարագործէ, ուր աշխատասէր հայ գիւղացին արիւն կուլայ օգնութիւն հառաչելով, ուր հայ Ֆէդայիին գնդակը վրէժ կը գոռայ եւ ուր ծերենցը... "Հայաստանի երկունքը" մարգարէացաւ:

Զարկէ՛ք...

ԹԵՐԹՕՆ

ԽԵՂԴԵՅԷՖ ԶԱՅՆ

(ՀԱՐԴԻ ՕՐԵՐԷՆ)

Մահւան օրերն են ու դիակները կը պառկին փողոցներուն մէջ՝ եղբայրացած թշնամուն սուրով, երեսնին գետնի հողին հետ, արիւնը դեռ թաց կամ լճացած իրենց բերնին, իրենց բաց վէրքերուն վրայ. երիտասարդներ, ու ծերեր ալ ու կիներ ալ՝ որոնց մայրական ստինքէն տակաւին միամիտ երեխայ մը կը կախւի և կը ծծէ ցամքած պտուկները, արթնցնել ջանալով խորունկ քնացած մայրիկը, որ չի լսեր ու չի շարժիր. և մանկիկը դատարկ ծիծը բերնէն ձգելով վերջին մանկական գանգատը կը ձգէ, ողորմուկ լաց մը փրցնելով և որուն վշտակոծ արձագանքը մռայլ ու աւերակ տուներու դատարկութեան մէջ կը հնչէ մորմոքիչ եղանակով:

Մահւան օրերն են ու դիակները անթաղ կը պառկին արիւնոտ քարերուն վրայ. տքուքները դադրած են, հառաչանք չի լսւիր, աղբի ու ցեխի փողոցները գերեզմանային արհաւիրքը կը սգան: Հէն աշխարհը աւերակ է, մահւան հովը կ'անցնի ամէնուրեք ու կը տարտղնէ հանգած հրդեհներու մոխիրը կամ կը հալածէ հոս հոն ծխացող կիսայրեացներու կծու մուխը. միակ կեանքը որ կը տեսնէ տակաւին, կիսակործան պատերու ածխացած ուրւականն է որ նոյնպէս չարագուշակ՝ երկինքն ի վեր սաղմոս մը կը հեծեծէ ու երկնքի խլացած արդարութեան՝ գետնի վրայ կատարւած եղեռնագործութեանց վրէժխնդրութիւնը կը յիշեցնէ: Դուռները փակ են յաւիտենապէս. զանոնք իրենց ծխնիներուն վրայ դարձնող ձեռքերը ամէնքն ալ կտրտած է թշնամին սուրը իրենց դաստակներէն. խաւարը սև վիշապի մը պէս ոլորւելով, պտուտքելով իր վրայ՝ կ'երկննայ արհաւիրքի, դժոխքի գետնին երեսը ու կը լզէ մեռելներու արիւնը:

Եւ ահա մարդկային այս սպանդանոցին ծոցէն, հազարաւոր որբացած այրիներու, մայրերու, մանուկներու տենդին, խուճապին ու արցունքին մէջ՝ իսլամին յաղթական օրհներգը կը հնչէ մինարէին բարձրութենէն, խնդրելով երկնային օրհնութիւնը վարը հաւաքւած արիւնաթաթախ ձեռքերուն, սպաննող, կողոպտող, պղծող, աւերիչ ամբոխին համար. երբէք մարդկային հոգին այնքան անբարոյականացած չէ՝ իր մեղքին, իր եղեռնագործութեան դիւային սրբապղծութիւնը աստուածային փառաբանութեամբ հռչակելու: Մինչ վարը, գողերու, մարդասպաններու հաւատացեալ վոհմակը՝ խռնւած հայհոյութեան տաճարին մէջ՝ անմեղի, արդարութեան գործը աւարտողի գազանային խղճմտանքովը ձեռքերը երկու ականջներուն կը տանի, ծունկի կուգայ և իր իսլամի բարբարոս աղօթքը կ'ընէ իսլամական բարբարոս Աստծուն, վեր բարձրացնելով թեւերը ու օրհնելով զանոնք:

Կը գոռան, քարերն անգամ լեզու ելլալու ջանք կ'ընեն խլացած բնութեան ու գիտակից մարդկութեան մէջ փոխանցւող այս կեղծաւորութեան հրէշային երևոյթին դէմ հայհոյելու. աշնան քամին պէս մոլար ու հեծեծագին՝ սարսուռ մը կը խաղայ դեռ զգայութենէ չի դադրած մեռելներուն վրայ՝ երբ տաճկական աղօթքը կերթայ կը հասնի անոնց տլփացող հոգիներուն. գլուխներ՝ յանկարծ կատաղութեան զայրոյթովը համակւած՝ վեր կը շիտկւին. բայց, որովհետև թանձրացած լեզուն գամւած է իր տեղը ու շունչն անբաւական, ներսէն բղխող անէծքը ակռաներուն տակ կը ծամւի ու լորձունքոտ թաւալի մը կը փոխւի. և անզօր գլուխը վար կ'իջնայ նորէն ու կը ծեծէ գետնին խիճերը. օդին մէջ ձեռքեր կը բարձրանան կենդանութեան ու մահւան այդ ահաւոր պայքարի բոպէներուն և սպառնագին բողոքի ջղաձգութիւն մը կը խաչաձևեն՝ վար իջնալով:

... Անգղի աղօթքը կը լռէ, կը հանգչին նաև վերաւորներն ալ իրենց յաւիտենական հանգիստը գտած: Ցաւերը կը դադրին, վէրքերը կ'անուշնան, արեան ակերն ալ կը հանգարտին: Խոժոռած դէմքերը իրենց նահատակի քաղցրութիւնը կը վերագտնեն ու իբր թէ բան պատահած չելլար, իբր թէ վէրքի հետքն անգամ չի գտնւեր իրենց կուրծքին. կամ կողին վրայ՝ կը քնանա՜ն անտիրական մեռելները, ինչպէս աշնան գիշերներուն սովոր էին արդէն անուշ թուլութեամբ անհոգ երկննալ իրենց ընտանեկան անկողիններուն մէջ, երբ դուրսը քամին կը շչէր ու խաղաղ թմրութիւնը աւելի կը հեշտացնէր:

Բ.

Ցրտասարսուռ գիշերը կը շարունակւի և արեան հոտը կը գոլորշիանայ: Կործանումը կատարեալ է և քըստմնեցուցիչ անցքերը ենթադրել կուտան թէ հայ անունը սրբւած է աշխարհէն և պառաւի տկար շունչն իսկ պաղած: Այս համասփիւռ մեռելութեան, այս գերեզման աշխարհին մէջ գիշերուան ուշ ատենին կոյսի մը հեծեծանքը կը լսւի՝ խորունկ, կողկողիչ. միակ կենդանի աղաղակը որ կը տեսնէ՝ այդ վայնասունն է. կարծես գթութեան հրեշտակն է որ երկրաւոր դժոխքին վրայ նստած, շուրջի ահաւոր եղերութիւնները կը վայէ: Բայց այդ ձայնը, կոյսի այդ տկար, այդ տրտում աշխատումը՝ տարօրինակ զարհուրութեամբ՝ անիծեալ Բաբիլոնի դռնէն, զարմա՜նք, թիւրքերու թաղէն կուգայ:

Ի՞նչ, միթէ կարելի՞ է որ թիւրք կնկան սրտին մէջ գթութեան սուրբ յարութիւնը տեղի ունենայ և արտասուէ անիկա հայու դիակին վրայ, գէթ գիշերային առանձնութեան իր խղճին քաւութիւնն ընելու և իր զաւակներուն մեղապարտութիւնը հառաչելու. ո՛չ, երբէք չպիտի սրբէ անիկա անէծքի արիւնոտ խաչը իր մազերով, մինչև որ հայն իր հատուցումը չ'ընէ ու հայ մայրը նոյնպէս մահով ցոյց չի տայ իր զաւկին՝ պղծութեան

արգանդը և ըսէ անոր. — կոտորէ՛, տղաս, որովհետև թիւրք մայրը կնոջական գութը երբէք չի ճանչցաւ իր հոգւոյն մէջ։

Ամրակուռ շէնքի մը խորէն, որուն պատուհանները խնամով գոցուած են և որ դևի մը որմափակ պալատին պէս կը կենայ անմատչելի, խորհրդաւոր, հեծկլտանքը կուգայ ողբաձայն, կոյսի դողդոջուն, ահէն խեղդուած ձայնով։

Առևանգուած, գերի հայ աղջիկը՝ Հռիփսիմէն է որ անքուն, խելակորոյս՝ պատուհանին կիսաբաց վարագոյրէն կը դիտէ դէպի իր ծննդավայր Թաղը, դէպի իր սիրելիներու երբեմնի բնակութիւնը, որոնք կը վառին, որոնց բոցը չէ հանգած տակաւին։

— Տէ՛ր Աստուած, գթութիւնը հատա՞ւ երկինքը և ողորմութեանդ բոլոր գետերը ցամքեցա՞ն միթէ... մենք ի՞նչ ըրինք, ի՞նչ վնաս հասցուցինք քեզի... վա՜խ, հատան, հատա՛ն ամէնքն ալ, ա՛լ մարդ չի մնաց, ա՛լ հայ չի մնաց, օրօրոցի երեխային ալ լեզուն կտրեցին. ու այս կրակը որ մեռածներու, վիրաւորներու մարմինէն կը բռնկի, Յիսո՛ւս, չե՞ս տեսներ դուն...

Հայ աղջիկը կ'ողբայ Թիւրքի հարէմէն, որուն դրան առջև իր եղբայրակիցներուն դիակները կը պառկին անխօս ու համակերպած. և ի՜նչպէս չ'ողբայ, քանի որ իր կուսական պատիւը դեռ նոր Թաղած է այդ սպանդանոցին մէջ։

Լացեց, պաղատեցաւ անգութ հրէշին ճիրանները համբուրեց, իզո՜ւր. խնդրեց որ սպաննէ զինքը և դիակը շուներուն տայ՝ միայն խնայէ իր պատիւին, և երբ տեսաւ թէ կուսական բոլոր պաղատանքը կարող չէին կատաղութեան Մոլոքին սիրտը ողբելու՝ իր կնոջական արժանապատուութեան բոլոր գիւցազնութիւնն հաւաքեց և իր եղունգներովը պաշտպանել ջանաց ինքզինք, որովհետև իսլամի շրթունքները, որ իրեն կը մօտենային՝ պիղծ էին և քիչ առաջ իր հօրն ու եղբայրներուն արիւնովը դեռ տաք, որովհետև այն բազուկները, որ զինք գրկելու կուգային՝ իր մօր մայրերէն բռնած, արմատէն քաղած էին. կ'ուզէր ականջները գոցել՝ չի լսելու համար հեթանոս սիրոյ խօսքերը, որովհետև իր փախուստի միջոցին կոխկռտած հազարաւոր մեռելներու սպառնագին աչքերը կը տեսնէր իր դէմ, որ իրեն կ'ուղղէին և դիմադրութիւն կը հրամայէին։ Երկա՜ր դիմադրեց անիկա, օգնութի՜ւն, հավա՜ր աղաղակեց, բայց ոչ ոք լսեց. իր սիրելիները մեռած էին ամէնքն ալ կամ կը հոգևարէին արդէն։ Ուժասպառ, մարմնի, ա՛լ թևերը վար կախուեցան ու ձեռքերը երեսը ծածկեցին...

Հիմա կը նայի մութ հորիզոնին երկայնքն ի վար, գետի՜նը, չորս կողմը, ամէն դի խաւարն ու արիւնը կը պահեն միայն. մա՜հ, աւե՜ր, կործանում ամէն տեղ. մարդ չի կայ, կենդանի հայու ձայն չի լսիր և ազատածն ալ որ պիտի մնար՝ հրդեհ կուտէ ան ալ. և արցունքի Եփրատը կը բղխի հոգիին, հեկեկանքը իր սիրտը կ'ուռեցնէ։ Կը դողայ, ինքիրմէն կը սարսափի, Թիւրքի կին ըլլալու սարսուռը զինքը կը խեղդէ։ Ա՛լ իր լեզուն չպիտի խօսի, ա՛լ իր աղօթքը չպիտի ընէ, ա՛լ իր անունով չպիտի կանչեն զինքը և հարկ պիտի ըլլայ որ իր անցեալն ալ մոռնայ ու չյիշէ այդ ամէնը, ա՛լ չի ճանչնար զանոնք, ինչպէս չպիտի ճանչնայ սիրելիի գերեզմանները։

Եւ այս անտէր աղջկան նւագը որ միայնակ կը հնչէ գիշերուան մէջ՝ բոլոր կոյսերուն, բոլոր նշանածներուն, բոլոր մայրերուն և որբերուն հանդիսաւոր բողոքն է որ կը հեծեծէ, որոնց շրթունքները այս պահուն լռած են, բայց վաղուան առաւօտը պիտի արթննան և յաւիտեան ողբալէ պիտի չի դադրին, յաւիտեան մխիթարութիւն չպիտի ճանչնան։

Գ.

Աշնան արևուն տրտում աչքը ցայտեցաւ մեռելներու աշխարհին վրայ, խունկ բերեց, կարմիր պատանք բերեց երկինքէն. արհամարհուած մեռելնե՛ր, որոնք գետնէն ծնած, կարծես քարերու որդիներ ըլլան, որովհետև ոչ մէկ կենդանի ստեր կուգայ անոնց շուրջը և ոչ մէկ ոտք մոլորաքայլ կը պտրտի անոնց մէջ՝ գէթ զանազանելու, ճանչնալու իր սիրելին. և մինչ անոնց վրայ ագռաւներն ու իրենց ձագերը կ'ելևէջեն՝ Հռիփսիմէն իր գերութեան ամրոցին մէջ տաճկական հարէմի լաթեր կը հագնի, գլուխը չեթ կը քաշէ և նոր աղօթքով իսլամի պիղծ նամազը օրհներգել կը սովրի։

Տրտում է անիկայ, նահատակ ուրականի մը պէս. որ հողը չէ ընդունած և գերեզմանէն դուրս է նետած, դէմքին վրայ մոխիր մաղած, սգաւոր ու այլագունած։ Սև աչքերուն մէջ համակերպութեան տանջանքն ու լռին չարչարանքը իրարու կը խառնուին և դէմքին երէկի էքնաղ գեղեցկութեան վրայ սգաւոր աշխարհի մը ցաւը կը ծածանի։

Շրջապատուած է տաճիկ կնիկներով, որոնք հոգեկան երջանիկ տրամադրութեամբ կը շնորհաւորեն իր հարստութիւնը և իր բախտաւորութեան տօնը կը կատարեն, իբր թէ հայ աղջիկը հայրենիք ու ծնողք ունեցած չ'ըլլար, իբր թէ զանոնք աւերողները տաճկական ձեռքերը չ'ըլլային։ Մազերուն գեղեցիկ խոպոպներուն տեղ, հիմա երկու քունքերէն զիլիֆներ կախուած են, և իսլամական մկրտութիւնը Ֆաթմա դրած է իր անունը։ Հայ աղջիկը այլասերուած է՝ ոտքերու ոտիցէն մինչև գլխուն մազերը. լեզուն իրենը չէ որ կը խօսի. աղօթքը իրենը չէ՝ որով կը ծնրադրէ, անունը իրենը չէ. օտա՛ր, օտա՛ր ամէնքն ալ ու թշնամին. ո՞վ ըսաւ թէ Քրիստոսի խաչը աւելի ծանր էր, երբ անիկայ շալկած Գողգոթայէն կը մագլցէր

Իր անձին բոլոր այդ արտաքին օտարութեան մէջ սակայն բան մը կը մնար որ յափշտակուած չէր՝ իր հայրերուն կարօտովը լեցուած և անոնց վրէժխնդրութեամբը թունաւորուած հոգին, որ հայրենիքի անխորտակելի դրօշակի մը պէս յաղթական ու արհամարհոտ կը մնար կործանման, թշուառութեան ու ընդհանուր քայքայման մէջ. ուստի հայ աղջիկը՝ իր յիշատակները, իր յոյսը, իր կեանքը ամփոփեց մէկ կէտի վրայ, անարատ խորհրդանշանին տակ ու ծաղկեցուց զանոնք։

Կ'երազէ միշտ իր ծնողական տունը, որ ափ մը մոխիր է հիմա, կ'երազէ անոնք որ չի կան ու միւսները՝ ողջերը, որ այդ մոխիրներուն վրայ երկու դարձիկ բոլորած, խշտիի մը ծածկով կապրին. կարօտը կը մաշեցնէ զինքը, երբ յիշատակները մէկտեղելով կը բերէ աչքին առջև իր ազգականները որ թէև աղքատիկ, սակայն նոյն սեղանին բոլորտիքը կը հաւաքուին իրկունը, Հայրամերով կ'օրհնեն իրենց հացը և կանուխ իրենց աղօթքը կ'ընեն դէպի Արևելք խաչակնքելով ու կը պառկին. ա՜խ, որքան քաղցր էին անոնց չոր խսիրներն ու քանի մը կտոր

փալասները. թշնամուն այդ փափուկ անկողինները կը տանջեն զինք, իր ոսկորները կը ցաւցնեն. ի՞նչպէս ինք հանգիստ պառկի, երբ իր սիրելիները անդին գուցէ տախտակի մը վրայ կը հանգչեցնեն իրենց գլուխը. ի՞նչպէս իր կերած կերակուրները զինքը չի կրծեն, երբ հեռուն իր զրկած արենակիցները իրենց մերկութիւնը ծածկելու համար կուրծքի շապիկ մ՚ալ չեն գտներ։ Ա՛խ, հոգին վիրաւոր է, վշտերու ծովը կը փոթորկի և արցունքը կը հոսի աչքերէն, և սակայն պէտք է որ իր բռնաւոր տէրերը չի տեսնեն զանոնք, որովհետև ատելութեան թուքը կը թափի իր ճակտին. — կեավո՛ւռ, դեռ կը յիշե՞ս անցեալդ։

Դ.

Այո՛, կեավուռն իր հայրենիքը չի կրնար մոռնալ՝ որքան ալ տանջած, հալածական ու վտարանդի ըլլայ. այո՛, անիկա պիտի յիշէ իր սուրբ հողն ու անմոռաց մեռելները, որ հայուն ու հայ ըլլալնուն համար կործանեցան, մեռան։

Եւ ահա տարին չի բոլորած, կը փախի հայ աղջիկը գտնելու իր աւերակներն ու որբացած ազգակիցները, արհամարհելով բռնութեան ամրոցին ոսկի բարձերն ու բեհեզէ զարդարանքը, արհամարհելով բռնաւորի ճոխութիւնն ու հանգիստը, անոնք ամէնքն ալ աղտոտած գըտնելով իր հայրենիքին արիւնովը, իր քոյրերուն արցունքովը. անոնց վրայ պատկերուած տեսնելով իր աշխարհին տանջանքը։ Ո՜հ, կը խեղդուէր, կը խեղդուէր հոն. խմած ջուրը կարմիր կուգար իրեն, կերած հացը՝ մեռելի միս. գայլի որջն ու առատութիւնը՝ իր տիրուն ու իր լակոտներուն. ինք իր ցաւի բաժինը կ՚ուզէ, իր քոյրերուն արցունքը կ՚ուզէ։

Ազատ է հիմա և ազատութիւնը քաղցր է իր մօրը կաթին պէս. ծունկի կուգայ փլատակներուն վրայ, կը համբուրէ աւերակներուն կործանած քարերն ու սևցած հողը և նորէն երկա՛ր, երկա՛ր արցունքներ կը վազեն իր թարթիչներէն, կարօտի, գորովի՛ արցունքները, զղջմա՛ն, քաւութեան արցունքները, որովհետև Զարութեան դևը կորսնցուցած է, սակայն անոր վաւակը կը հալածէ զինքը տակաւին, որովհետև... արգանդին մէջ կըզգայ տաճիկ մանուկը, որ կը խաղայ...

... Գլուխը ետին դարձուց. ձեռքերով աչքերը բռնեց, ինչպէս գերութեան առաջին գիշերը, երբ իր անիծեալ երկունքին մէջ գազանի ձագը աշխարհ կուգար. խեղդեցէ՛ք, խեղդեցէ՛ք զայն կ՚աղաղակէր՝ մոռցած իր երակներէն քաղուող բոլոր ցաւերը, տղաբերքի պրկող տանջանքները, անհուն ատելութեամբ մը համակուած, վրէժխնդրութեան միակ կրակով մը բռնկած.

— Խեղդեցէ՛ք, խեղդեցէ՛ք զայն, թող չտեսնեմ իր երեսները, թող ձայնն ականջիս չի հասնի. վատութեան ծնունդը, օձի զաւակն է, իմ հօրս, իմ եղբայրներուս գլխուն գնովը գնուած է անիկայ. չի տեսնա՞մ գլխիկերը, ձեռքերս անոր չի դպնան... խեղդեցէ՛ք, խեղդեցէ՛ք։

Քաւութիւնը կատարեալ է, իր մեղքերը սրբուած են. սրբուհի մըն է անիկայ, որովհետև նահատակ գերեզմաններուն անթառամ յիշատակը իր վրէժխնդրութեամբ կը նորոգէ։

ԱՍԼԱՆ

ԴԱՐԲՆԻ ԵՐԳԸ

(Շարունակ. — Տես № 6)

„Արի՛ փշրեմ ես քո խոփը, տանք դարբինին կռելու,
Կռենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կռուելու։
Եղբա՛յր հայեր, առէ՛ք խոփը, տուէ՛ք դարբինին կռելու,
Կռել-կոփել սուր ու սուսեր՝ հայաստանը փրկելու՚։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

VII

Նայեցէք, որդիք, ես ծեր եմ, մաշուած.
Ցաւոտ օրերի բազմաթիւ շարքեր
Եկան ու անցան գլխովս յոգնած,
Ճակտիս փռեցին ճերմակ ալիքներ։
Ալիքներիս չափ տեսել եմ սևեր,
Սև երկնքի տակ մեր սև աշխարհում.
Որքան ճակատս ունի կնճիռներ,
Այնքան վէրքեր են ծածկուած իմ սրտում։
Անդուլ պայքարում կռացած մէջքով
Այժմ քայլում եմ դէպի գերեզման,
Եւ նոյն պայքարը շաղախած յուսով
Առէք ձեզ իբր աւանդ սրբազան։
Հին հին օրերից սև բախտի ՝ի՛ճռով
Խոփն ու սուսերը ընկեր են մարդին,
Խոփը մենք առինք իր ծով քրտինքով
Սուրը դուշմանին թողինք մենք բաժին։
Եւ բիւր տանջանքով անդուլ, անդադրում,
Կուրծքը երկրի պատռեցինք ցաւով,
Անգութ թշնամին մեր իսկ կրծքերում
Իր սուրը մխեց արեան ծարաւով։
Քանի քանի դար լուռ աշխատեցինք,
Վաստակը թիւրքին՝ ցաւը մեզ բաժին,
Դատ ու դատաստան երկնքին թողինք,
Երկինքը խուլ մնաց մեր հառաչանքին։
Արտում խոփ չկայ, դաշտերը խոպան,
Համր են կտրել մաճկալ, հօտաղներ,
Եզներ ու արօր թշնամիք տարան,
Մեր շէն երկիրը մեզ աւեր թողին։
Դժոխքն է պատել մեզ չորս բոլորից,
Ողջ փոթորիկում ենք հազար բոցերում,
Զարիքով յղի երկինքը վերից
Մեր ցաւոտ կուրծքը սղմում է սղմում։
Աւերակների մոայլ կոյտերից
Ծխի ոլորտը որպէս լուռ բողոք
Քանի դարեր մեր դժբախտ վաթանից
Ձգում է դէպի երկինքն անողոք։
Ոճիրով հարուստ երկրի վրայ
Երկինքը միշտ հաշտ նայում է վերից,
Եւ տանջուող մարդի ցաւին անզգայ
Ծպտում է արիւնոտ մշուշի միջից։
Երբ որ մեր այս ծով ցաւերի դիմաց
Երկինք ու երկիր հաշտ են, միաբան,
Հազար նախատինք ու նզովք նրանց,
Ում որ շրթունքներ աղօթք մրմնջան։
Նզովք երկնքին, իր ողորմութեան,
Որին միլիոններ զուր աղերսեցին,
Նզովք երկրին և իր գթութեան,
Որին խեղճերը զուր հաւատացին։
Հազար ու հազար նզովք ձեզ որդիք,
Թէ որ գէթ մի օր, մի ժամ, մի վայրկեան,

Հաւատաք մարդուն, կամ նայէք երկինք
Եւ ակնկալէք վերից փրկութեան։
Մեր համբերութիւնն էլ անուն չունի,
Ժայռերն են ճայթում մեր հառաչանքից.
Մեր կեանքը խաւար, մեր ցաւերն անհուն,
Զուր է գութ հայցել անգութ երկնքից։
Զէ՛, էլ չենք ուզում փորել շիրիմներ,
Զարկեցէք, որդիք, քանի ուժ ունիք,
Թո՛ղ որ փշրուին նաև այս բահեր
Բահ էլ պէտք չէ, երբ որ արտ չ՚ունինք։
Զարդեցէք նաև մեր այս մանգաղներ,
Ինչ որ պողվատ է թո՛ղ սուսեր դառնայ,
Աւեր, անապատ, խոպան են դաշտեր,
Փրկութիւնը մեզ լոկ զէնքը կը տայ։
Զարկեցէք, որդիք, պողվատի շերտեր,
Խնամքով զատենք փափուկ երկաթից,
Շեշտակի թափէք ուժգին հարուածներ,
Զէնքերը ձուլենք լոկ կուռ պողվատից։
Զարկեցէք որդիք, պողվատը փափկած
Թող փուի, ձգւի ձեր հարուածներով
Ինչպէս թունաւոր օձը կատաղած
Ձգւում է առաջ օղակ օղակով։
Պողվատից կռած հատու սուսերներ
Քինու վրէժի թոյնի մէջ մխենք,
Հին ու նոր արիւն, արցունք ու ցաւեր,
Սուսերի հատու բերանով սրբենք։

VIII

Լսեցէ՛ք, որդիք, իմ խօսքը վերջին,
Գուցէ և շուտով իմ յոգնած ձեռքից
Ես վար կը ձգեմ մուրճն և ունելին։
Կերթամ հանգչելու իմ բիւր ցաւերից։
Ձեզ եմ կտակում զնդան ու հնոց,
Մուրճեր, ունելիք և սուր կռոցներ,
Նրանց հետ մէկտեղ սրտիս խոց ու բոց,
Հոգիս փոթորոտ հազար ու մի ցաւեր։
Ա՜խ այդ ցաւերը մի մասն են միայն
Դժբախտ վաթանի ծով տառապանքի,
Սրտիս կրակը մի կայծն է միայն
Մեր խեղճ աշխարհը լափող հրդեհի։
Քանի չարիքը այսքան զօր ունի,
Վիշտն ու արցունքը տէր են մեր երկրին,
Քանի դուշմանը գութ, ամօթ չունի,
Ցաւն է մնացել բաժին խեղճերին։
Դուք նուիրական այս գործանոցում
Ձը շինէք երբէք վաստակի գործիք
Եւ ձեր մուրճերի ահեղ ձայներում
Մարտի հրաւէր լսեն թո՛ղ մարդիկ։
Զարդեցէք անվերջ խոփ ու մանգաղներ,
Հազար կտորով փշրեցէք շղթան,
Կռէք կոփեցէք հատու սուսերներ,
Տուէք ամէնքին գործիք փրկութեան։
Էլ այսուհետև աւագ ուրբաթին
Մի զարկէք երբէք սալին ձեր մուրճեր,
Մասիսի այրում փակւած հսկային
Թողէք որ մաշին երկաթ-կապանքներ։
Թողէք որ ըմբոստ վատաբախտ արքան
Դարերի ժանգով պատած շղթաներ
Փշրի ու վերջ տայ իր չար գերութեան
Ահեղ շառաչով դղրդի լեռներ։

Անթիւ մուրճերով հաստացած կապեր
Թողէք որ լիզեն շներն արքային,
Լիզեն ու մաշեն երկաթէ օղեր,
Խստասիրտ մի հօր վերջ տան նզովքին։
Թո՛ղ նա դուրս ժայթքի լերան արգանդից
Որպէս սև զայրոյթ դարերով կուտաւած,
Թո՛ղ որ դուրս սողայ մութ անդունդներից
Որպէս ահարկու վիշապ կատաղած։
Նրա էլ հոգին մեզ պէս դառնացած՝
Հաշիւ ու համար ունի աշխարհից,
Նրա էլ սիրտը վէրքերով պատած՝
Բիւր ցաւեր ունի հին հին դարերից։
Եւ ձեզ հետ մէկտեղ դառնացած արեան
Թող շանթեր թափի դուշմանի գլխին,
Դժբախտ ու խոպան դարձած մեր վաթան
Աւերակներից ծնւի վերստին։
Եւ երբ արիւնոտ մարտը դադարի
Վերջ յաղթանակով սուրբ իրաւունքին
Եւ կուռում ընկած նահատակների
Վառվառ յոյսերը մէկէն պսակւին.
Երբ որ չարաբախտ մեր հայրենիքից
Իսպառ վերանան ցաւերն ու չարիք,
Եւ երբ վերստին երկինքը վերից
Դէպի վար թափի վառ ճառագայթներ.
Երբ արիւնապատ մեր դաշտ ձորերում
Նորէն ցնծութեամբ հնչեն ձեր երգեր,
Մաճկալը պատռի ակօսն իր արտում,
Հովիւն արօտ քշի իր հօտեր։
Ա՜խ այն ժամանակ, այդ սուրբ օրերին
Եկէք ու գտէք շիրիմս կորած,
Շուրջ բոլորեցէ՛ք իմ հողաթմբին,
Ասացէք իմ ոսկորներին մաշւած՝
„Հայր քնիր, հանգիստ, քնիր յաւիտեան,
„Այժմ երջանիկ, ազատ է վաթան“...

ՂԱՐԻԲ

(Վերջ)

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

ՈՍԿԱՆԱՊԱՏԻՑ 50 ռուբլի, ՄԱՆԴԻՑ 25 ռ. 80 կ., եւ 28 ռ. 50 կ., 1901 թ. օգոստոս՝ „Քաջաց“ խմբից (Ազրայէլ, Կայծակ, Զրահաւոր, Ճարտար, Նիզակ, Նպաստ, Առիւծ, Սենեքերիմ Թելլասար, Սերոբինսէր, Ասպար, Ջանփոլատ, Նեփիէ, Զօյ, Ասլան Սաւուղ, Սարիքէկ եւ Սուր 18 ռ., Զրերից 610 ռ. 50 կոպէկ, սեպտեմբեր՝ ԱՅԳԵՍՏԱՇԻ „Մարշիմէն“ խմբից 133 ռուբլի Զրերից՝ Երանդի ծեռքով՝ 105. 80, Պ. Ա. Զ. 5, Ց. Տ. 15, ԱՊԱՌԱԺԻ Ուժից 100, ԱՊԱՌԱԺԻՑ 625, „Վահէ-Հայկազեան խմբ. 10, Անտոն (տարեվճար) 25, Գ. Ա. 20 եւս 12, „Դանիել“ խմբ սեպտ. եւ հոկտ. ամսավճարներ (Նոր Վարդ, Խորակէտ, Լաւանդ Սարսափ, Ճարտար, Նախիանց, Զոհ, Անմեղ, Ասլան, Նիզակ, Կայծակ, Իրամ, Առիւծ, Դաշոյն, Ազրայէլ, Արաքս, Երկաթ եւ Խորկուտ) 18, նոյեմբեր՝ „Զեռնակ“ խմբ. 12 ռուբլի։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ

ԱՄԵՐԻԿԱ. — Վունսօկէաէն՝ Եղ. Պոյաճեան 2 դօլար 25 սենթ Ա. Սրապեան 1 դօլ., Ց. Նահիկեան, Հ. Թէվէքէլեան, Ց. Պոյաճեան 50-ական սենթ, Ց. Մազմանեան 25 սենթ։ Գումար 5 դօլար (25 ֆր. 75 սանթ.)։ Ուայթինսվիլէն՝ Հ. Ց. Դ. կոմիտէն „Դրօշակի“ տասնամեակի առթիւ 5 դօլ. 45 ս. (28 ֆր. 5 սանթ.)։ ՎԷՍՏ ՓՈՒԼՄԸՆԻ կոմիտէն՝ Արամ Նալբանդեան, Մարտիրոս Տէվրէշեան, Մ. Ս. Գազանճեան, Հայրենակից ոմն, ալ. Գ. Տ. մէկմէկ-ական դօլար, Վ. Մամիկոն, Մ. Գ. Արիգ., Խ. Ս Շաքարճեան 5 ական, Աղեքսանդր Մեծիկեան, Ստեփան Զուլ-

Ֆայեան, Գ. Ճ., Յ. Վարդապետեան, Անարոն Աւետիսեան, Ատոմ Մոկացի 2-ական, Ս. Շ. Տ., Յարութիւն. Դերձակ, Հայկ Մօրճիկեան 3-ական, Խուժան 1. 50, Մ. Ճգնաւորեան 1. 50: ՀԱՄԸՆՏԷՆ՝ Վ. Վ., Ա. Զ., Յ. Ա., Մ. Զ., Գ. Մուսոյեան, Յ. Պօղոյեան, Ա. Առաքելեան, Պերճ, Պարոյր, Բագրատունի մէկմէկ-ական դօլար, Պ. Հ., Սուրէն 2-ական, Ս. Դերձակ, Ա. Սողոմոնեան, Խ. Շամշոյեան, Փթթիր Արթինեան, Ռոմ, Մուէրատ, Սմբատ, Մ. Ճ. 50-ական սէնթ, Մ. Պողոսեան, Պ. Շամշոյեան 25-ական սէնթ: ՎՕՃԷՔԷՆ՝ Պաղտասար Մինասեան 1 դօլար: Գումար 63 դօլար 50 սէնթ. (այս գումարէն Արեւմտեան Բիւրօն ստացած է 57 դօլար (293 ֆրանք 30 սանթիմ):

ԱՆԳԼԻԱ. Մաթղստոնէն՝ Նրուզէն 5 շիլլին (6 ֆր.):

ԳԵՐՄԱՆԻԱ. — Բերլինի „Մօլէկիւլ" կոմիտէէն (223 մարք), 277 ֆր. 5 սանթիմ, կրկին (160 մարք) 198 ֆր. 75 սանթիմ:

ՌՈՒՄԱՆԻԱ. Թէքուշ քաղաքէն՝ Թ. Հայպապեան 5 ֆրանք, Ան. Կար. 3, Մխ. Գր. 2, Հազար Սաֆ. 3, Յ. Աւտալ 5 ֆր., Քօնստանծայի Հ. Բ. Ընկ. 10 ֆր., Մարազէշտիէն՝ Յ. Ավ-ի միջոցով՝ 18 ֆր., Նիշէն՝ Պրօխօր 10 ֆրանք:

ԽԱՐԹՈՒՄԷՆ՝ Պ. Դերուն. 25 ֆր., Մ. Տօպտ. 5 ֆր., Տիգ. Ա-եան 10 ֆր. 40 ս., Արտ. Աբ. 12 ֆր. 30 ս.: ԼՕՎԷՋԷՆ՝ Կ. Շ. 20 ֆրանք: ՆԻԿՕՊՕԼԻԷՆ՝ Մար. Ատ. 40 ֆր., օր. Մ., Հ. 53 ֆր. 20 ս., Ժանրէն 3 ֆր., ԹԸՆԷՎԻ „Զանք կոմիտէէն 17 ֆր. 50 ս., Ղ. Աբ. 200 ֆր., օղերու վիճակախաղէն՝ օր. Մ-ի միջոցով 296 ֆր. 50 ս., Ակ-էն 5 ֆր., Թ. քաղաքէն 398 ֆրանք: Ընդհանուր գումար 1950 ֆրանք 80 սանթիմ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կոմիտէն՝

1900 թւին՝ ԼԻՆԻ կոմիտէէն՝ Հայկ 15 դօլար, Արմենակ 2, Յ. Կ. Պ. 15, Արամ 11, Կարդաս 3, Հրաչեայ 5, Պարոյր 8, Հայկակ 10, Զաւէն 6. 50, Մուշեղեան 2. 75, Արտաւազդ 15, Թաթուլ 9, Կամսարական 10, Փառնակ 2. 50, Ղ. Մ. 6. 75, Գ. Խ, 6. 75, Պարգեւ 0. 25, Տիգրան 10, Նժդէհ 2, Բրուտ 2, այլեւայլ աղբիւրներէ 20. 75, Նէէր Զէնքի 9 դօլար:

ՓԻԶՊՈՒՐԳի կոմիտէէն՝ Գ. Կ., Մ. Թ., Ս. Ա. 10-ական դօլար, Մ. Ա. 4, Բ. Թ. 5, Մ. Յ. 4, Նէէրներ 5: Գումար 48 դօլար:

ՔԱՆԿԸՐՏի կոմիտէէն՝ Գ. Դ. 15. 67 դօլար, Կայծքար 22. 40, Ողջ 17. 20, Ասգի 17. 20, Հրատ 17. 85, Ա. Բ. 12. 20: Գումար 102 դօլար 52 սէնթ:

ՀԷՎՐՀԻԼԻ կոմիտէէն՝ Յ. Խ., Յ. Դ., Յ. Լ., Յ. Մ., Յ. Ե.-էն 45 դօլար 50 սէնթ:

ԶԻՔԱԿՕՃԻ կոմիտէէն՝ 1901 թ. Զիքակօյի մէջ Ռ. Թ. Թաշ. 1 դօլար, Ն. Շ. Շէհիր 1, Ս. Զ. Քրիսթօ 3, Մ. Ե. Մարսէլիացի, Մ. Ն. Նահապետ 50-ական սէնթ: Գումար 6 դօլար:

ՎԷՍՏ ՓՈՒԼՄԸՆԷՆ՝ Փ. Ցէբունի 1 դօլար, Մամիկոն 5, Պերճ 0. 50, Մնձուր 1. 50, Քէնտէր 1. 50, Մալխաս 1, Ծսթէր 1, Արամ 0. 50 դօլար: Գումար 11 դօլար:

ՀԱՄԸՆՏԷՆ՝ Խ. Շ., Յ. Պ., Մ. Ճ., Դիրճան, Պապիկ, Յ.-էր մէկմէկ-ական դօլար, Ա. Մ. Հ. Կ. 1. 50: Գումար 7. 50 դօլար

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ. Ներկայ տարւայ „Դրօշակի" թիւ 5 ԼՕՐԷՆՍԻ 30 դօլար 50 սէնթ եւ թիւ 6 ՆԻՇՈՒԷի 21 դօլար 50 սէնթ նուիրատուութիւններու ցուցակները կը վերաբերին Արեւմտեան Բիւրօի գանձումներուն:

ՈՍԿԵՀԱՆԸԻ Կոմիտէն՝

Սեպտեմբեր՝ Զինւոր 20 դահեկան, „Արսլանեան" խումբի անդամէն 20, „Սերոբի" խումբ Խնկող 40, Էտուար (տարեվճար) 108, Գլխարկ 34. 75, Վիթխար եւ Ծ. Սեպու 6. 75-ական, „Արաքս" խմբ. 70, ԱՐՔ-ԱՇ. քղ-էն՝ Պէր, Պէրին եղբայրը, Մամիկոնեան եւ Սրքոյ 20-ական, ԿԱՄԱՐԷՆ՝ Միրզօ Մուխսի 40, Նինուէի Սոսէից 40: Հոկտեմբեր՝ „Աղաւնի" խումբ՝ Աղաւնի, Պաղդ, Լուսին եւ Գնտակ 5-ական, Քար 8, Սեպուհ 60, Եղիկ 95, Պաղտիկ 40, Յակոբ 80, „Սերոբի" խումբ՝ Էտուար, Ղազար եւ Մխիկ 47. 50-ական, „Փուշի" խումբ՝ Փուշի 95, Տասմալիա 95, Սինամ 50, Խանտօ 20, Միհրան 20, Առաքել 10, կրկին „Աղաւնի" խումբ՝ Աղաւնի, Լուսին եւ Դաշոյն 5-ական, „Թաթուլ" խումբ՝ Աշոտ 95, Աղբիւր 47. 50, Թաթուլ 47. 50, Երկաթ 20, Կօլօ 20, „Արաքս" խումբ՝ Արաքս 40, Գրգոյ, Սուգոյ, Սիմոն, Կարապետ եւ Մագիկ 20 ական, Պեսոյ 10, „Գիժ" խումբ՝ Բարսատն, Թաթուլ, Աւիկ եւ Ուռուս 20ական, „Ողորմած" խումբ՝ Ալր, Գապոյ եւ Դահիկ 20-ական, Յահիկ 10, Մատոյ 10, ԱՐՇԱԿԱՌԱՆԷՆ՝ „Անմնազոն", „Երկիւղած" եւ „Ազգասէր" խմբերու եռամսեայ մուտքը 142. 50, Նէէր Ք. Սերոբ Ասլանեանէ 20: Նոյեմբեր՝ „Արարօ" խմբ. 80, Զինւոր 20, Հրացան 54, Ռմն 100, Արեւ 100, Զինւոր (կրկին) 54, Աստղ 20, Կեղծ անուն 20, Վեցհարիւրեան 108, Մահին միջոցաւ անանուն անձէ մը 60 դահեկան: Գումար 2535. 25 դահեկան մէճիտիէն 20-էն հաշուելով:

ՎԻՊԱԿ. — 1901 թ. „Դրօշակի" № 4-ի ՈՍԿԷՀԱՆԸԻ ցանկին մէջ Մահ 42 եւ Սեպուհ 11 դահեկան ըսւած է, պէտք է ըլլայ Մահ 60 եւ Սեպուհ 42 դահեկան:

ԲԱԿԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ՓԻԼԻՊԷԷՆ՝ „Արեւելեան" խմբ. 20 լէվ, 11 լէվ, 5 եւ 5 լէվ, „Արամեան" խմբ. 48. 10, „Արծիւ" 13, Մ. Գ. 5: ՌՈՒՍՃՈՒՔԷՆ՝ „Սերոբ" խմբ. 81. 50, „Վարազ" խմբ. 45. 45, „Տէրօր" խմբ. 119. 75, „Զինավարժ" խմբ. 17: ՍՕՄՈՎԻԹԷՆ՝ 30 լէվ: ՊՈՒՐԿԱԶԷՆ՝ 100 լէվ: ԴԵՏԱՓԷՆ՝ 131. 10 լէվ: ՓԻԼԻՊԷԷՆ՝ Հայկակ 20 լէվ: Գումար 651 լէվ 90 սանթ:

ՐՈՒՄԱՆԻԱ՝

ՔՕՍՏԱՆԶԱՅԻ „Դեւեան" խումբը ստացած է՝ „Զորս գանձ" խմբէն՝ Արտաւազդ 2 ֆրանք 50 սանթիմ, Բաքէն 1 ֆ. 25 ս., Մուշեղ 2 ֆ. 50 ս., Թոշնիկ 1 ֆ. 25 ս., Զարմայր 1 ֆ. 50 ս., „Դեւոնդեան" խմբէն՝ Գեղամ 5 ֆ., Վռամշապուհ, Հայկակ, Թորգոմ, Զաւէն, Վաղարշակ 1 ֆր. 25-ական սանթ., „Ազատդ" խմբէն Ապառաժ 1 ֆ. 25 ս., Քաջքերունի 1 ֆ., Սարի զաւակ, Բագրատունի, Հրդեհ, Ժայռ 1 ֆր. 50-ական սանթիմ, Համակրողէ մը 5 ֆրանք:

„Զորս Գանձ" խումբ՝ Զարմայր 1. 50 ֆրանք, Բագարատ 1. 30, Բաքէն 1. 50, Տիրան, Ապառաժ, Թոշնիկ, Արտաւազդ 1. 25-ական, Ս. Մ. Համակրողէ մը 4, „Աղաւարդ" խումբ՝ Մուրատ 2, Ցոլակ 2, Քաջքերունի 1, Վառօղ 1, Գառնիկ 1. 25, Սարի զաւակ, Բագրատունի, Հրդեհ, Մուրճ, Հրացան 1. 50-ական ֆրանք: Գումար 61 ֆրանք 55 սանթիմ:

ՍՈՒԼԻՆԱՅԻ „Տարօն" խումբ՝ Սրապիոն, Թորգոմ, Ճարպէկ, Զաթօ, Շաւարշ 4-ական ֆրանք, Գասպար 6, Մարգար 5, Մըրջիւն 5, Արծրունի 3, Կարիճ 7, Բայնտուր 6, հետեւեալ բարեսէր ազգայիներէ հանգանակուած՝ Մ. Մուրատեան 5, Թ. Կիրակոսեան, Վ. Յակոբեան, Ն. Առաքելեան, Յ. Զաքարեան, Պ. Կարապետեան, Կ. Աւաքեան, Պ. Բարխոյեան, Թ. Կոստանեան, Մ. Տաշէեան, Տարօնի որդի, Յ. Գրիգորեան, Յ. Սէֆէրեան 2-ական, Յ. Գալուստեան 1, Մ. Համբարձումեան 3, Ա. Խաչատուրեան 5, Ա. Կիրակոսեան 1 ֆրանք: Գումար 91 ֆրանք:

Ա Զ Դ

„Դրօշակի" խմբագրութիւնը, անկանոնութիւններէ խուսափելու համար, իր մասնաւոր ընթերցողներուն դրկած էր յայտարարութիւններ, որոշ հացէներ պահանջելով անոնցմէ։ Այն անձինք, որոնք անպատասխանի թողած են այդ յայտարարութիւնները, 1902 յունուար 1-էն սկսած անոնց հացէներուն այլեւս թերթ պիտի չուղարկուի։

Հ. Յ. Դ. „Զանք" կոմիտէն լոյս է ընծայել՝

1) Բաց նամակների մի սերիա նշանաւոր յեղափոխականների պատկերներով (Աղբիւր-Սերոբ, Արաքս, Աշոտ-Թաթուլ, Բարկէն-Սիւնի, Գուրգէն, Եգիպտացի, Կարս, Միսակեան, Պետոյ, Վազգէն)։ Վաճառւում են տասնեակներով։ Իւրաքանչիւր տասնեակի գինն է մէկ ֆրանք։

2) Աղբիւր-Սերոբի մեծագիր պատկերը։ Վաճառւում է երկու հատը միասին։ Իւրաքանչիւր զոյգի գինն է մէկ ֆրանք։

Դիմել՝ M. Gaspari, Roseraie, 68, Genève.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԳԱՐԻԲ

ԱՅԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՆԱՊԱՐՀԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՐՔ II

(ԱՐՏԱՏՊԱԾ „ԴՐՕՇԱԿ"-ԻՑ)

Գինն է 60 սանտիմ, ճանապարհածախսով 70 սանտիմ։ Դիմել՝

Rédaction du „Droschak", Genève (Suisse)